«CAUCASUS» sociological research center

Oxfam

CNSP

ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՈՐԱԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

«ԿՈՎԿԱՍ» ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Երևան 2012

Հետազոտությունն իրականացվել է «Կովկաս» հասարակագիտական հետազոտությունների կենտրոնի կողմից Oxfam կազմակերպության «Կանանց ձայնը և մասնակցությունը 2012թ. ՀՀ ԱԺ ընտրություններում» ծրագրի շրջանակներում

The Research was conducted by the *Caucasus Sociological Research Center* within the framework of the OXFAM "Women's Voice And Participation In 2012 Parliamentary Elections In Armenia" Project.

Հետազոտական ծրագրի փորձագիտական խմբի ղեկավար՝ Հովհաննես Հովհաննիսյան	**Head of Experts's Group** **Dr. Hovhanness Hovhannissyan**
Հետազոտական ծրագրի կոորդինատոր, փորձագետ՝ Աստղիկ Պետրոսյան	**Project coordinator** **Ms. Astghik Petrisyan**

Տեքստում արտահայտված կարծիքները հեղինակային են և կարող են չհամընկնել Oxfam-ի տեսակետների հետ:

The opinions expressed in the Report are solely of the authors and do not necessarily coincide with those of OXFAM

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ: ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐ

ՄԱՍ I. ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՄՈՏԻՎԱՑԻԱՆ: ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Քաղաքական մասնակցության մոտիվացիայի հիմնախնդիրը
1.2 Ազգային ժողովի պատգամավոր դառնալու մոտիվացիան. գենդերային առանձնահատկություններ

ՄԱՍ II. ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ. DE JURE ԵՎ DE FACTO

2.1.Հիմնախնդրի իրավական հիմքերը միջազգային փաստաթղթերում
2.2. Հայաստանի միջազգային պարտավորությունները կանանց քաղաքական մասնակցության վերաբերյալ
2.3.Ազգային օրենսդրությունը խորհրդարանական ընտրությունների համատեքստում
2.4.Գենդերային քվոտաները Հայաստանում. նախապատմություն, արդյունավետության գնահատում

ՄԱՍ III. ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

3.1 Կանանց քաղաքական մասնակցության երևույթի վերաբերյալ հանրային կարծիքը և այդ բնագավառում փոփոխությունները
3.2 Կանանց քաղաքական մասնակցությանը խոչընդոտող հանգամանքները
3.3 Կանանց նկատմամբ խտրականության առկայությունը
3.4 Ներինստիտուցիոնալ միջավայր և գործոններ
3.5 ՀՀ գենդերային քաղաքականության հայեցակարգի և դրա իրականացման միջոցառումների ծրագրի ազդեցությունը կանանց քաղաքական կարգավիճակի բարելավման վրա

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. Ուղերձ ՀՀ Ազգային ժողովի 2012թ. ընտրություններին մասնակցող քաղաքական կուսակցություններին, դրանց ղեկավարներին և համամասնական ցուցակներում ներգրավված կանանց

Հավելված 2. Ծրագրի փորձագետների կողմից պատրաստված և ԶԼՄ-ներով հեռարձակված տեսահոլովակ գովազդի տեքստը

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ: ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ: ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հիմնախնդրի էությունը

Ժողովրդավարության գլխավոր առավելությունը քաղաքացիներին ընձեռված ազատությունների շնորհիվ հանրության ներուժի հնարավորինս արդյունավետ կիրառումն է խնդիրների լուծման և հասարակական համակարգի զարգացման նպատակով: Ժողովրդավարության մասին ժամանակակից պատկերացումները հանգում են ներկայացուցչական, մասնավորապես՝ գենդերային առումով զուգակշռված և մասնակցային մոդելների կարևորմանն ու կենսագործման անհրաժեշտությանը:

Քաղաքական և քաղաքացիական մասնակցության ընդլայնումը, քաղաքականության մշակման, որոշումների ընդունման մակարդակներում կին և տղամարդ գործիչների զուգակշռված ներկայության ապահովումը անցումային հասարակությունների քաղաքական համակարգի ժողովրդավարացման կարևոր գործոն է:

Թեև Հայաստանում կանայք մասնագիտական, կրթական առումներով ունեն հզոր ներուժ, հետբուհական և բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցողների, ինչպես նաև աշխատունակ բնակչության կեսից ավելին կանայք են[1], այնուհանդերձ, նրանց ներկայությունը քաղաքական որոշումների ընդունման, տեղական ինքնակառավարման, տարածքային և պետական կառավարման կենտրոնական օղակներում, կուսակցությունների ղեկավար մարմիններում հեռու է բավարար լինելուց: Կանանց ներուժը լիարժեքորեն չի օգտագործվում որոշումների կայացման, հասարակական-քաղաքական կառավարման ասպարեզներում: Իրավիճակի բարելավման առումով կարևոր դեր կարող են խաղալ քաղաքական կառավարման տարբեր մակարդակներում պարբերաբար տեղի ունեցող ընտրությունները: Սակայն այստեղ ել կան որոշակի խոչընդոտներ և լուծում պահանջող խնդիրներ: Դրանց հաղթահարումն ու արդյունավետ լուծումը մեծապես պայմանավորված է հետազոտական, իրողությունների ու միտումների վերհանմանն ուղղված վերլուծական ծրագրերի իրականացմամբ, ինչը թույլ կտա խուսափել փորձի ու սխալների և վերջիններիս համար թանկ վճարելու արատավոր պրակտիկայից, իականացվող բարեփոխումները դարձնել ավելի արդյունավետ:

Ներկայացվող ծրագիրն իրականացվել է «Կովկաս» հասարակագիտական հետազոտությունների կենտրոնի փոձագետների կողմից «Օքսֆամ» կազմակերպության աջակցությամբ 2012թ. մարտ-սեպտեմբեր ամիսներին Հայաստանում:

Ծրագրի նպատակը

Ծրագրիը նպատակ ուներ աջակցելու ՀՀ Ազգային ժողովի հինգերորդ գումարման (2012-2017թթ.) կազմում կին պատգամավորների թվի ավելացմանը, մշակել երաշխավորություններ՝ գենդերային քաղաքականության կատարելագործման, կանանց մասնակցության

[1] Հայաստանի կանայք և տղամարդիկ: Վիճակագրական գրքույկ: ՀՀ ԱՎԾ,Երևան, 2012, էջ 70: http://www.armstat.am/file/article/gender_2012.pdf

ցուցանիշների, քաղաքական կառավարման օղակներում նրանց ներկայության ավելացմանը նպաստող մեխանիզմների ձևավորման և հզորացման առումով:

Ծրագրի խնդիրները

Ա) Պատրաստել և համամասնական ընտրակարգով 2012թ. ԱԺ ընտրություններին մասնակցող կուսակցություններին հղել կանանց մասնակցությունը սատարելու և ընտրությունից հետո կին թեկնածուների՝ մանդատներից հրաժարվելու պրակտիկան բացառելու կոչ-ուղերձ:

Բ) Պատրաստել օրենսդիր իշխանության մարմնում կին գործիչների ներկայության կարևորությունը փաստարկող և պատգամավորության կին թեկնածուներին ընտրություններից հետո մանդատներից չհրաժարվելու կոչ բովանդակող տեսահոլովակ-գովազդ և հեռարձակել այն ԶԼՄ-ներով:

Գ) Ուսումնասիրել կենտրոնական իշխանության մարմիններում կին գործիչների ընդգրկման խնդրին առնչվող տեղական և միջազգային իրավական փաստաթղթերը, վեր հանել ձեռբերումներն ու բացթողումներն այդ բնագավառում:

Դ) Հետազոտել պատգամավորության թեկնածուների քաղաքական կարիերայի մոտիվացիոն համակարգը, դրա գենդերային առանձնահատկությունները:

Ե) Ուսումնասիրել սոցիալական միջավայրի առանձնահատկություններն ու ազդեցությունները կանանց քաղաքական կարիերային նպաստելու և խոչընդոտելու տեսանկյուններից:

Զ) Վերհանել քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների հնարավորությունները և ներինստիտուցիոնալ միջավայրի առանձնահատկությունները կանանց քաղաքական կարիերայի առաջխաղացման և կաշկանդման առումներով:

Է) Գենդերային քաղաքականության խնդիրներով զբաղվող տեղական և միջազգային կառույցներին, քաղաքական և հասարակական կազմակերպություններին ներկայացնել եզրակացություններ ու երաշխավորություններ կանանց քաղաքական մասնակցության, քաղաքական կառավարման մարմիններում նրանց ներկայության ավելացման գործողությունների առումով:

Ծրագրի բաղադրիչներն ու գործիքակազմը

Քարոզչական մաս

«Կովկաս» հասարակագիտական հետազոտությունների կենտրոնի փորձագետների կողմից պատրաստվել է 2012թ. ՀՀ ԱԺ ընտրություններին մասնակցող կուսակցություններին հասցեագրված ուղերձ՝ խորհրդարանում կանանց նշանակալից ներկայության կարևորության փաստարկմամբ, կանանց քաղաքական մասնակցությունը խթանելու և ընտրություններից հետո տարբեր պատճառաբանություններով ու առանց դրանց մանդատներից հրաժարվելու

գործելակերպը բացառելու կոչով[2]: Ուղերձը նախընտրական քարոզչության փուլում կուսակցություններին է ներկայացվել «Կովկաս» հասարակագիտական հետազոտությունների կենտրոնի, Oxfam կազմակերպության գործընկեր Քաղաքացիական հասարակության համագործակցության ցանցի անդամ երեք տասնյակ հասարակական կազմակերպությունների անունից: Ուղերձը տեղադրվել էր նաև http://womennet.am կայքում, որտեղ ընտրություններից առաջ և հետո դրան էին միացել բազմաթիվ այլ կազմակերպություններ:

Ծրագիրն իրականացնող փորձագիտական խումբը «Երևակ» ամսագրի («Գ.Թադևոսյան» ՍՊԸ) ստեղծագործական կազմի հետ պատրաստել է նաև օրենսդիր իշխանության մարմնում կին գործիչների ներկայության անհրաժեշտությունը փաստարկող և պատգամավորության կին թեկնածուներին ընտրություններից հետո մանդատներից չհրաժարվելու կոչ բովանդակող տեսահոլովակ-գովազդ[3], որը հեռարձակվել է ԱԺ ընտրություններին նախորդող և հաջորդող շաբաթների ընթացքում «ArmNews» և «Երկիր մեդիա» հեռուստաընկերությունների, «Արձագանք» ռադիոկայանի եթերում:

Հետազոտության սկզբնական արդյունքների միջանկյալ ներկայացման վերլուծության նպատակով կազմակերպվել է ասուլիս-քննարկում լրագրողների և կին քաղաքական գործիչների մասնակցությամբ: Տեղեկատվությունն այդ մասին և որոշ արդյունքներ հրապարակվել են ԶԼՄ-ներում, փորձագիտական խմբի անդամները նախնական արդյունքների ներկայացմամբ հանդես են եկել հեռուստատեսությամբ[4]:

Հետազոտական մաս

Ծրագրի շրջանակներում իրականացվել է ՀՀ քաղաքական գործընթացներում կանանց մասնակցության վերաբերյալ նախկինում իրականացված նշանակալից ուսումնասիրությունների արդյունքների վերլուծություն, պաշտոնական վիճակագրական փաստաթղթերի ու տվյալների հետազոտություն:

Ուսումնասիրվել է ՀՀ օրենսդրական-նորմատիվ դաշտը՝ կանաց քաղաքական մասնակցության, քաղաքական իշխանության մարմիններում կին գործիչների ընդգրկման տեսանկյունից բարենպաստ պայմանների ձևավորման ու թերությունների առումով: Հետազոտվել է տեղական իրավական դաշտի համապատասխանությունը միջազգային հիմնարար փաստաթղթերին ու Հայաստանի կողմից ստանձնած պարտավորություններին:

Ամ պատգամավորության թեկնածուների քաղաքական կարիերայի մոտիվացիոն համակարգի ու դրա գենդերային առանձնահատկությունների վերլուծության, կանանց քաղաքական կարիերայի վրա սոցիալական միջավայրի և դրա տարբեր գործոնների ազդեցության ուսումնասիրության, ինչպես նաև քաղաքական կուսակցությունների ու

---

[2] *Տե՛ս* Հավելված 1:

[3] http://www.youtube.com/watch?v=4xKv1HamWH0 :*Տե՛ս* նաև Հավելված 2:

[4] *Տե՛ս* http://www.youtube.com/watch?v=Od1_HmxrLec&feature=player_embedded , http://womennet.am/wp-content/uploads/2012/10/121a_121.pdf , http://www.youtube.com/watch?v=E0miI6wrXSQ , http://ankakh.com/2012/06/219860/ , http://www.aravot.am/2012/06/19/82937/

հասարակական կազմակերպությունների ներինստիտուցիոնալ հնարավորությունների վերհանման, քաղաքական իշխանության մարմիններում կանաց ներգրավվածության ավելացման մեխանիզմների հետազոտման նպատակով իրականացվել են վեց ֆոկուս խումբ-քննարկումներ և խորին հարցազրույց կին քաղաքական գործիչների հետ:

Ֆոկուս խմբերի քննարկումները կազմակերպվել են ա) կուսակցությունների համամասնական ընտրացուցակներում ընդգրկված կին գործիչների, բ) կուսակցությունների համամասնական ընտրացուցակներում ընդգրկված տղամարդ գործիչների, գ) հասարակական կազմակերպությունների առաջնորդների, դ) երիտասարդ հասարակական ակտիվիստների, ե) ԶԼՄ-ների ներկայացուցիչների, և զ) մարզային գործիչների մասնակցությամբ[5]:

Հետազոտության արդյունքների սույն վերլուծությունը բաղկացած է երեք մասից:

Առաջին մասը նվիրված է Աժ պատգամավորության թեկնածուների քաղաքական կարիերայի մոտիվացիոն համակարգի ու դրա գենդերային առանձնահատկությունների վերլուծությանը:

Երկրորդ մասում քննարկվում են կանաց քաղաքական մասնակցության, քաղաքական իշխանության մարմիններում կին գործիչների ներգրավման տեսանկյունից ՀՀ օրենսդրական-նորմատիվ դաշտի առանձնահատկությունները, տեղական իրավական դաշտի համապատասխանությունը միջազգային հիմնարար փաստաթղթերին ու Հայաստանի կողմից ստանձնած պարտավորություններին:

Երրորդ մասը նվիրված է կանանց քաղաքական կարիերայի վրա սոցիալական միջավայրի և դրա տարբեր գործոնների ազդեցության ուսումնասիրությանը, ինչպես նաև քաղաքական կուսակցությունների ու հասարակական կազմակերպությունների ներինստիտուցիոնալ հնարավորությունների վերհանմանն ու, քաղաքական իշխանության մարմիններում կանաց ներգրավվածության ավելացման մեխանիզմների զարգացման հարցերի վերլուծությանը:

Գրքում տեղ են գտել նաև ***կանանց պատմություններ,*** որոնք կազմվել են հետազոտության ընթացքում արված հարցազրույցների, ինչպես նաև WomenNet.am կայքում զետեղված նյութերի հիման վրա:

Հետազոտական խմբի անդամները շնորհակալություն են հայտնում գործընկեր կազմակերպություններին, ֆոկուս խմբի մասնակիցներին ծրագրի իրականացմանը ցուցաբերած աջակցության, մասնակցության և արժեքավոր դիտարկումների համար:

---

[5] Մարզային գործիչների ֆոկուս խումբը ձևավորվել է նույն սկզբունքով. ընդգրկվել են քաղաքական և հասարակական ակտիվիստներ, երիտասարդ գործիչներ, տեղական ԶԼՄ-ների ներկայացուցիչներ: Ուսումնասիրությունն իրականացվել է Տավուշի մարզում Հույսի կամուրջ հասրական կազմակերպության աջակցությամբ:

ՄԱՍ I. ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՄՈՏԻՎԱՑԻԱՆ: ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Քաղաքական մասնակցության մոտիվացիայի հիմնախնդիրը

Ամեն մի երևույթի էությունը զգալի չափով տրված է դրա դետերմինացիայում: Քաղաքական մասնակցության հետևանքների ու արդյունքների մասին էլ դատողություններ կարելի է անել քաղաքական ընտրություններին մասնակցողների մոտիվացիայի վերլուծության, դրա վերաբերյալ դիտարկումների ու գնահատականների ուսումնասիրության հիման վրա:

Մասնագիտական գրականության մեջ կան հանրային գործունեության ու քաղաքական մասնակցության դրդապատճառների դասակարգման տարբեր մոտեցումներ, տարբեր զգայունակության սանդղակներ:

Դավիդ Մակկլելլանդը «Մարդու մոտիվացիան» աշխատության մեջ առանձնացնում է չորս հիմնական մոտիվացիոն համակարգեր՝ իշխանության, նվաճման կամ ձեռքբերումների, աֆֆիլյացիայի և տհաճություններից խուսափելու[6]: Ամերիկացի հետազոտողն առանձնացնում է մի շարք գործոններ, որոնց դեպքում իշխանությունը ցանկալի է: Դրանք են՝ ուրիշների վարքագիծն ու գործողություններն ուղղորդելու, փոխելու կամ սահմանափակելու ցանկությունը, իր վրա ուրիշների իշխանությունը կամ իր գործերին նրանց միջամտությունը բացառելը, սեփական քաղաքական և այլ բնույթի նպատակներն իրագործելու համար հնարավորությունների ձեռքբերումը: Նվաճումների կամ ձեռքբերումների դրդապատճառը կապված է մրցակցության, խոչընդոտների հաղթահարման և դրա արդյունքում հոգեկան բավարարվածության ու ինքահաստատման զգացումների հետ, որն առավել հատուկ է քաղաքական առաջնորդներին: Աֆֆիլյացիայի (մյուսների հետ լինելու) դրդապատճառը կապված է քաղաքական կազմակերպություններին, շարժումներին անդամակցության հետ, որը ներշնչում է միասնության, փոխօգնության, պաշտպանվածության զգացումներ: Տհաճություններից խուսափելու դրդապատճառը կապված է անհաջողություններից, հասարակության կողմից մերժվածության, անպաշտպանվածության զգացման արդյունքում առաջացող տագնատի վիճակից ազատվելու ձգտման հետ:

Որոշակի ընդհանրություններ կան Դ. Մակկլելանդի, Ջ.Ատկինսոնի[7] տեսակետների և Աբրահամ Մասլոուի՝ պահանջմունքների հիերարխիկ բուրգի միջև: Ըստ Մասլոուի, անձի մոտիվացիայի հիմքը կազմող պահանջմունքներն ունեն աստիճանակարգային բնույթ: Դրանց հիմքում, ստորին մասում ընկած են **ֆիզիոլոգիական**, ապա՝ **անվտանգության** և **սիրո** պահանջմունքները, իսկ վերին հատվածը կազմում են **ինքնահաստատման** և **ինքաիրացման** պահանջմունքները[8]: Ընդորում, այդ պահանջմունքները կարող են փոխակերպվել. ֆիզիոլոգիականը՝ կեսամակարդակի բարձրացման պահանջի, անվտանգության

---

[6] ***Макклелланд Д.*** Мотивация человека. СПб., Питер, 2007, էջ 258-262; 303-315; 372:

[7] Տե՛ս ***Atkinson J. Feather N.,*** A theotry of achievement motivations. N.Y., Wiley. 1966.

[8] Տե՛ս ***Maslow A.,*** Motivations and Pesonality, N.Y, 1954, էջ 45:

պահանջմունքը՝ օրենքի և օրինականության հաստատման ջանքերի, սիրո և աֆֆիլյացիայի պահանջմունքը՝ սոցիալական խմբին, շարժմանը, կուսակցությանը կամ կառույցին անդամակցելու ձգտման, ինքնահաստատման պահանջմունքը՝ սոցիալական կարգավիճակի և հեղինակության բարձրացման, իսկ ինքաիրացման պահանջմունքը՝ սեփական շահերի արտահատման և իրականացման գործողությունների: Փորձը ցույց է տալիս, որ նշված դրդապատճառներն ու գործոններն էապես պայմանավորում են մարդկանց նաև քաղաքական վարքն ու մասնակցության եղանակը[9]:

Թե՛ հասարակական խմբերի, թե՛ անհատների ակտիվության և քաղաքական մասնակցության դրդապատճառների համակարգում տարբեր իրավիճակներում «ծանրության կենտրոնը» կարող է տեղաշարժվել: Ամերիկացի սոցիոլոգ Ռոնալդ Ինգլեհարթի դիտարկմամբ՝ կայուն, տնտեսապես զարգացած երկրներում, որտեղ բավարարված են մարդկանց նյութական պահանջմունքները, մոտիվացիոն համակարգում տեղի է ունենում տեղաշարժ դեպի պոստնյութական արժեքներ: Դա արտահայտվում է պահանջմունքների համակարգի փոփոխություններով. առաջին պլան են գալիս կյանքի որակի, շրջակա միջավայրի պահպանության, որոշումների ընդունման գործընթացներին քաղաքացիների մասնակցության, բյուրոկրատական խոչընդոտների հաղթահարման, կառավարման համակարգի հումանիզացման և այլ որակապես նոր պահանջմունքներ[10]:

Այլ հեղինակներ առանձնացնում են քաղաքական մասնակցության այնպիսի դրդապատճառներ, ինչպիսիք են. ա)քաղաքականության ոլորտի նկատմամբ հետաքրքրությունը, դրա գրավչությունն ու ռոմանտիզացիան, բ)Ճանաչողական դրդապատճառներ, քանզի քաղաքական դիտանկյունը՝ ձևավորելով աշխարհի որոշակի պատկեր՝ հարմար, ընդորում՝ ոչ բոլորին հասու սխեմա է առաջարկում շատ երևույթներ բացատրելու համար, գ)մարդկանց նկատմամբ իշխանություն ունենալու ձգտումը, դ)գաղափարական դրդապատճառներ, ե)շրջապատող իրականության վերափոխման մոտիվը, որը կապված է այդ իրականության անկատարելության և դրա վերափոխման հետևողական ձգտման հետ, զ)ավանդական մոտիվներ, որոնք կապված են սոցիալական տվյալ խմբին, խավին բնորոշ կամ ընտանեկան ավանդույթների հետ, է)մերկանտիլ՝ նյութապաշտական, օգտապաշտական մոտիվներ և այլն[11]:

Որոշ հետազոտողներ էլ նկատում են, որ շատերի համար քաղաքական կառույցներին անդամակցելը պայմանավորված է սեփական նյութական կեցությունը բարելավելու, որոշակի արտոնություններ ձեռք բերելու, սոցիալական կարգավիճակի բարձարացման, կարիերիստական նկրտումներով: Մյուսների համար էլ քաղաքականությամբ զբաղվելը պայմանավորված է, որոշակի խմբի պատկանելով, հոգեբանական լարվածությունը, բարդ

---

[9] Տե՛ս ***Շափաղաթյան Հ.:*** Քաղաքական մասնակցության արդի հիմնախնդիրներ: Երևան, 2007, էջ 54-55:

[10] Տե՛ս ***Инглегард Р.*** Культурный сдвиг в зрелом постиндустриальном обществе. В кн.: Новая постиндустриальная волна на Западе. Под ред. Иноземцева В.Л., М.,1999, էջ 249-260:

Տե՛ս նաև http://iir-mp.narod.ru/books/inozemcev/page_1245.html :

[11] ***Голев С.В.*** Политическая психология. Словарь-справочник. М., 2004.

սոցիալական և քաղաքական իրավիճակներում անորոշության և անօգնականության զգացումը հաղթահարելու և պաշտպանություն գտնելու ձգտումով[12]:

Ի վերջո, ինչպես ցանկացած (մասնավորապես՝ գիտական), գործունեությամբ, այնպես էլ քաղաքականությամբ զբաղվելու դրդապատճառները կարելի է բաժանել երկու խմբի՝ «ներքին» և «արտաքին մոտիվացիաների»: Ներքին մոտիվացիայի բաղադրիչներն են. տվյալ գործի նկատմամբ ունեցած հետաքրքրությունն ու սերը, աշխատանքի արդյունքներով հպարտանալու և հոգեկան բավարարվածություն ստանալու գործոնը, հասարակությանը պիտանի լինելու գիտակցումից ստացած բավականությունը: Արտաքին մոտիվացիան կազմում են հասարակական հեղինակության ձգտումը, փառասիրությունը, նյութական բարեկեցության հասնելու ցանկությունը, կարիերան, արտոնություններ ունենալը և այլն[13]:

Վերջապես, կարելի է քաղաքականությամբ զբաղվելու դրդապատճառները բաժանել ևս երկու խմբի՝ ***հեդոնիստական-էգոիստական*** (անձնական օգուտի, շահի, իշխանությունը շահադիտական նպատակներով գործածելու) և ***ալտրուիստական*** (ընդհանուրի շահերին ծառայելու, սեփական գիտելիքներն ու կարողությունները հասարակական առաջընթացին ծառայեցնելու) ***մղումների:***

Որո՞նք են քաղաքական մասնակցության դրդապատճառները հայաստանյան գործիչների համար:

Վերլուծելով ֆոկուս-խմբերի մասնակիցների գնահատականները, խորին հարցազրույցի արդյունքները՝ Ազգային ժողովի պատգամավոր դառնալու հայաստանյան գործիչների ցանկության հիմքում ընկած մոտվացիոն հիմնական գործոնները կարելի է բաժանել հինգ խմբի: **Առաջին խումբը** կազմում են ***անձնական, շահադիտական (հեդոնիստական) նկրտումները***. անձնական օգուտի, իշխանությունը շահադիտական նպատակներով գործածելու, սեփական բիզնեսն ապահովագրելու, նյութական կեցությունը բարելավելու ցանկությունը: **Երկրորդ խումբը** կազմում են ***երկրին ու հասարակությանը օգտակար լինելու***, ծառացած խնդիրների լուծմանը նպաստելու և սոցիալ- տնտեսական, բարոյահոգեբանական իրավիճակը բարեփոխելու (ալտրուիստական) ***ցանկությունները***: **Երրորդը *ինքնահաստատման***՝ մրցակցության և դժվարությունների հաղթահարման, սոցիալական կարգավիճակի բարձրացման ու դրա հետ կապված՝ հոգեկան բավարարվածություն ձեռքբերելու ***դրդապատճառն է***: **Չորրորդը *ինքնադրսևորման***՝ սեփական փորձի, կարողությունների, մասնագիտական գիտելիքների ու հմտությունների իրացման ***ցանկությունն է***: Վերջապես, **հինգերորդ գործոնը** ԱԺ պատգամավորության թեկնածուների համար ***կուսակցության որոշումն է***:

---

[12] ***Бобков В., Браим И.,*** Политология, 2003, http://uchebnik-besplatno.com/uchebnik-teoriya-politiki/politicheskoe-uchastie-formyi-motivyi.html

[13] Տե՛ս Реферативный сборник. «Твочество и жизненный путь ученого». Творческая личность в науке. М., 1988:

Նշված դրդապատճառներից առաջին երեքն ըստ կարևորության, նույնանման տեսակարար կշռով, կազմում են քաղաքական կարիերայի հիմքում ընկած մոտիվացիոն գործոնների առաջին հորիզոնականը: *Տես Աղյուսակ 1-ը:*

Աղյուսակ 1. Քաղաքական գործիչների՝ Ազգային ժողովի պատգամավոր դառնալու դրդապատճառներն՝ ըստ ֆոկուս խմբերի մասնակիցների գնահատականների

Մոտիվացիոն գործոններ	Տեսակարար կշիռը ֆոկուս խմբերի մասնակիցների գնահատականներում
Անձնական, շահադիտական դրդապատճառներ	27,2%
Երկրին ու հասարակությանն օգտակար լինելու ցանկություն	27,2%
Ինքահաստատման մղումներ	27,2%
Գիտելիքների ու հմտությունների իրացման, ինքնադրսևորման դրդապատճառներ	12,2%
Կուսակցության որոշում	6,2%

ԱՆԱՀԻՏ ԲԱԽՇՅԱՆ.
«Հաշվետու եմ…»

Անահիտ Բախշյանը քաղաքականություն մտավ իր ամուսնու՝ 1999-ի հոկտեմբերի 27-ին ահաբեկչության հետևանքով սպանված ԱԺ նախկին փոխխոսնակ Յուրի Բաշխյանի գործը շարունակելու հստակ դիրքորոշմամբ: «Չի կարելի թույլ տալ նրանց մտածելու , որ իրենք՝ գոռկակհարելով պառլամենտը , հասան իրենց նպատակին»: 2002-ին «Առավոտում» տպագրվեց նրա առաջին հրապարակային ելույթը, իսկ որոշ ժամանակ հետո նա դարձավ «Ժառանգություն» կուսակցության խորհրդի անդամ: Նրա քաղաքական կարիերան վերելք ապրեց 2007-ից, երբ երկար տարիներ դպրոցի տնօրեն աշխատելուց հետո նա ԱԺ պատգամավոր դարձավ:

Այս տարի ընտրություններից անմիջապես առաջ լույս տեսավ Անահիտ Բաշխյանի գիրքը «Հաշվետում եմ» , որը նա նվիրեց ամուսնու 65-ամյակին: «Ժողովրդի առաջ իմ այս հաշվետվությունս նվիրում եմ նրան: Նա միշտ ասում էր՝ «Անահիտը անկախական, սկզբունքային, նորից կրկնում էր՝ անկախական իմ համախոհն է»: Այո, ես Յուրայի համախոհն եմ ու ուրախ եմ դրա համար»…

Ի դեպ, գրքում զետեղված փաստագրության համաձայն 2007-ից առ 2012-ի հունվար ամիսը պատգամավոր Անահիտ Բախշյանի գործունեությունը տեղավորվում է թվային հետևյալ արտահայտումներում. «60 օրենսդրական նախաձեռնություն, 155 ելույթ և հայտարարություն ԱԺ ամբիոնից, 41 հարց և հարցում Կառավարությանը, 1655 հանդիպում ՀՀ քաղաքացիների հետ Երևանում և մարզերում, 329 հոդված և հարցազրույց ԶԼՄ-ներում, 25

այցելություն ոստիկանություն և ազատազրկման վայրեր՝ քաղաքացիների բողոքների հիման վրա»:

Դրա համար էլ , այս տարվա ապրիլին, երբ հրապարակվեց «Ժառանգություն»-«Ազատ դեմոկրատներ» միասնական համամասնական ցուցակը, հանրության մոտ մի շարք հարցեր առաջացան, որոնցից հիմնականը՝ թե այդ ինչպե՞ս եղավ, որ վերջին հինգ տարիներին «Ժառանգության» անունից օրենսդիրում մարտնչող գործիչները անգամ առաջին տասնյակում չեն ընդգրկվել, և այդ թվում , Անահիտ Բախշյանը հայտնվեց ցուցակում 14-րդը: Ինքը Բաշխյանը այն ժամանակ շտապեց հերքել բոլոր խոսակցությունները այս հարցի շուրջ : «Նեղացած լինելու մասին անգամ խոսք լինել չի կարող», - ասաց նա:

Բացի համամասնականից Անահիտ Բաշխյանը այս ընտրություններում մասանկցեց նաև որպես մեծամասնական թեկնածու, առաջադրվելով թիվ 12 ընտրատարածքում, որտեղ 12տոկոկոս ձայն հավաքեց: Նրա խոսքերով իր ընտրազանգվածն իրենց երեխաների կրթությամբ մտահոգ ծնողներն էին, հատկապես մայրերը, որովհետև երեխաների կրթությամբ այսօր ընտանիքում առավելապես անհանգստացած են մայրեր: «Նրանք իմ ընտրազանգվածն է, որովհետև ես գալիս եմ Ազգային ժողով՝ որակյալ կրթության համար պայքարելու» , ասում էր Բախշյանը՝ հավելելով, որ իր ընտրազանգվածը լավ է ճանաչում իրեն, քանի որ հենց այստեղ է գտնվում թիվ 27 դպրոցը, որտեղ նա երկար տարիներ աշխատել է:

Թեպետ պատգամավոր չդարձավ, բայց նա այսօր էլ է պայքարում որակյալ կրթության համար, արդեն Այսօր նա զբաղեցնում է Կրթության ազգային ինստիտուտի փոխտնօրենի պաշտոնը: Ասում է, ես երբեք կրթությանն ընդդիմություն չեմ եղել:

1.2 Ազգային ժողովի պատգամավոր դառնալու մոտիվացիան. գենդերային առանձնահատկություններ

Հետազոտության ընթացքում ֆոկուս խմբերի մասնակիցների առաջակվել էր քննարկել ԱԺ պատգամավոր դառնալու՝ տղամարդ և կին գործիչների մոտիվացիան:

Կուսակցությունների համամասնական ընտրացուցակներում ընդգրկված տղամարդիկ ավելի քննանադատաբար են մոտենում ԱԺ պատգամավոր դառնալու տղամարդ գործիչների մոտիվացիոն համակարգի վերլուծությանը և ավելի «ջենտլմենավարի»՝ կին թեկնածուների դրդապատճառները դիտարկելիս: Կին գործիչները ևս փոքր-ինչ ավելի քննադատաբար են տրամադրված տղամարդկանց քաղաքական պաշտոններ զբաղեցնելու դրդապատճառները քննարկելիս և համեմատաբար ավելի վստահ են կանանց կառուցողական նկրտումների հարցում:

«Գործարարը գնում է Ազգային ժողով՝ պաշտպանելու իր բիզնեսը: Եթե պետության կողմից նա պաշտպանված լինի, համոզված եմ, որ չի գնա: Կինը ԱԺ է գնում իր ամուսնուն թև ու թիկունք լինելու,…թե՛ իր բիզնեսի

պաշտպանության համար, թե՛ հասարակական հարցեր լուծելու համար»:

Տղամարդ քաղաքական գործիչների ֆոկուս խմբի մասնակից

«Տղամարդկանցից ամեն մեկն իր նկրտումներն ունի. մեկը՝ տանիք լինելու համար, մյուսը՝ անձեռնմխելիություն ձեռք բերելու և այլն: Ամեն մեկն ունի իր շահադիտական նպատակը ԱԺ մտնելու համար»:

«Տղամարդիկ հաճախ առաջնորդվում են ոչ թե գաղափարներով, այլ կարիերիստական և այլ մղումներով»:

Տղամարդ քաղաքական գործիչների ֆոկուս խմբի մասնակիցների կարծիքներ

«Ճշմարտություն կա այն դատողության մեջ, որ ԱԺ գնալու տղամարդկանց դրդապատճառը անձեռնմխելիության կարգավիճակի ձեռքբերումն է: Բայց նույնը ասել հայ կնոջ մասին՝ չի կարելի: Կանայք գնում են ԱԺ ինքնադրսևորվելու, կայանալու համար»:

Տղամարդ քաղաքական գործիչների ֆոկուս խմբի մասնակից

«Տղամարդիկ ԱԺ են գնում սեփական ունցվածքը պաշտպանելու, ինքնահաստատման և տնտեսական խնդիրներ լուծելու համար»:

Կին քաղաքական գործիչների ֆոկուս խմբի մասնակից

Թե՛ տղամարդ և թե՛ կին գործիչների՝ Ազգային ժողովում քաղաքական գործունեությամբ զբաղվելու դրդապատճառների մասին առավել սուր են արտահայտվում հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներն ու երիտասարդները:

«Տղամարդկանց ԱԺ պատգամավոր դառնալու հարցում կարևոր դեր են խաղում աշխատավարձը, արտոնությունները, իշխանությունն ու անձեռնմխելիությունը: Շատերն ունեն անձնական շահադիտական նկրտումներ: ... Պատգամավոր կա, որ հազվադեպ է մասնակցել նիստերին, որևէ օրենքի նախագիծ չի ներկայացրել, բայց ճակատը ջարդելով 3-րդ անգամ գնում է ԱԺ: Խնդիր ունի՝ խիստ անձնական»:

ՀԿ-ների ներկայացուցիչների ֆոկուս խմբի կին մասնակից

«Հիմնականում փող դիզելու, իշխանությունից օգտվելու հարցն է»:

«Շատ չնչին տոկոս են կազմում նրանք, ովքեր ԱԺ են գնում որոշ բաներ դեպի լավը փոխելու համար: Մնացածը մտնում են ուղղակի փող դիզելու, իշխանության հասնելու և կառավարող լինելու համար»:

Երիտասարդների ֆոկուս խմբի տղամարդ մասնակիցների կարծիքներ

Նմանատիպ քննադատական գնահատականներ են արձանագրվել նաև կին թեկնածուների առնչությամբ:

«Լավ ճանաչում եմ որոշ կին պատգամավորների, նրանց ունեցած բիզնեսը, անօրինական ճանապարհով ձեռք բերածը, կրիմինալ անցյալը: … Մոտիվացիան նույնն է: Ես հետևում եմ քաղաքական պրոցեսին, որպես քաղաքացի ուզում եմ տեսնել ինչպես է իմ պառլամենտը ձևավորվում: Ցավոք, այսքան ժամանակ ոչ մի կին խելամիտ ելույթ դեռ չի ունեցել, ասել, թե ինքը ինչու է գնում պառլամենտ, թե ինչ սոցիալ-տնտեսական հարցեր է բարձրացնելու այնտեղ, որ այս քսան տարվա ընթացքում չի արվել»:

ՀԿ-ների ներկայացուցիչների ֆոկուս խմբի կին մասնակից

Այնուհանդերձ, օգտապաշտական, շահադիտական նպատակներին զուգահեռ ու հավասարապես արձանագրվել են նաև **կառուցողական, հանրորեն արժեքավոր դրդապատճառներ,** որոնք էական դեր են խաղում հայաստանյան քաղաքական գործիչների՝ ԱԺ պատգամավոր դառնալու ձգտումների համակարգում: Խոսքը վերաբերում է հասարակության առջև ծառացած խնդիրների լուծմանը, սոցիալ-տնտեսական, քաղաքական, բարոյահոգեբանական իրավիճակի բարելավմանը ձեռնամուխ լինելու մղումներին: Այս առումով հասարակական կազմակերպությունների, ուսանող երիտասարդների, ինչպես նաև մարզային գործիչների ներկայացուցիչներն ավելի զուսպ են: Փոխարենն ավելի լավատես են կուսակցությունների համամասնական ընտրացուցակներում ընդգրկված գործիչները: Նրանց դիտարկումներն ու գնահատականներն առավել հուսադրող են: Ընդորում, կանայք կին գործիչների՝ ԱԺ պատգամավոր դառնալու դրդապատճառներն ավելի անկեղծ ու կառուցողական են համարում:

«Ես տարբերություն չէի դնի [կանանց և տղամարդկանց միջև]: ԱԺ-ում հայտնվելու ցանկությունը առաջին հերթին պայմանավորված է քաղաքացիական և քաղաքական դիրքորոշմամբ, այն ցանկությամբ, որպեսզի որոշակի դերակատարություն ունենան երկրի հասարակական-քաղաքական կյանքում»:

Տղամարդ քաղաքական գործիչների ֆոկուս խմբի մասնակից

«Կարծում եմ, որ դրդապատճառների մենյուն նույնն է և՛ կանանց, և՛ տղամարդկանց շրջանում: Մեկ տարբերությամբ՝ կանայք, դեռ որոշ չափով նեոֆիտ լինելով այդ համակարգում, առաջնորդվում են ավելի շատ իդեալիստական, ինքնահաստատման, հոգևոր գործոններով, քան տղամարդիկ»:

Կին քաղաքական գործիչների ֆոկուս խմբի մասնակից

«Մեր նպատակը ԱԺ ամբիոնից ժողովրդի և մեր ձայնը իշխանություններին հասցնելն է»:

Կին քաղաքական գործիչների ֆոկուս խմբի մասնակից

«Ինձ ներգրավել են համամասնականցուցակում՝ հաշվի առնելով իմ քաղաքացիական ակտիվությունը, հաշվի առնելով, որ ես բլոգեր եմ, բարձրացրել եմ և լուծել եմ որոշակի

խնդիրներ: …Ինձ համար այսօր կարևոր է ունենալ լծակներ, որպեսզի պետական մարմինների հետ կարողանամ խոսել որպես հավասարը հավասարի»:

Կին քաղաքական գործիչների ֆոկուս խմբի մասնակից

«Կանայք ձգտում են օգնել տղամարդկանց և լրացնել նրանց աշխատանքում եղած բացթողումները, թերությունները»:

Կին քաղաքական գործիչների ֆոկուս խմբի մասնակից

«Իմ կարծիքով, կանանց մեջ մոտիվացիան շատ ավելի ազնիվ է, շատ ավելի հայրենասիրական է, եթե համեմատես տղամարդկանց հետ»:

ՀԿ-ների ներկայացուցիչների ֆոկուս խմբի կին մասնակից

Անձնական-շահադիտական նկրտումներին և հասարակության առջև ծառացած խնդիրների լուծմանն իրենց ներդրումը բերելու ցանկություններին հասավարաչափ կանորվել է նաև **ինքնահաստատման, մրցակցության և դժվարությունների հաղթահարման ձգտումը**: Ֆոկուս-խմբերի մասնակիցները, առանձնապես կին գործիչներն ու ուսանողները այդ դրդապատճառն առավել բնութագրական են համարում տղամարդկանց համար՝ հաճախ կապելով դա հանրային կարծիքում գոյություն ունեցող կարծրատիպի հետ, թե տղամա՛րդը պետք է լինի իշխողն ու որոշումներ կայացնողը:

«ԱԺ-ում լինելը տղամարդկանց համար ամբիցիաների բավարարման դաշտ է, ինքնադրսևորման, ինքնարտահայտման հնարավորություն է, այդ իմաստով տղամարդիկ ավելի նախաձեռնող են»:

Տղամարդ գործիչների ֆոկուս խմբի մասնակից

«Տղամարդկանց մի այլ խումբ էլ կա, որ ինքնահաստատման խնդիր ունի, տնտեսական խնդիրներ լուծելու ձգտում»:

Կին գործիչների ֆոկուս խմբի մասնակից

«Ինչպես մեր կանանց փոքր տարիքից դաստիարակում են լինել հեզ, հնազանդ, այնպես էլ տղամարդկանց դաստիարակում են, որ պետք է ձգտել իշխանության: Մասնավորապես դրանով է պայմանավորված այսօր ԱԺ-ում տղամարդկանց մեծամասնություն լինելը»:

Կին գործիչների ֆոկուս խմբի մասնակից

«Տղամարդիկ ձգտում են ինքնահաստատման, ձգտում են ավելի բարձր դիրք գրավել կանանց նկատմամբ և թելադրել իրենց խաղի կանոնները: Եվ, բնականաբար, դառնալով ԱԺ պատգամավոր, հիմնականում ուզում են ցույց տալ, որ նրանք ավելի ուժեղ են, գոնե այնտեղ ավելի ուժեղ են, քան կանայք»:

ՀԿ-ների ներկայացուցիչների ֆոկուս-խմբի կին մասնակից

«Իշխանություն ունենալու և իշխելու ցանկությունը տղամարդու բնավորության որոշակի գիծ է: ՀՀ-ում հայերի մեջ ընդունված է, որ տղամարդը ընտանիքի գլուխն է և նա է լիդեր համարվում»:

Երիտասարդների ֆոկուս-խմբի տղամարդ մասնակից

«Իմ կարծիքով էլ պատճառը միայն դա է: Ինչպես ընտանիքում հայրը իշխանության գլուխ է, այնպես էլ պետությունում՝ որպես մեծ ընտանիք ….չգիտեմ, վաղուց եկած ինչ-որ առանձնահատկություն է»:

Երիտասարդների ֆոկուս-խմբի կին մասնակից

Ինքնահաստատման ձգտումը, թեև ավելի պակաս, քան տղամարդկանց դեպքում, այնուհանդերձ, բնորոշ է համարվել նաև կանանց որոշակի խմբի համար, մասնավորապես իրենց՝ կին գործիչների կարծիքով:

«Կանանց մեկ այլ խումբ էլ կարծես փորձում է տղամարդկանց ապացուցել, որ կարող են տղամարդկանց հետ հավասար ունենալ իշխանություն և ավելի ճկուն մտածելակերպ ունենալու շնորհիվ ավելի ճիշտ որոշումներ կայացնել, քան տղամարդիկ»:

Կին գործիչների ֆոկուս խմբի մասնակից

«Նախ, միայն համարձակ կանայք են ձգտում դառնալ ԱԺ պատգամավոր ու պաշտոնյա: Երևի թե ուզում են ապացուցել շրջապատին, հասարակությանը, որ միայն տղամարդիկ չէ, որ կարող են այդ գործը կատարել լավ, արդյունավետ… Մտնում են ԱԺ, որ ապացուցեն տղամարդկանց, որ իրենք էլ կարող են կառավարել»:

Երիտասարդների ֆոկուս-խմբի կին մասնակից

Քաղաքական կարերայի ձգտումը պայմանավորող մոտիվացիոն գործոնների շարքում հաջորդ հորիզոնականը կազմում են ***ինքնադրսևորման*** ՝սեփական փորձի, կարողությունների, մասնագիտական գիտելիքների ու հմտությունների իրացման ***ցանկությունները:*** Այս դրդապատճառը բնութագրական է ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց որոշակի խմբերի: Սակայն, ըստ ֆոկուս-խմբերի մասնակիցների, կին գործիչների շրջանում այս մոտիվացիայի գործառնությունը փոքր-ինչ ավելի զգալի է, քան տղամարդկանց պարագայում:

«Տղամարդիկ շատ ավելի ժամանակ են ունենում ինքնակրթման, կատարելագործման համար և, բնականաբար, իրենց կրթական մակարդակին համապատասխան կարողանում են հանդես գալ Ազգային ժողովում»:

Կին գործիչների ֆոկուս խմբի մասնակից

«Տղամարդիկ ավելի շատ ժամանակ են ունեցել զբաղվելու իրենց կարիերայով իրենց մասնագիտությամբ և իրենք վաստակել են այնտեղ լինելու իրավունքը»:

Կին գործիչների ֆոկուս խմբի մասնակից

«Կանայք փոխվում են և ուզում են կայանալ իրենց աշխատանքում... ԱԺ-ում առաջադրվել են այն կանայք, որ ինչ-որ միտք ունեն ասելու: Շատ հարցեր կան, որ կինը կարող է բարձրացնել, իսկ տղամարդիկ կարող են անտեսել այդ հարցերը: Տղամարդիկ կարող են նոր օրինագիծ ընդունել ու շատ բաներ հաշվի չառնել, իսկ կինը կարող է տարբեր տեսանկյուններից նայել»:

Երիտասարդների ֆոկուս-խմբի կին մասնակից

«Առանց ներքին մղումի, այսինքն՝ պոտենցիալի, ոչ մի կին չի առաջադրվի: Այդ քայլն արվում է հիմնականում բարի նպատակներով, այսինքն այստեղ ոչ այնքան, ինչպես տղամարդկանց դեպքում է՝ բիզնեսի, պաշտոնի ձգտումն է: Իհարկե, դա էլ կա, բայց հիմնականում կանայք երևի ավելի շատ իրենց ունակություններն ավելի լավ, ավելի բարի, արդար նպատակներով են փորձում դրսևորել: Ինձ թվում է, իրենք հասկանում են, որ իրենք կարող են: Եթե չլինի նրանց մոտ այդ ներքին համոզմունքը, երբեք ոչ մի կին իրեն թույլ չի տա դուրս գալ ասպարեզ այդպիսի պայքարում, ուրեմն կա պոտենցիալը, կա համարձակությունը»:

Մարզային գործիչների ֆոկուս-խմբի կին մասնակից

Աֆֆիլյացիայի (մյուսների հետ լինելու) դրդապատճառը, որը տվյալ դեպքում դրսևորվում է հավաքական շահի առաջնայնությամբ, կուսակցության որոշմամբ, առավել թույլ արտահայտվածն է և գրեթե նույնն է ինչպես տղամարդ, այնպես էլ կին գործիչների պարագայում:

«Որոշ տղամարդիկ ուղղակի ենթարկվում են կուսակցության հրահանգին առանց մտածելու՝ իրենք կարող են, թե չեն կարող: Կուսակցությունն ուղարկեց, ուրեմն գնում եմ: Կանայք էլ գերի են իրենց կուսակցություններին»:

ՀԿ-ների ներկայացուցիչների ֆոկուս-խմբի կին մասնակից

Ընդ որում, ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ որոշակի տարբերություններ կան կին և տղամարդ գործիչների քաղաքական կարիերայի ձգտման մոտիվացիաներում: Ըստ ֆոկուս-խմբերի մասնակիցների գնահատականների՝ տղամարդկանց մոտիվացիոն համակարգում առավել ընդգծված են ***շահադիտական-հերոնիստական*** և ***ինքնահաստատման՝*** մրցակցության, դժվարությունների հաղթահարման, սոցիալական կարգավիճակի բարձրացման ձգտումները: Դրանց հաջորդում են ***հասարակությանը օգտակար լինելու***, ծառացած խնդիրների լուծմանը նպաստելու, ապա նաև՝ սեփական փորձի, հնարավորությունների ու ***մասնագիտական գիտելիքների իրացման-ներդրման ցանկությունները:***

ԱԺ պատգամավորության կին թեկնածուների մոտիվացիայում, ըստ ստացված կարծիքների, առաջնայինը ***հասարակությանը օգտակար լինելու***, ծառացած խնդիրների լուծմանը նպաստելու ցանկությունն է: Դրան ըստ կարևորության հաջորդում են

ինքնահաստատման՝ մրցակցության, դժվարությունների հաղթահարման, սոցիալական կարգավիճակի բարձրացման ձգտումները; սեփական փորձի, հնարավորությունների ու ***մասնագիտական գիտելիքների իրացման-ներդրման ցանկությունները;*** նոր միայն՝ ***շահադիտական-հեդոնիստական նկրտումները:*** Թե՛ տղամարդ և թե՛ կին գործիչների մոտիվացիոն համակարգում վերջին հորիզոնականը զբաղեցնում է ***կուսակցության որոշումը:***

Կին թեկնածուների մոտիվացիոն համակարգում կառուցողական տարրերի գերակայության մասին պատկերացումները ֆոկուս խմբերի ներկայացուցիչների պատասխաններում թերևս կարելի է բացատրել ԱԺ ինչպես չորրորդ, այնպես էլ հիգերորդ գումարման պատգամավորների կազմում տեղ զբաղեցրած փոքրաթիվ կին գործիչների՝ ընդհանուր առմամբ դրական իմիջով և գործելակերպով: Նրանց մեջ չկան իրենց մասնագիտական ոլորտում չկայացածներ, կասկածելի կրթությամբ գործիչներ: Ընդհակառակը՝ նրանց մեծամասնությունը իր մասնագիտական ոլորում կայացած, պատշաճ կրթամակարդակ և դրական հեղինակություն ունեցող գործիչներ են:

«Ամբողջ խնդիրը կանոնների մեջ է: Ով գալիս է, պիտի համապատասխանի կամ այս խաղի կանոններին, կամ դուրս մնա՝ անկախ նրանից կին է, թե տղամարդ: Խնդիրը խաղի կանոնները փոխելու մեջ է. ով կհամարձակվի, ով կցանկանա, ով կկարողանա մինչև վերջ փոխել խաղի կանոնները: Որովհետև բոլորը, գալիս են լավ հայտարարություններով՝ հանուն հայրենիքի, լավ ապագայի և սկսում են խաղալ այդ վատ խաղի կանոններով: Ե՛վ լավագույն տղամարդիկ են դուրս մնում քաղաքական դաշտից և՛ լավագույն կանայք: Լուրջ մարդիկ իրենց հեռու են պահում նման խաղերից: Մենք էլ ենք մեզ հեռու պահում, որովհետև չենք ուզում այս խաղի կանոններով խաղալ, մտնել, կեղտոտվել, ցեխոտվել»:

ՀԿ-ների ներկայացուցիչների ֆոկուս-խմբի կին մասնակից

Թեև ֆոկուս խմբերի որոշ մասնակիցների կարծիքով կին և տղամարդ գործիչների մոտիվացիաներում էական տարբերություններ չկան և խոսքը կարող է վերաբերել գործչին ընդհանրապես, ձևավորված մթնոլորտին, արժեհամակարգին, լավ կամ վատ ավանդույթներին ու կարծրատիպերին և դրանք փոխելու ու բարելավելու անհրաժեշտությանը, այնուամենայնիվ ԱԺ պատգամավորության թեկնածուների քաղաքական գործունեության մոտիվացիայի վերլուծությունը վերահաստատում է այն տեսակետը որ օրենսդիր մարմնում կին պատագամավորների թվի ավելացումը կբերի սոցիալական խնդիրների, սոցիալապես անպահով խավերի, երեխաների և կանանց հիմանահարցերի նկատմամբ ուշադրության և հոգածության մակարդակի բարձրացման:

Կուսակցությունների համամասնական ընտրացուցակներում ընդգրկված կին գործիչները իրենց պատգամավորական գործունեությունը պատկերացնում են առավելապես այն հանձնաժողովներում, որոնք զբաղվում են կրթության և երիտասարդության, սոցիալական ապահովության, առողջապահության, մայրության և մանկության, մարդու իրավունքների պաշտպանության, էթիկայի հարցերով, միջազգային հարաբերություններով: Սոցիալապես

անապահով խավերի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության, աղքատության հաղթահարման, սոցիալական արդարության սկզբունքի ամրապնդման բնագավառներում են պատրաստվում ներկայացնել իրենց օրենսդրական նախաձեռնությունները կին գործիչները:

Տղամարդիկ նախընտրում են պետական-իրավական հարցերի, ֆինանսավարկային և բյուջետային հարցերի, տնտեսական, գյուղատնտեսական և բնապահպանական հարցերի հանձնաժողովները և այդ ոլորտներում օրենսդրական նախաձեռնություններով հանդես գալը:

ԶԱՐՈՒՀԻ ՓՈՍՏԱՆՋՅԱՆ.
«Մեր հայրենիքում պակասում է ամենակարևորը՝ արդարությունը»

Մասնագիտությամբ իրավաբան Զարուհի Փոստանջյանը քաղաքականություն մտավ 2007-ին՝ դառնալով ԱԺ պատգամավոր «Ժառանգություն» կուսակցության համամասնական ցուցակով: «Մեր հայրենիքում պակասում է ամենակարևորը՝ արդարությունը», - այսպես է ձևակերպում նա քաղաքական դաշտ մտնելու դրդապատճառը:

Ասում է, երբ 2007-ին մտավ քաղաքականություն, իրեն մի փոքր ծաղրեցին, լուրջ չընդունեցին:

«Երբ առաջին անգամ ստադիոնում թռուցիկներ էինք բաժանում, ինձ Ազգային Ժողովի քաղաքական «էլիտայի» ներկայացուցիչներն ասում էին՝ դու արդեն քաղաքական գործիչ ես, պետք է լուրջ գործերով զբաղվես: Ինչպես կարելի է նման գործելաոճ դրսևորել»:

ԱԺ 2012թ. ընտրություններում նա «Ժառանգության» համամասնական ցուցակի 3-րդ հորիզոնականում էր, առաջադրվել էր նաև մեծամասնական ընտրակարգով թիվ 4 ընտրատարածքում, որտեղ նրա չորս մրցակիցների թվում էր «168 ժամ» թերթի գլխավոր խմբագիր Սաթիկ Սեյրանյանը: Փոստանջյանը երկրորդն էր հաղթողից անմիջապես հետո, հավաքելով այս ընտրատարածքում ձայների 20 տոկոսը և զգալի թվով ձայներ բերելով նաև իր կուսակցությանը:

«Իմ ուղերձը ընտրողներին հետևյալն է՝ այնպես անել, որ մեր սերունդը որևէ կերպ չկասկածի, որ չի ապրելու ՀՀ-ում: Մեր երեխաները պետք է ունենան հայրենիք:

Իմ պայքարը ոչ միայն ուղղակի ԱԺ-ում քաղաքական ամբիոն ունենալու պայքար է, այլ պայքար է մեր հայրենիքի, մեր ազատությունների և մեր երեխաների ապագայի համար: Ես այդ պայքարից հրաժարվելու և հետ գնալու ճանապարհ չունեմ»:

ՄԱՍ II. ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ. DE JURE ԵՎ DE FACTO

2.1 Հիմնախնդրի իրավական հիմքերը միջազգային փաստաթղթերում

Կանանց քաղաքական մասնակցությունը, որն այսօր դիտարկվում է որպես առաջնային խնդիր գենդերային հավասարությանն առնչվող բոլոր միջազգային փաստաթղթերում, բնութագրվում է ընտրական գործընթացներում նրանց ակտիվ ներգրավմամբ, քաղաքական որոշումների ընդունման մակարդակում կանանց ներկայացվածությամբ, պետական քաղաքականության վրա ներազդելու և իշխանական լծակներին տիրապետելու իրական հնարավորություններով:

Նորմատիվ իրավական բազան, որը de jure երաշխավորում է կանանց լիարժեք մասնակցությունը ՀայաստանիՀանրապետության քաղաքական կյանքում, մասնավորապես ընտրական գործընթացներում, ներառում է.

- Հայաստանի կողմից վավերացված՝ գենդերային հավասարությանը վերաբերող միջազգային փաստաթղթերը[14] և դրանց շրջանակներում պետության ստանձնած պարտավորությունները,
- ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ Գենդերային քաղաքականության պետական հայեցակարգը ու ռազմավարական ծրագիրը (2011-2015թթ.), ՀՀ օրենսդրությունը, այդ թվում՝ ՀՀ Քաղաքացիական և Ընտրական օրենսգրքերը:

Ըստ միջազգային փաստաթղթերի՝ իշխանության մեջ կանանց և տղամարդկանց հավասարակշռված ներկայացվածության ապահովումը դիտարկվում է որպես մարդու իրավունքների անբաժանելի մաս, սոցիալական արդարության տարր և ժողովրդավարության առավել արդյունավետ գործառության անհրաժեշտ պայման:

Ընդ որում, կանանց մասնակցությունը ընտրական գործընթացներում համարվում է հասարակության ժողովրդավարացման ճշգրիտ բնութագրիչներից մեկը : Նրանց՝ ընտրելու և ընտրված լինելու իրավունքի իրագործման աստիճանը բնորոշում է մի կողմից՝ կանանց կարգավիճակը, նրանց ազդեցությունը քաղաքական ինստիտուտների ձևավորման և քաղաքական որոշումների ընդունման գործընթացների վրա, մյուս կողմից՝ ժողովրդավարական գործընթացների կայունությունը:

Միջազգային մոտեցումների համաձայն՝ հասարակական-քաղաքական կյանքում գենդերային հավասարության առաջընթացն արտացոլող կարևոր ցուցանիշներից մեկն է համարվում խորհրդարանում կանանց ներկայացվածության տոկոսը: Օրենսդիր իշխանությունում սեռերի հավասարակշիռ ներկայացվածության անհրաժեշտությունը հիմնվում է միջազգային պրակտիկայի օրինակներով արդարացված հետևյալ փաստարկների վրա.

[14]Այդ փաստաթղթերի մասին տե՛ս հաջորդ՝ 2.2. ենթաբաժնում:

- Կանանց ոչ բավարար ներկայացվածությունը կասկածի տակ է դնում խորհրդարանի՝ որպես ներկայացուցչական ժողովրդավարության ինստիտուտի լեգիտիմությունը :
- Պետության քաղաքականության ձևավորումը առանց կանանց ներուժը հաշվի առնելու դիտարկվում է որպես մարդկային ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործում:
- Ցանկացած քաղաքականություն կարիք ունի կանացի տեսլականի, կանացի մոտեցման, իսկ կանայք կարիք ունեն արտահայտելու իրենց շահերը քաղաքականության մեջ:
- Կանանց պատշաճ ներկայությունը խորհրդարանում հանգեցնում է քաղաքական օրակարգի փոփոխությանը. նրանց 30% և ավելի լինելու դեպքում մեծանում է ընդունվող օրենքների սոցիալական ուղղվածությունը, հումանիզացվում է քաղաքականությունը և ձևավորվում է որոշումների կայացման առավել քաղաքակիրթ մշակույթ:
- Պատգամավորի կարիերան հաճախ հանդիսանում է առաջին քայլ դեպի ավելի բարձր պաշտոններ, և այն խորհրդարանական կուսակցությունները, որոնք չեն ապահովում կանանց անհրաժեշտ ներկայացվածությունը օրենսդիր մարմնում, դրանով իսկ խոչընդոտում են նրանց առաջադրումը պետության կամ կառավարության բարձր ղեկավար պաշտոններում:

Տվյալ հետազոտության շրջանակներում անցկացված ֆոկուս-խմբերում հնչեցված կարծիքները հիմնականում համահունչ էին միջազգային մոտեցումներին:

> «Եթե մենք ուշադիր լինենք կին պատգամավորների ելույթներին, ապա կտեսնենք, որ կանայք ավելի շատ խոսում են սոցիալական խնդիրներից: Եթե նրանց ներգրավվածությունը Ազգային ժողովում ավելի մեծ լինի, ապա սոցիալական խնդիրների մի մեծ հատված լուծված կլինի…»
>
> *Տղամարդ գործիչների ֆոկուս խմբի մասնակից*

> «Կինը, գտնվելով քաղաքականության մեջ, զսպող, զգաստացնող դեր է կատարում տղամարդու համար, իսկ դա կարևոր է»:
>
> *Տղամարդ գործիչների ֆոկուս խմբի մասնակից*

> «Կանայք պառլամենտում կայունացնող և կենտրոնամետ դերակատարություն ունեն…»
>
> *Տղամարդ գործիչների ֆոկուս խմբի մասնակցի կարծիքից*

> «Սոցիալական խնդիրների վերաբերյալ կինն ավելի զգայուն է և ցանկացած օրենք կարդալիս առաջինը դա է նրա աչքին ընկնում: Չմոռանանք նաև կանանց այն ֆունկցիան, որ նրանք ընտանիքում են կատարում՝ բյուջետային կառավարման խնդիրները»:
>
> *Տղամարդ գործիչների ֆոկուս խմբի մասնակից*

«Պետք չէ սպասել, որ երկիրը փոխվի, նոր կանայք մտնեն: Կանանց մուտքով է, որ կփոխվի երկիրը: Սա իմ համոզմունքն է: Հայ հասարկության մեջ կա ներուժ, որին մենք անգամ չենք էլ մոտեցել»:

Հատված լրագրողների հետ հանդիպմանը մասնակից կին
Քաղաքական գործչի ելույթից

ԻԶԱԲԵԼԼԱ ԱԲԳԱՐՅԱՆ.
«Իմ քաղաքացիական դիրքորոշումը ձևավորվել է բլոգոսֆերայում»…

Շատերին անծանոթ, սակայն սոցիալական ցանցերում հայտնի Իզաբելլա Աբգարյանը հանրությանը ներկայացավ որպես բլոգեր: Ինչպես ինքն է ասում, «այնպես ստացվեց, որ ես առաջիններից մեկն էի այս ոլորտից, ով պատգամավորության թեկնածու դարձավ»: ֆրանսերենի մասնագետ է, դասախոս, թարգմանիչ, Ֆրանսերեն-հայերեն իրավաբանական բառարանի հեղինակ է: Որևէ հասարակական կազմակերպության անդամ չէ, ոչ էլ կուսակցական, սակայն իր ակտիվ քաղաքացիական դիրքորոշման շնորհիվ համագործակցության հրավեր ստացավ «Ժառանգություն» կուսակցությունից՝ ընդգրկվելով համամասնական ցուցակի 9-րդ տեղում:

Ասում էր , որ այդ տեղը անսպասելի էր իր համար. «Ես գիտեի, որ կլինեմ ցուցակներում, սակայն թե ինչ դիրքերում, իմացա միայն հրապարակման օրը… Շատ ուրախացա, որ նոր հորիզոններ են բացվում կուտակված փորձի և գիտելիքների, նպատակաուղղված պայքարի և այն գաղափարների իրականացման համար, որոնք մինչ այդ մնում էին իմ բլոգում: Այնպիսի զգացողություն էր, որ ես գոռում եմ, բայց իմ ձայնը լսելի չէր: Այժմ ես հնարավորություն կունենամ ձայնս հասարակությանը հասցնել ավելի բարձր հարթակից»:

Նրա մուտքը քաղաքականություն արժանացավ ոչ միանշանակ գնահատականների. առանձին դեպքերում առաջացրեց վրդովմունք և զարմանք, սակայն, ավելի հաճախ՝դրական արձագանքներ ստացավ… Իզաբելլան, ով սոցիալական ցանցերում iza1976 նիկով է հանդես գալիս, իր էջում գրեց. «Իմ անունը նախընտրական ցուցակներում հայտնվելու օրվանից սկսած ես անընդհատ լսում եմ հետևյալ հարցը. «Իսկ ովքե՞ր են բլոգերները», «Երբվանի՞ց են սկսել բլոգերներին ընդգրկել քաղաքականության մեջ», և այլն: Ինձ նույնիսկ առաջարկեցին փոխարինել «անկուսակցական, բլոգեր» ձևակերպումը «ֆրանսերենի թարգմանիչ, դասախոս» ձևակերպմամբ, ինչին ես չհամաձայնեցի, քանի որ կարծում եմ՝ իմ քաղաքացիական դիրքորոշման ձևավորումը տեղի է ունեցել հենց բլոգային տարածքում»:

Կանանց հիմնախնդիրների առումով հատկապես կարևորում է հավասար հնարավորությունների ապահովումը. կարիերայի և ընտանիքի համատեղման խնդիրը:

Հայ կինը ստիպված է լինում ընտրություն կատարել աշխատանքային գործունեության և ընտանիքի միջև: «Առավել ցավալի է, երբ կինը ստիպված է լինում նույնիսկ հրաժարվել մայրանալուց, քանի որ չի կարող կորցնել գումար վաստակելու հնարավորությունը»,- ասում է նա:

2.2 Հայաստանի միջազգային պարտավորությունները կանանց քաղաքական մասնակցության վերաբերյալ

Վավերացնելով գենդերային հավասարությանը վերաբերվող մի շարք միջազգային փաստաթղթեր՝ պետությունները, այդ թվում և Հայաստանը, ստանձնել են որոշակի պարտավորություններ կանանց քաղաքական իրավունքների լիարժեք իրացման վերաբերյալ և իշխանությունում, մասնավորապես օրենսդիր մարմնում կանանց ներկայացվածության որոշակի ցուցանիշներ ապահովելու առումով:

ՄԱԿ-ի՝ ընտրական գործընթացներին անդրադարձ կատարող **փաստաթղթերի** թվում են.

- **Կանանց քաղաքական իրավունքների մասին կոնվենցիան (1954)**[15]**,** որը Հայաստանը վավերացրել է 2007 –ին: Այս կոնվենցիայում առաջին անգամ ամրագրվեց կանանց և տղամարդկանց հավասարությունը ակտիվ և պասիվ ընտրական իրավունքի իրացման գործընթացներում:

- **Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ¬ի կոնվենցիան (1979թ.),** որը Հայաստանը վավերացրել է 1993-ին, պարտավորեցնում է մասնակից պետություններին «ձեռնարկել բոլոր համապատասխան միջոցները՝ վերացնելու համար կանանց նկատմամբ խտրականությունը երկրի քաղաքական ու հասարակական կյանքում: Կանանց համար, տղամարդկանց հետ հավասար պայմաններով, ապահովվում են հետևյալ իրավունքները. ա)քվեարկել բոլոր ընտրություններում և հանրաքվեներում, ընտրվել բոլոր պետական ընտրովի մարմիններում, բ)մասնակցել կառավարության քաղաքականության ձևավորմանն ու իրականացմանը և կառավարման բոլոր մակարդակներով զբաղեցնել պետական պաշտոններ՝ իրականացնելով համապատասխան գործառույթները, գ) մասնակցել երկրի հասարակական ու քաղաքական կյանքին առնչվող հասարակական կազմակերպությունների և միավորումների գործունեությանը»:[16]

Կոնվենցիայի 4-րդ հոդվածով նախատեսվում են ժամանակավոր հատուկ միջոցներ գենդերային անհավասարակշռության հաղթահարման նպատակով: Կոնվենցիան նաև առաջին անգամ բարձրացնում է կանանց առաջընթացը խոչընդոտող և խտրական պրակտիկաների հիմքում ընկած վարքագծային և մշակութային մոդելների փոփոխում (հոդված 5):

2009-ին Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն՝ Հայաստանի կողմից ներկայացված 3-րդ և 4-րդ պարբերական զեկույցների վերաբերյալ եզրափակիչ դիտողություններում մտահոգություն հայտնեց, որ **ՀՀ Ընտրական օրենսգրքով** նախատեսված

[15] http://www.un.am/res/UN%20Treaties/X_1.pdf

[16]Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիա, հոդված 7: http://www.un.am/res/UN%20Treaties/III_8.pdf

15%-անոց քվոտան կանանց համար արդյունավետ չէ՝ առաջարկելով քննարկել այն ավելի քան 20%-ի մակարդակի հասցնելու հնարավորությունը[17]:

- **Պեկինյան հռչակագիրը** (1995)[18] արձանագրեց, որ «կանանց հնարավորությունների ընդլայնումը և հավասարության հիման վրա նրանց համակողմանի մասնակցությունը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, ներառյալ մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին և մուտքը իշխանություն, հիմնարար նշանակություն ունեն հավասարության զարգացման և խաղաղության նպատակներին հասնելու համար»:
- **Պեկինյան գործողությունների ծրագիրը (1995),** ռազմավարական նպատակ ամրագրելով «կանանց մասնակցությունը դիրեկտիվ մարմինների աշխատանքում և որոշումների կայացման գործընթացում», նախանշեց կոնկրետ ու համակարգված միջոցառումներ՝ կանանց քաղաքական մասնակցության հնարավորությունների ընդլայնման ուղղությամբ:

Թեպետ ՄԱԿ-ի սկզբունքներով գենդերային հավասարությունը կառավարման համակարգերում բնորոշվում է սեռերի ներկայացվածության 50/50 բանաձևով, Պեկինյան գործողությունների ծրագրում հիշատակվեց նաև **«կրիտիկական զանգված»** հասկացությունը, որը բնորոշում է որոշումների ընդունման վրա կանանց ներազդելու միմնիմալ հնարավորությունը և ենթադրում է կանանց ներկայացվածության առնվազն 30%, հատկապես խորհրդարանում:

ՄԱԿ-ի՝ Հազարամյակի զարգացման նպատակների (2000) թիվ 3՝ «Օժանդակություն գենդերային հավասարությանը և կանանց հնարավորությունների ընդլայնում» նպատակի շրջանակում Հայաստանի կառավարության կողմից տեղայնացվել են հետևյալ թիրախային ցուցանիշները.[19]

- Կանանց մասնաբաժինը ԱԺ պատգամավորների, նախարարների, փոխնախարարների և մարզպետների ընդհանուր թվաքանակում պետք է մինչև 2015 թ. առնվազն 25% լինի , սակայն 2010-ին այս ցուցանիշը գնահատվում էր միայն 7%: Ընդ որում, արձանագրված աննշան դրական շարժը տեղի է ունեցել 2007թ. ընտրությունների արդյունքում ԱԺ-ում կանանց թվի ավելացման շնորհիվ:
- Կանանց տեսակարար կշիռը համայնքների ղեկավարների ընդհանուր թվի մեջ պետք է մինչև 2015թ. դառնա 10%-ից ավելի, սակայն 2010-ին այս ցուցանիշը գնահատվում էր միայն 2.7%[20]:

---

[17]Կանանցնկատմամբխտրականությանվերացմանկոմիտեիեզրափակիչդիտողություններ, 43-րդ նստաշրջան 2009 թ: **CEDAW/C/ARM/CO/4/Rev.1**

[18] http://www.un.am/res/Gender%20TG%20docs/Beijing-Decl_PLAT_ARM.pdf

[19]«Հազարամյակի զարգացման նպատակների տեղայանացումը և առաջընթացը», Ազգային զեկույց, Հայաստան 2005, էջ 12: http://www.un.am/am/MDGs_in_Armenia

[20]*Տե՛ս* Հայաստան. ՀԶՆ-ների առաջընթացի ազգային զեկույց, 2005-2009:

«ՀՁՆ 3-ի կատարումն անհնարին է առանց կանանց նկատմամբ խտրականության վերացմանն ուղղված միջոցառումների լայն շրջանակի: Ներկա իրավիճակը և աջակից միջավայրը բավարար չեն ՀՁՆ 3-ը մինչև 2015 թ. կատարելու համար»,– այսպիսի եզրակացության են հանգել փորձագետները ՀՁՆ-ների առաջընթացի 2005-2009-ի ազգային զեկույցում:[21]

Եվրոպական կառույցների կողմից ընդունված փաստաթղթերում, որոնց միացել է նաև Հայաստանը որպես ԵՄ անդամ, առանձնահատուկ տեղ է հատկացվում կանանց մասնակցությանը ընտրական գործընթացներում և հատկապես այդ մասնակցությունը ընդլայնելու մեխանիզմներին: Գենդերային անհավասարակշռության հաղթահարման առավել արդյունավետ մեխանիզմ են համարվում ժամանակավոր հատուկ միջոցները, մասնավորապես՝ քվոտաները: Այդ փաստաթղթերի թվում են.

- **ԵՄ նախարարների կոմիտեի երաշխավորությունները**. «Տղամարդկանց և կանանց հավասարությանը համալիր մոտեցումներ» Rec (1998) 14 (Gender mainstreaming) ու «Քաղաքականության մեջ և հասարակական կյանքում որոշումների ընդունմանը կանանց և տղամարդկանց մասնակցության հավասարակշռության մասին» Rec (2003) 3,

- **ԵԽԽՎ-ի հանձնարարականներն ու բանաձևերը.** ԵԽԽՎ-ի հանձնարարական 1676 (2004) ընտրություններում կանանց մասնակցության վերաբերյալ ,ԵԽԽՎ-ի բանաձև 1489(2006) կանանց մասնակցությունը որոշումներ ընդունելու մակարդակում երաշխավորող մեխանիզմների մասին; ԵԽԽՎ-ի բանաձև 1706(2010) «Ընտրական համակարգերը որպես կանանց ներկայացվածությունը քաղաքական կյանքում բարձրացնելու գործիք»; ԵԽԽՎ-ի բանաձև 1898(2012) Քաղաքական կուսակցությունները և կանանց քաղաքական ներկայցվածությունը;

- Եվրոպայի Խորհրդի տեղական և տարածաշրջանային իշխանությունների Կոնգրեսի թիվ 273 (2009) հանձնարարականները:

- Մասնավորապես, Եվրախորհրդի երկրների նախարարների կոմիտեն դեռ 2003 թվականին սահմանեց իշխանության կառույցներում կանանց ու տղամարդկանց ներկայացվածության այսպես կոչված «օպտիմալ շեմը»՝ «40-ը 60-ի» համամասնությամբ: 2006–ին Ստրասբուրգում ԵՄ նախարարների 6-րդ կոնֆերանսում այս շեմը մինչև 2020 թ. ապահովել պարտավորեցնող բանաձևին կողմ է քվեարկել նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը:

2010-ին նույն շեմը ամրագրվեց ԵԽԽՎ-ի «**Ընտրական համակարգերը որպես կանանց ներկայացվածությունը քաղաքական կյանքում բարձրացնելու գործիք**» 1706 (2010)[22] բանաձևում,

[21]Նույն տեղում, էջ 151:

[22]**Increasing women's representation in politics through the electoral system**Resolution 1706 (2010)http://assembly.coe.int/ASP/Doc/XrefViewHTML.asp?FileId=17809&Language=EN

որով Վեհաժողովը կոչ է անում ԵԽ անդամ-պետություններին՝ «համամասնական ընտրական համակարգ ունեցող երկրներում քննարկել օրենսդրական քվոտաների հարցը, նախատեսելով ոչ միայն կին-թեկնածուների բարձր տոկոս (իդեալականը 40%), այլ նաև թեկնածուների ցուցակում առաջնահերթության խստիվ պահպանում (օրինակ՝ կանանց և տղամարդկանց հաջորդականության միջոցով)»: Փաստաթղթով առաջարկվում է նաև արդյունավետ պատժամիջոցների կիրառումը (ցանկալի է ոչ թե դրամական տուգանքների ձևով, այլ թեկնածուների ցուցակների մերժմամբ):

Վեհաժողովը առաջարկեց մեծամասնական և խառը ընտրական համակարգեր ունեցող երկրներում քննարկել մի շարք նորարար սկզբունքների ներդրումը, որոնց համաձայն՝ «յուրաքանչյուր կուսակցություն ընտրատարածքի իր թեկնածուին ընտրում է առնվազն մեկ կին և մեկ տղամարդ թեկնածուներից, կամ սահմանում է պարտադիր գենդերային քվոտաներ կուսակցության ներսում՝ «զուտ կանանց կարճ ցուցակներ» կամ «զուգակցված» (twinned) ընտրատարածքների սկզբունքով»:[23]

- **ԵԱՀԿ 2004թ. գործողությունների ծրագիրը՝**[24] ուղղված գենդերային հավասարության աջակցությանը: ԵԱՀԿ փաստաթղթերի ամփոփ մոտեցումները կանանց ներկայացվածությունը քաղաքականության մեջ ընդլայնելու ուղղությամբ իրենց արտացոլումն են գտել 2010-ին ԵԱՀԿ/ԺՄԻԳ-ի պատվերով անցկացված «**Գենդերային հավասարությունը ընտրական գործընթացներում. վեց քայլանոց գործողությունների ծրագիր»** հետազոտության մեջ, ըստ որի կանանց մասնակցությունը ընտրական գործընթացներում բարձրացնելու համար նախանշված են հետևյալ համալիր գործողությունները[25].

1) Կանանց և տղամարդկանց ընտրելու և ընտրված լինելու սահմանադրական իրավունքների երաշխավորում,
2) ընտրական համակարգի փոփոխությունը համամասնականի գերակայության ուղղությամբ, քանի որ այն բարձրացնում է կանանց ընտրվելու հավանականությունը,
3) կուսակցություններում թեկնածուների հավաքագրման կարգի վերանայում՝ գենդերային քվոտաների ներդրմամբ,
4) ընտրական օրենսդրության մեջ գենդերային քվոտաների ներդրում,
5) ընտրովի պաշտոններին հավակնող կանանց որակավորման բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում, այդ թվում ԶԼՄ-ների միջոցով, գիտելիքների փոխանակման ցանցի, վերապատրաստման ծրագրերի, թրենինգների և կին թեկնածուներին ֆինանսավորելու միջոցով,

[23] *Տե՛ս* նույն տեղում:

[24] http://www.osce.org/mc/23295

[25] Gender Equality in Elected Office: a six-step action plan by Pippa Norris and Mona Lena Krook, Harvard University and Washington University in St Louis; Baseline study for the OSCE/ODIHR *Handbook on Measures for Promoting Women's Political Participation, 2011* http://www.osce.org/odihr/78432 :

6) պատգամավորների աշխատանքային պայմաններին վերաբերվող ներքին խորհրդարանական կանոնների և ընթացակարգերի փոփոխում ի նպաստ փոքր երեխաներ ունեցող կին պատգամավորների, այդ թվում՝ նիստերի ժամանակացույցի, ղեկավար պաշտոնների նշանակման սկզբունքների և մանկական խնամքի հաստատություններին հասանելիության առումով:

ԼԱՐԻՍԱ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ.
«Ոչ թե վիրավորվող, այլ՝ մշտապես աշխատող տեսակ եմ»:

«Ինձ համար քաղաքական գործչի ամենակարևոր գիծն ազնվությունն է ու նվիրվածությունը ժողովրդի շահերին: Ո՛չ գիտելիքը, ո՛չ ունակությունները, այդ ամենը ցանկության դեպքում կտրվի: Դրա համար էլ, ինչքան էլ խոսեն քաղաքականության մեջ պրագմատիզմի մասին, կարծում եմ, որ կասկածելի մեթոդներով սկսած գործը երբեք դրական արդյունքների չի հանգեցնի», – ասում է չորրորդ գումարման ՀՀ Ազգային ժողովում «Ժառանգություն» խմբակցության անդամ, Մարդու իրավունքների առաջին պաշտպան Լարիսա Ալավերդյանը:

Լարիսա Ալավերդյանը, ով, ի զարմանս շատերի, «Ժառանգության» համամասնական ցուցակում 41-րդ տեղում հայտնվեց, ընտրություններից հետո թիմից հեռանալու որոշում կայացրեց:

«Ես հայտնել եմ իմ անհամաձայնությունն այն սկզբունքի հետ, որով ձևավորվել է ցուցակը… Ասել եմ, որ կմնամ թիմի հետ մինչև ընտրությունների ավարտը, իսկ հետո կկողմնորոշվեմ», - նշում է նա, հիշեցնելով, որ ցուցակի 41-րդ տեղը ի սկզբանե ուղերձ է հասարակությանը սկզբունքային հարցերում իր անհամաձայնության մասին:

Մասնավորապես, նա չէր թաքցնում , որ համաձայն չէր «Ազատ դեմոկրատների» հետ այլանսին, քանի որ այն, իր կարծիքով, հաջողություն չի բերի «Ժառանգությանը»::
Հարցին՝ արդյո՞ք վիրավորվածություն չի զգում, որ «Ժառանգության» ակտիվ պատգամավորները, այդ թվում՝ ինքը, չեն լինելու նոր գումարման խորհրդարանում, պատասխանում է. «Ոչ թե վիրավորվող, այլ՝ մշտապես աշխատող տեսակ եմ»:

Անդրադառնալով կանանց մասնակցության խնդրին Ալավերդյանը նկատում է, որ միայն կանանց զանգվածային ակտիվ մուտքը կարող է փոփոխություն բերել քաղաքական դաշտում.

- Չպետք է սպասես, որ երկիրը փոխվի, հավասար պայմաններ լինեն ու կանայք նոր մտնեն ակտիվ քաղաքականության մեջ: Հենց կանանց մուտքով է երկիրը փոխվելու… Ի դեմս կանանց հայ հասարկությունն այնպիսի ներուժ ունի, որին մենք անգամ չենք էլ մոտեցել: Այժմ նա գլխավորում է մարդու իրավունքների պաշտպանության նորաստեղծ ամբիոնը Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանում, ինչպես նաև շարունակում է «Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ-ում իր գործունեությունը:

2.3 Ազգային օրենսդրությունը խորհրդարանական ընտրությունների համատեքստում

Սեռերի իրավահավասարության սկզբունքը՝ սեռի հատկանիշով խտրականության արգելքի ձևակերպմամբ ամրագրված է ՀՀ Սահմանադրությունում և արտացոլված է ազգային

օրենսդրությունում, որը նույնպես չի պարունակում խտրական նորմեր: Սակայն, դե յուրե ամրագրված սահմանադրական իրավունքները չեն բացառում դե ֆակտո խտրական գործելակերպը:

Ընդ որում, Հայաստանում անցկացված սոցիոլոգիական հարցումների տվյալներով, հասարակության կողմից հատկապես նկատելի է խտրականությունը քաղաքական ընտրությունների համակարգում և կուսակցություններում: Ըստ 2011-ին անցկացված հետազոտության՝ այդ փաստը մատնանշում են հարցվածների համապատասխանաբար՝ 23,3 և 13,3 տոկոսը[26]:

Թեև ՀՀ Սահմանադրության մեջ ամրագրված է սեռերի իրավահավասարության սկզբունքը, կանայք Հայաստանում իրականում չափազանց սուղ հնարավորություններ ունեն ներազդելու պետական քաղաքականության ձևավորման վրա:

Ազգային ժողովում և ընդհանրապես որոշումների ընդունման մակարդակում կանանց ներկայացվածության աստիճանով Հայաստանի Հանրապետությունը զգալիորեն հետ է մնում համաշխարհային ցուցանիշներից, ինչը վկայում է կանանց նկատմամբ խտրական գործելակերպի մասին, նրանց քաղաքական իրավունքների ոչ լիարժեք իրացման և կառավարման համակարգում մարդկային ռեսուրսների բացարձակ անարդյունավետ օգտագործման մասին, հատկապես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կանայք կազմում են Հայաստանի բնակչության 52%-ը, իսկ բարձրագույն կրթություն ունեցողների թվում նրանք ևս կեսից ավելին են կազմում[27]:

ՓԱՍ

Ողջ աշխարհում յուրաքանչյուր 5 պատգամավորներից մեկը կին է

Միջխորհրդարանական միության վերջին տվյալներով կանանց ներկայացվածությունը աշխարհի խորհրդարաններում միջինում 20,3 % է կազմում, ինչը նշանակում է, որ ամբողջ աշխարհում առնվազն յուրաքանչյուր 5 պատգամավորներից 1-ը կին է:

Խորհրդարաններում կանանց ներկայացվածության ամենաբարձր ցուցանիշը 42%-ը, Հյուսիսային Եվրոպայի երկրներում է, ԵԱՀԿ երկրների միջին ցուցանիշը 23,4 % է: Կանանց խորհրդարանական մասնակցության ամենացածր տոկոսն արաբական աշխարհի (14,9%) և խաղաղ օվկիանոսյան (12,7%) երկրներում է:

Հայաստանի Ազգային ժողովում կանանց ներկայացվածությունը 10,7% է:

[26]«Հայաստանում հասարակական–քաղաքական մասնակցության գենդերային առանձնահատկությունները», ՄԱԲՀ «Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում ծրագիր: «Կովկաս» հասարակագիտական հետազոտությունների կենտրոն:Երևան, 2011, էջ 67:

[27]*Տե՛ս* Հայաստանի կանայք և տղամարդիկ: Վիճակագրական գրքույկ: Երևան, 2010:

Հայաստանում անցկացված սոցիոլոգիական հարցումները վկայում են ԱԺ-ում կանանց իրական ներկայացվածության և հասարակության սպասումների միջև զգալի անհամապատասխանության մասին: Դեռևս 2008-ին անցկացված հետազոտության[28] արդյունքներով՝ «Ձեր կարծիքով՝ քանի՞ կին պետք է լինի Ազգային ժողովում» հարցին պատասխանելիս՝ հարցվողների 85,5%-ը կողմնորոշվել էր 20%-ից 50% չափաբաժնի օգտին, այսինքն շատ ավելին, քան կանանց ներկայացվածությունը չորրորդ և հինգերորդ գումարումների կազմում:

Ներկայացվող հետազոտության ընթացքում, այսինքն չորս տարի անց անցկացված ֆոկուս-խմբերի մասնակիցները Ազգային ժողովում կանանց ներկայացվածության վերաբերյալ հարցին պատասխանելիս նշել են 20-ից 50 տոկոսի սահմանները:

«Ես կերազեի, որ մրցակցություն լիներ: Ասենք, 50%-ից ավելի լինեին»:
Երիտասարդների ֆոկուս խմբի տղամարդ մասնակից

«50/50:Նկատի ունենք, որ պետք է մենք քաղաքական կյանքից «կին-տղամարդ» հասկացությունը հետզհետե վերացնենք. կա միայն քաղաքացի»
Տղամարդ քաղաքական գործիչների ֆոկուս խմբի մասնակից

Կանանց քաղաքական մասնակցությանընդլայնման վերաբերյալ վերը թվարկած միջազգային փաստաթղթերով պարտավորությունների շրջանակներում Հայաստանի Հանրապետությունը որոշակի քայլեր է ձեռնարկել դրանցում նախանշված մոտեցումների իրականացման, այդ թվում՝ գենդերային քվոտայի ներդրման ուղղությամբ:

Մասնավորապես, 2010 թվականին ՀՀ կառավարության կողմից հաստատված **Գենդերային քաղաքականության հայեցակարգը** ամրագրեց օրենսդիր և գործադիր իշխանությունների մարմինների որոշումների ընդունման մակարդակներում կանանց և տղամարդկանց հավասարակշռված ներկայացվածության ապահովման հիմնախնդիրը, որի շրջանակներում նախատեսվում է. «…Հայաստանի պարտավորություններին համապատասխան՝ ՀՀ Ընտրական օրենսգրքում փոփոխություն մտցնել՝ սահմանելով 30% գենդերային քվոտա, հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի հանձնարարականը 40% և 60% հարաբերակցությամբ «զուգակշռման շեմի» մասին և միջոցներ ձեռնարկել գործադիր իշխանության բոլոր մակարդակների բարձրագույն և գլխավոր պաշտոններում կանանց ներկայացվածության փուլային ընդլայնման համար:… Այն կուսակցությունների խթանում, որոնք իրենց գործունեությամբ հիմնվում են ներկուսակցական ժողովրդավարության հետևողական զարգացման վրա, ղեկավար մարմինները ձևավորելիս հաշվի են առնում

[28]«Որոշումների կայացման մակարդակում կանանց ոչ բավարար ներկայացվածության ուսումնասիրություն»: Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ: Երևան, 2008:

գենդերային գործոնը և նպաստում են կանանց առաջխաղացմանը ընտրական ցուցակներում գենդերային հավասարակշռված ներկայացվածություն ապահովելու միջոցով»:[29]

ՀՀ գենդերային քաղաքականության ռազմավարական ծրագրով (2011-2015 թ.թ.) նույնպես նախատեսված է ժամանակավոր հատուկ միջոցների ընդլայնում. «Ձեռնարկել հատուկ միջոցներ ապահովելու կանանց 30% ներկայացվածությունն օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների որոշումների ընդունման մակարդակներում»:[30]

Սակայն 2012թ.-ին անցկացված խորհրդարանական ընտրությունների արդյունքները վկայում են, որ Գենդերային քաղաքականության հայեցակարգի իրագործման ուղղությամբ մինչ այժմ ձեռնարկված միջացառումները ցանկալի արդյունք դեռ չեն տվել, իրավիճակը դեռևս համարժեք չէ ժողովրդավարական չափանիշներին և ժամանակի մարտահրավերներին:

Փորձագիտական գնահատականներով՝ «դե յուրե» ամրագրված հավասար իրավունքների և «դե ֆակտո» այդ իրավունքների իրացման հետ կապված հիմնական խնդիրը՝ կանանց համար հավասար հնարավորությունների բացակայությունն է: Ազգային օրենսդրության այս բացը կոչված է լրացնել **« Հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին օրենքը»,** որի նախագիծը այժմ գտնվում է Ազգային ժողովի երկրորդ ընթերցման ռեժիմում: Օրինագիծը ներառված է Հայաստանի՝ Եվրամիության հետ «Արևելյան գործընկերության» ծրագրով նախատեսված միջոցառումների ցանկում և պետք է է ընդունված լիներ դեռ երկու տարի առաջ:

Մինչ օրենքի ընդունումը ընտրական գործընթացներում կանանց մասնակցությունը որոշ չափով երաշխավորվում է ընտրական օրենսդրությամբ: Մասնավորապես, **Ընտրական օրենսգրքում** ամրագրված են ընտրական գործընթացներում գենդերային զգայունությունն ապահովող մի շարք դրույթներ, որոնք վերաբերում են ընտրական հանձնաժողովների կազմավորմանը և կուսակցությունների նախընտրական ցուցակների ձևավորմանը: Դրանք հետևյալներն են:

Ա) Ընտրական օրենսգրքի 40 և 41 հոդվածներով սահմանված գենդերային քվոտան՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կազմավորելու հարցում:

«Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահի և ՀայաստանիՀանրապետության փաստաբանների պալատի նախագահի առաջարկությամբ նշանակված երկուական անդամները պետք է լինեն տարբեր սեռի ներկայացուցիչներ»:[31]

«Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կազմում յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է պակաս լինի երկուսից»:[32]

---

[29] ՀՀ գենդերային քաղաքականության հայեցակարգ (2010): http://www.gov.am/u_files/file/kananc-xorh/Gender-hayecakarg.pdf

[30] ՀՀ գենդերային քաղաքականության ռազմավարական ծրագիր (2011-2015 թթ.): http://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2011/05/kar60_1.pdf

[31] ՀՀԸՕ, հոդված 40:

ՓԱՍՏ

Կանայք ընտրական հանձնաժողովներում

ՀՀ կենտրոնական ընտրականհանձնաժողովի անդամները 7-ն են, որոնցից 3-ը կանայք են, նրանցից մեկը՝ ԿՀՀ նախագահի տեղակալ է:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժովներում կանանց ներկայացվածությունը կազմում է մոտ 30.5%, ընդ որում Երևանում՝ 34% , իսկ մարզերում՝ 28%:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների ղեկավար կազմում կանայք ընդամենը 16 % են կազմում, նրանցից 3-ը նախագահ են, 8-ը՝ տեղակալ և 9-ը՝ քարտուղար: 41 ընտրատարածքային ընտրական հանձնաժովներից 25-ում կանայք ղեկավարպաշտոններում ընդգրկված չեն:

Կանանց ներկայցվածությունը զգալի տոկոս է կազմում հատկապես տեղամասային ընտրական հանձնաժողովներում, որտեղ 44%-ը կանայք են: Դրա հետ մեկտեղ, տեղամասային 1982 հանձնաժողովներից 32%-ի դեպքում նախագահը կին է:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆ.

«Գենդերային քվոտան մայիսի 6-ին կայացած խորհրդարանական ընտրությունների կազմակերպման հարցում պահպանված է եղել: Կանանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունները նույնպես շատ ակտիվ են եղել ընտրատեղամասերում, տեղական դիտորդների մի ստվար զանգվածը կանայք էին, ինչը ողջունելի է»[33]:

Ռադմիլա Շեկիրինսկա,

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելության ղեկավար

Բ) ԸՕ-ի Հոդված 108-ով սահմանված գենդերային քվոտան Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուներ առաջադրման ժամանակ.

«Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով կուսակցության, կուսակցությունների դաշինքի և դաշինքում ընդգրկված կուսակցություններից յուրաքանչյուրի ընտրականցուցակի 2-րդ համարից սկսած ցանկացած ամբողջ թվով հնգյակներում (2-6, 2-11, 2-16 և այդպես շարունակ՝ մինչև ցուցակ իավարտը) յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 80 տոկոսը»…[34]

---

[32]ՀՀԸՕ, հոդված 41:

[33]Ռադմիլա Շեկիրինսկա, WomenNet.am –ին հարցազրույց, 7.05. 2012 / http://womennet.am/

[34]ՀՀԸՕ, հոդված 108:

ՓԱՍ

Տոկոսային հարաբերությամբ կանանց ներկայացվածությունը նոր խորհրդարանում 10,7% է, ինչը նշանակում է, որ կիրառելով 20 տոկոսանոց գենդերային քվոտան և ներկայացնելով հանրությանը համամասնական ցուցակներում միջինում 22,9% կին, կուսակցությունները «դեֆակտո» որպես արդյունք խորհրդարանում ընդգրկեցին արձանագրվածից կիսով չափ ավելի քիչ կանանց:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

Անցյալ ընտրությունների ժամանակ 15 տոկոսանոց քվոտայի պարագայում համամասնական ընտրակարգով խորհրդարան էր անցել 12 կին (9.1%), իսկ մեծամասնականով՝ոչ մեկը: Եթե հաշվի առնենք, որ հինգերորդ գումարման 14 կանանցից երկուսը անցել են մեծամասնական ընտրակարգով, ապա ստացվում է, որ ընդհանուր առմամբ ոչ մի առաջընթաց չի արձանագրվել: Ավելին՝ արժեզրկվել է Ընտրական օրենսգրքում ամրագրված 20 տոկոսանոց քվոտան, որի կիրառմամբ հասարակությունը կարող էր ակնկալել Ազգային ժողովում կանանց առնվազն նույնքան ներկայացվածություն:[35]

Աղյուսակ 2

Կանանց ներկայացվածությունը կուսակցությունների համամասնական ցուցակներում և **ԱԺ խմբակցությունների կազմում**[36]

Կուսակցություն	Կանանց տոկոսը ընտրական ցուցակում	Կանանց թիվը առաջին հնգյակում	Կանանց թիվը առաջին տասնյակում	ԱԺ անցած կանանց թիվը	Պատգամավորների թիվը խմբակցության կազմում	Կանանց տոկոսը ԱԺ խմբակցության կազմում
«ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ»	21,8%	0	1	2	37	5,4%
«ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ»	24,6%	1	2	1	5	20%

[35]WomenNet.am-ի վերլուծությունից, http://womennet.am/

[36]Աղբյուրը՝ԿԸՀ տվյալներ www.elections.am; Ազգայինժողովիկայք www.parliament.am

«ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ» ԴԱՇԻՆՔ	20,3 %	0	1	1	7	14 %
ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ	31,7%	0	1	0	5	0
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	24,4%	1	4	-	-	-
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	21,1%	0	1	-	-	-
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	21,3%	0	1	7+2*	69	13%
«ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀԱՅԵՐ»	37,9%	1	3	-	-	-
«ՕՐԻՆԱՑ ԵՐԿԻՐ»	20,2 %	1	1	1	6	16%
ԸՆԴԱՄԵՆԸ	22,9%	4	17	14	131	10,7%

*ՀՀԿ խբակցության կազմում համամասնականով ընտրվել է 7 կին, մեծամասնականով՝ 2 կին:

Վերլուծելով ընտրությունների արդյունքները, ըստ որոնց՝ նորընտիր խորհրդարանում կանայք կազմում են ընդամենը 10,7%, պետք է փաստել, որ կանանց աջակցելու նպատակով օրենքով նախատեսված քվոտան ըստ էության չաշխատեց:

Իսկ թե «ինչու՞ չաշխատեց», հարցը առնվազն երեք հիմնական բացատրություն է ենթադրում.

1) Կանայք չափազանց քիչ էին ներկայացված առաջին հնգյակում[37] (մինիմալ անցողիկ շեմին համապատասխանող մանդատների թիվը) և նույնիսկ՝ առաջին տասնյակում: Զգալի հետընթաց էր արձանագրվել նախորդ ընտրությունների համեմատ՝ 2007-ին

[37]Կուսակցությունների մեծամասնությունը յուրովի է մեկնաբանել ԸՕ-ում ամրագրված պահանջը՝ *«2-րդ համարից սկսած ցանկացած ամբողջ թվով հնգյակներում. 2-6, 2-11, 2-16 և այդպես շարունակ»*, ընդգրկելով կանանց, հատկապես 6-րդտեղից :

կուսակցական ցուցակներում կանանց ընդգրկումը առաջին հնգյակում՝ 4 անգամ ավելի էր, իսկ առաջին տասնյակում – ավելի քան 2 անգամ: Դրա հետ մեկտեղ, և նախորդ և 2012-ի ընտրություններում այն կուսակցությունները, որոնք առավելագույնս էին ներկայացրել կանանց անցողիկ տեղերում խորհրդարան չանցան:

2) Քվոտան չեզոքացվեց ներկուսակցական նկատառումներով արված տեղափոխումների ու ինքնաբացարկների արդյունքում, որոնք շատ դեպքերում հանրության համար անհասկանալի մնացին:

3) Կուսակցությունները, օրենքի պահանջը ապահովելու նպատակով, ընդգրկեցին իրենց ցուցակներում կանանց, որոնք իրականում դեռևս պատրաստ չէին աշխատելու օրենսդիր մարմնում, հետեաբար դիմեցին ինքնաբացարկի՝ զիջելով իրենց տեղը ուրիշներին:

«Քվոտաները ձևական բնույթ են կրում, դրանք պետք է հաստատագրվեն ինչ-որ մեխանիզմներով, որ կուսակցությունները ոչ թե ձևի համար ինչ-որ կանանց ընդգրկեն ու դուրս թողնեն, այլ իրոք իրենք էլ աճեցնեն, հնարավորություն տան դրսևորվելու և այդ կանանց ընդգրկեն: Չվախենան կանանցից…»

Մարզային գործիչների ֆոկուս-խմբի կին մասնակից

«Կարծում ենք, բարոյական չէ, երբ կանայք թույլ են տալիս օգտագործել իրենց անունը և, համաձայնվելով ընդգրկվել կուսակցությունների ընտրացուցակներում, այնուհետև հեշտությամբ հրաժարվում են, դրանով իսկ կանխարգելելով այլ՝ սկզբունքային կանանց մուտքը օրենսդիր մարմին»:[38]

Զեմմա Հասրաթյան
հատված WomenNet.am-ին տված հարցազրույցից

«Մեր կուսակցություններից մի թեկնածուի գիտեմ, որ հիմա առաջադրված է համամասնական ցուցակում, իրեն հետ խոսել եմ, ասում է, որ ընտրվելու դեպքում հրաժարվելու է մանդատից, մեկնաբանեց, որ դեռևս պատրաստ չէ»

Կին գործիչների ֆոկուս խմբի մասնակից

Հայաստանում կիրառված քվոտայի ոչ բավարար արդյունավետությունն առավել նկատելի է դառնում Միջխորհրդարանական միության և «ՄԱԿ-կանայք» կառույցի համատեղ «Կանայք քաղաքականության մեջ 2012» զեկույցում հիշատակվող փաստի համատեքստում: Պարզվում է, որ 59 երկրներից, որտեղ 2011թ. ընտրություններ են անցկացվել, 17-ում գործել են

[38]Զեմմա Հասրաթյան, հատված WomenNet.am-ին տված հարցազրույցից:

գենդերային քվոտաներ:Այդ երկրներում կանայք զբաղեցրել են խորհրդարանական տեղերի 27%-ը, քվոտաներ չկիրառող երկրների խորհրդարաններում նրանք ընդամենը 16% են:[39]

Բացի այդ, Հայաստանի կուսակցությունները կանանց ներկայացվածության առումով հասարակությունից շատ ավելի պահպանողական են գտնվել, քան հանրապետության քաղաքացիները, որոնք հասարակական կարծիքի բոլոր ուսումնասիրություններով, ներառյալ տվյալ հետազոտությունը, պատրաստ են տեսնելու ավելի շատ կանանց խորհրդարանում, քան առաջադրել են կուսակցություններն իրենց ցուցակներում:

Մեծամասնական պայքարի առանձնահատկությունները

ՀՀ ԱԺ 2012թ. ընտրություններում մեծամասնական ընտրակարգով պայքարի մեջ մտած 139 թեկնածուից 11-ը կին էր (մոտ 8 %): Հատկանշական է, որ առաջադրված կանանցից 7-ն անկուսակցական էին: Ըստ զբաղվածության՝ երեքը քաղաքական լրագրողներ էին, երեքը՝ պատգամավոր, երկուսը՝ կրթության բնագավառի աշխատող:

Որպես դրական միտումներ կարելի է որակել հետևյալ փաստերը.

- Մեծամասնականով առաջադրված կանանց թիվը կրկնապատկվել էր նախորդ ընտրությունների համեմատ:
- Մինչ ընտրությունները ինքնաբացարկի դիմած մոտ 41 թեկնածուների թվում միայն մեկ կին կար:
- Լրագրողների և փորձագետների գնահատականներով, հատկապես այս ընտրակարգով կանանց քարոզարշավն էր նկատելի հանրության համար, այն դեպքում, երբ խոշոր կուսակցությունների քարոզարշավներին ցուցակներում ընդգրկված կանայք այս անգամ գրեթե անհաղորդ էին մնացել, քանի որ քարոզչությունը հիմնականում տարվում էր առաջին դեմքերի մակարդակով:
- Եվ վերջապես, այս ընտրակարգով առաջադրված կանանց մեծամասնությունը հավաքեց իրենց ընտրատարածքներում բավական թվով ձայներ, շատերը երկրորդ տեղում էին՝ հաղթանակ տարած թեկնածուից անմիջապես հետո:

Դրա հետ մեկտեղ խնդրահարույց էր այն փաստը, որ թվով 41 ընտրատարածքներից 32-ը չունեին կին թեկնածու (78 տոկոս), ինչը ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության գնահատմամբ.

ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

[39] ***Michelle Bachelet.*** Highlights Quotas to Accelerate Women's Political Participation. http://www.unwomen.org/2012/03/michelle-bachelet-highlights-quotas-to-accelerate-womens-political-participation/

«...Թեպետ կանայք թեկնածու լինելու իրավունք ունեն, այս իրավունքի իրականացումը և թեկնածու լինելու հնարավորությունը խնդրահարույց է: Ավելին, մեծամասնական 12 կին թեկնածուներից 3-ը նախընտրական քարոզչության ծախսեր չեն հայտարարագրել, ինչը կասկածի տակ է դնում նրանց թեկնածությունների իսկությունը»:[40]

Անհանգստացնող էր նաև այն հանգամանքը, որ երեք ընտրատարածքներում առաջադրվել էին երկուական կին, ու նրանք ակնհայտորեն խանգարեցին միմյանց: Հաջողության հասան միայն 2 կին՝ թիվ 17 ընտրատարածքում Արտաշատի թիվ 1 դպրոցի տնօրեն Կարինե Պողոսյանը և թիվ 40-ում «Ինտերնեյշնլ Մասիս տաբակ» ՍՊԸ գործադիր տնօրեն Մարինե Մարաբյանը, երկուսն էլ ՀՀԿ-ի առաջադրմամբ:

ԼԻԼԻԹ ԳԱԼՍՏՅԱՆ.
«Իմ ընտրողն այն քաղաքացին է, ով չի ուզում Հայաստանից գնալ»

Բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՅԴ անդամ, նախորդ գումարման ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյանի համար, ով հինգ տարի Ազգային ժողովում ու նաև հասարակական կյանքի այլ հարթություններում պայքարում է անարդարության դեմ:

«Միշտ եմ եղել քաղաքականության մեջ, քանի որ շատ վաղ եմ հասկացել, որ քաղաքականությունը տեսակ ու սկզբունք է, նաև՝ աշխարհայացք, որը դրդում է ինչ-որ բան փոխել: Իմ պատկերացրած Հայաստանը, քաղաքացու ու քաղաքական գործչի իմ իրացումը ես տեսել եմ Դաշնակցության մեջ և Դաշնակցությանն անդամագրվել եմ այն ժամանակ, երբ կուսակցությունը Հայաստանում հրապարակային գործունեություն, ըստ էության, չէր ծավալում»:

Դրա հետ մեկտեղ խոստվանում է, որ ներկա պայմաններում կնոջը շատ դժվար է հաստատվել մեծ քաղաքականության մեջ: Ասում է՝ Հայաստանը դեռ լուրջ ճանապարհ ունի անցնելու՝ նախնառաջ կոտրելու կարծրատիպերը հավասարության մասին, մանավանդ այն տեսանկյունից, որ կնոջ ներկայությունը քաղաքականության մեջ ոչ միայն թույլատրելի է, այլև անհրաժեշտ:

Հանրությանը ներկայանալով ՀՅԴ համամասնական ցուցակի 20-րդ տեղում (փաստ, որ այդպես էլ անհասկանալի մնաց հանրության համար) , նա այնուամենայնիվ շատ ակտիվ մասնակցեց կուսակցության նախընտրական քարոզարշավին.

«Իմ ընտրողն այն քաղաքացին է, ով չի ուզում Հայաստանից գնալ, ով չի պատրաստվում թույլ տալ, որ իր վրա թքեն 5 հազար դրամի դիմաց և այն քաղաքացին, որ իր երեխաների համար արժանապատիվ կյանք է ուզում...»:

Հետընտրական շրջանում, գնահատելով կանանց հնարավորությունները ասաց. «Ցավոք սրտի, Հայաստանը լրջագույնս հեռու է ժողովրդավարական երկրի մոդելից: Այս պայմաններում խոսել կանանց՝ խորհրդարանում հայտնվելու առողջ մեխանիզմների, քարոզարշավի, ներկուսակցական դեմոկրատիայի մասին, անկեղծ ասած, հեքիաթի շարքից է ... Նորմալ կինը, քաղաքակիրթ, ժողովրդավարական չափանիշներով մտածող կինը ունակ չէ խաղալ առկա քաղաքական խաղի կանոններով...»

Արդյո՞ք վերաբերում է ասվածը իր իսկ կուսակցությանը , - այս հարցին պատասխանելիս Գալստյանը պնդում է, որ իր կուսակցությունում ներքին դեմոկրատիա կա և կուսակցական

[40]ԵԱՀԿ/ԺՄԻԳ դիտորդական առաքելության վերջնական զեկույց, 26 հունիսի, 2012: http://www.osce.org/odihr/91643

ցուցակում կանայք 32 տոկոս էին կազմում: Դրա հետ մեկտեղ նա չի կարող դրական գնահատել այն փաստը, որ այս ընտրությունների արդյունքներով Դաշնակցությունը իր պատմության մեջ առաջին անգամ խորհրդարան մտավ առանց կին պատգամավորների: «Բայց ունենք այն ինչ ունենք», - ասում է նախկին պատգամավորը…

Այսօր Լիլիթ Գալստյանը ակտիվ քաղաքական և հասարակական գործունեություն է ծավալում. հանդես է գալիս մասամուլում սուր հրապարակային հոդվածներով, սիրիահայերին հումանիտար օգնություն ցուցաբերող «Օգնիր եղբորդ» նախաձեռնության կազմակերպիչներից է:

2.4. Գենդերային քվոտաները Հայաստանում. նախապատմություն, արդյունավետության գնահատում

Ընտրական օրենսգրքում գենդերային քվոտայի ամրագրման գործընթացներում ակտիվ դերակատարում են ունեցել կանանց ՀԿ-ները, որոնց առաջարկները, սակայն, ընդունվել են միայն մասամբ:

Առաջարկների հիմքում ընկած էին սոցիոլոգիական հարցումների արդյունքները, միջազգային փաստաթղթերով Հայաստանի ստանձնած պարտավորությունները, ՀՀ կառավարության կողմից 2010-ին ընդունված ՀՀ գենդերային քաղաքականության հայեցակարգը, որի մշակմանը ժամանակին նույնպես մասնակցել են կանանց ՀԿ-ների փորձագետները:

ՓԱՍ

Ըստ «Հայաստանում հասարակական–քաղաքական մասնակցության գենդերային առանձնահատկությունները» սոցիոլոգիական հետազոտության՝ հարցվածների 57%-ը դրական է վերաբերվում քաղաքական և պետական կառավարման տարբեր օղակներում քվոտայի սահմանման գաղափարին, ընդ որում, գենդերային քվոտայի օպտիմալ չափը օրենսդիր մարմնում ըստ պատասխանների՝ միջինում 36.5% պետք է լինի[41]:

Ինչպես ցույց են տալիս ֆոկուս խմբերի և քաղաքական գործիչների հետ անհատական զրույցները, քվոտաների նկատմամբ ոչ միանշանակ վերաբերմունքը հիմնականում կապված է խորհրդային անցյալում նրանց կիրառման հետ, ինպես նաև մի շարք հակափաստարկների, որոնց շարքում հիմնականն այն է, որ դրանց կիրառմամբ, թերևս, խախտվում են ժողովրդավարության սկզբունքները:

[41]«Հայաստանում հասարակական–քաղաքական մասնակցության գենդերային առանձնահատկությունները»: ՄԱԲՀ «Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում ծրագիր: «Կովկաս» հասարակագիտական հետազոտությունների կենտրոն:Երևան, 2011, էջ 17:

«Ես ինքս շատ դեմ եմ քվոտաների, ընդհանրապես՝ ցանկացած խտրականության, բայց եկել եմ այն եզրակացության, որ քվոտայի մեխանիզմը ստիպում է կուսակցություններին, որ նրանք ավելի լուրջ մտածեն իրենց ներքին ժողովրդավարության մասին»:

Կին գործիչների ֆոկուս խմբի մասնակից

Քվոտայի կիրառման անհրաժեշտությունը առավել ակնհայտ է դառնում խորհրդարանում կանանց ներկայացվածության դինամիկան՝ անկախությունից ի վեր տեղի ունեցած բոլոր ընտրությունների արդյունքներով դիտարկելուց: Այն լուրջ անհանգստություն է հարուցում, քանի որ հանրապետության օրենսդիր մարմնում կայուն ձևով պահպանվում են կանանց ներկայացվածության չափազանց ցածր ցուցանիշները:

Այսպես, Ազգային ժողովի կազմում՝ 1995-ից(առաջին գումարում) մինչեւ 2012 (հինգերորդ գումարում) կանանց թիվն աճել է 6.3%-ից 10,7%, այսինքն՝ ընդամենը 4,4%ով:

ՓԱՍ

1975թ. դրությամբ աշխարհի խորհրդարաններում կանանց թիվը միջինում չէր գերազանցում 11%-ը, իսկ 2012-ին այն կազմում է 20%: Ըստ եվրոպական փորձագետների՝ եթե այդ թիվը շարունակի աճել այսպիսի տեմպերով (տարեկան 0,20%) և չուղեկցվի ոչ մի հատուկ միջոցառումներով, ապա կին-խորհրդարանականները կարող են հասնել տղամարդկանց հետ հավասարության միայն մեկուկես դար հետո[42]:

Գրեթե նույն տեմպերով, այն էլ՝ քվոտաների շնորհիվ, աճել է վերջին քսան տարվա ընթացքում կանանց ներկայացվածությունը ՀՀ Ազգային ժողովում: Դա նշանակում է, որ աշխարհի խորհրդարաններում այսօր արդեն առկա կանանց 20 տոկոսանոց ներկայացվածությանը Հայաստանը լավագույն դեպքում կհասնի 50 տարի հետո:

2011-ին՝ ՀՀ Ընտրական օրենսգրքի վերջին փոփոխությունների քննարկման փուլում կանանց 23 ՀԿ-ների կողմից Ազգային ժողով ներկայացված առաջարկներով նախատեսվում էր կուսակցական ցուցակներում սեռերի 70/30 հարաբերակցության պահպանումը, ընդո ռում՝ կին ու տղամարդ թեկնածուների հաջորդականությունը չպետք է գերազանցեր երեք տեղը:

Գրեթե նույն բովանդակությամբ առաջարկություն էր ներկայացվել ՀՀ Հանրային խորհրդի Քաղաքացիական հասարակության կայացման հարցերի, Ժողովրդագրության և գենդերային հարցերի հանձնաժողովների կողմից: Կանանց ՀԿ-ների մեկ այլ խմբի՝ Կին լիդերների ֆորումի առաջարկներում արծարծված էր 50/50 հարաբերակցությունը:

[42]Gender Equality in Elected Office: a six-step action plan by Pippa Norris and Mona Lena Krook, Harvard University and Washington University in St Louis; Baseline study for the OSCE/ODIHR *Handbook on Measures for Promoting Women's Political Participation, 2011* http://www.osce.org/odihr/78432

Արդյունքում Ազգային ժողովն ընդունեց քվոտայի գենդերային կոռեկտ ձևակերպումը, սակայն քվոտան ըստ էության սահմանվեց ընդամենը 20 տոկոսի չափով: Մերժվեց թեկնածուների հաջորդականության սկզբունքը, ինչպես նաև առաջարկը պահպանել քվոտան՝ կանանց մանդատից հրաժարվելու դեպքում, այսինքն այն դրույթը, որ «մանդատից հրաժարվող կին թեկնածուին պետքէփոխարինի կուսակցության ընտրական ցուցակում հաջորդ կինը»:

Թե՛ չորրորդ, թե՛ հինգերորդ գումարման խորհրդարանական ընտրությունների վերլուծությունը, մասնավորապես մեծ թվով կանանց մանդատից հրաժարվելու արձանագրված պրակտիկան, ցույց է տալիս, որ ՀԿ-ների կողմից ժամանակին արված առաջարկներն ընդունելու դեպքում հնարավոր կլիներ կանխել կանանց մասնակցությունը խոչընդոտող այդ տեխնոլոգիան:

Անարձագանք մնաց նաև սույն ծրագրի շրջանակներում հասարակական սեկտորի կողմից արդեն ընտրությունների ընթացքում իրականացված նախաձեռնությունը՝ կուսակցություններին հասցեագրված ուղերձի և սոցիալական գովազդի տեսքով, որն ուղղված էր կանխելու մանդատներից կանանց հնարավոր հրաժարումները:

«Երեկ լսեցի մի բան, չեմ հիշում որտեղից լսեցի, կամ ռադիոյով, կամ հեռուստատեսությամբ, այսպիսի խոսք էր գնում. «… սիրելի կանայք մի հրաժարվեք Ձեր մանդատներից….»: Շատ հետաքրքիր էր: Սկսեցի մտածել… գիտեմ, որ կուսակցություններում քվոտա մտցվեց, որ ցուցակներում յուրաքանչյուր 5-րդը կին պետք է լինի, և հիմա պարզվում է, որ շատ հնարավոր է՝ դա լինի զուտ ձևականորեն ներկայացված… Կարծում եմ, այն կանայք, ում ստիպում են հրաժարվել մանդատից, պետք է լիարժեք աջակցություն ստանան կանանց հասարակական կազմակերպություններից: Այս դեպքում կերևա և՛ կանանց ՀԿ-ների իրական դեմքը, թե որքանով են ուժեղ, և՛ որքանով են նրանց նպատակներն արդար, և՛ ցույց կտա համախմբվածությունը»:

Երիտասարդ գործիչների ֆոկուս խմբի տղամարդ մասնակից

«Ինձ թվում է՝ տվյալ պահին չեն հրաժարվի: Նախորդ փորձը կա, և հասարակությունն ու հասարակական կազմակերպությունները այնքան են այս հարցը բարձրացրել, որ, ենթադրենք, այդպիսի իրավիճակ ստեղծվի՝ ես կամաչեմ հրաժարվել…Մենք կարող ենք նաև պայքարել…»

Կին գործիչների ֆոկուս խմբի մասնակից

Հաշվի առնելով դեռևս 2007թ. ՀՀ ԱԺ ընտրություններից հետո տարբեր պատճառաբանություններով մանդատներից հրաժարվելու՝ մի շարք կին գործիչների անցանկալի գործելակերպը՝ «Կովկաս» հասարակագիտական հետազոտությունների կենտրոնը և Քաղաքացիական հասարակության համագործակցության ցանցը (ՔՀՀՑ, որը միավորում է «ՕՔՍՖԱՄ»-ի գործընկեր 30 ՀԿ-ներ) ընտրություններից առաջ ստորագրահավաք էին կազմակերպել և ուղերձով դիմել կուսակցություններին, դրանց

ղեկավարներին և համամասնական ցուցակներում ներգրավված կանանց՝ փորձելով կանխել ցուցակներում ընդգրկված կանանց հրաժարումը մանդատներից: *(Հավելված 1):*

Բացի այդ, ընտրություններից անմիջապես առաջ և հետո պատրաստվել և հեռարձակվել են նաև հեռուստատեսային և ռադիո կոչ-զովազդներ[43] ուղղված կին թեկնածուներին: Այնուամենայնիվ, ընտրություններից հետո երկու տասնյակից ավելի կին գործիչներ տարբեր պատճառաբանություններով հրաժարվեցին իրենց մանդատներից:

ՓԱՍՏ

Ըստ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալների՝ ընտրություններից հետո ինքնաբացարկի դիմում է ներկայացրել պատգամավորության 102 թեկնածու, նրանցից 26- ը կանայք են, այդ թվում 14 կին՝ ՀՀԿ-ի ցուցակից և 10 կին՝ ԲՀԿ-ի ցուցակից հրաժարվել են մտնել խորհրդարան՝ զիջելով իրենց տեղը տղամարդկանց:

Հարցեր է առաջացնում ոչ այնքան կանանց ինքնաբացարկների թիվը, չնայած այն մոտ երեք անգամ աճել է անցյալ ընտրությունների համեմատ, այլ այն փաստը, որ հրաժարականը ներկայացնելու գործընթացը թափանցիկ չէ. դրդապատճառները ոչ միայն չեն բարձրաձայնվում, և չեն ենթարկվում տրամաբանական բացատրության:

Այսպես, եթե տղմարդկանց կողմից ներկայացված ինքնաբացարկների ճնշող մասը պայմանավորված է տվյալ թեկնածուի՝ գործադիր իշխանությունում բարձր պաշտոն զբաղեցնելու հանգամանքով, ապա կանանց դեպքում նման հիմնավորումը կիրառելի է ինքնաբացարկների միայն մեկ երրորդի դեպքում, մնացած դեպքերում պատճառները մնում են անհայտ լայն հասարակության համար:

Ինքնաբացարկների գործելաոճը բացասական է գնահատվել ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության կողմից: Փորձագետների դիտարկմամբ՝ ինքնաբացարկների «մեծ թիվը մտահոգիչ է ընտրողների ընտրությունը հարգելու տեսանկյունից»:[44]

Բավական թվով կանանց ինքնաբացարկներ գրանցվեցին նաև նախընտրական շրջանում: Այս դեպքում, սակայն, պատճառները հայտնի դարձան հանրությանը: Դրդապատճառները բարձրաձայնեցին հենց ինքնաբացարկի դիմած կանայք: Դրանք հիմնականում կապված էին կուսակցական ցուցակների ձևավորման ժամանակ ժողովրդավարական սկզբունքների խախտման հետ և կանանց՝ ցուցակի ոչ անցողիկ տեղերում ընդգրկելու հետ, ինչը շատ դեպքերում չէր համապատասխանում այդ կանանց երկարամյա գործունեությանը տվյալ կուսակցություններում:

«Ճիշտ է, կնոջ ներկայացվածությունը կուսակցություններում ապահովեցին՝ յուրաքանչյուր 6-րդը, բայց բացարձակապես գաղտնիք չի, թե ինչ սկզբունքներով Հայաստանում ձևավորվեցին

[43] http://www.youtube.com/watch?v=4xKv1HamWH0

[44] ԵԱՀԿ/ԺՄԻԳդիտորդականառաքելությանվերջնական զեկույց, 26-ը հունիսի, 2012թ.http://www.osce.org/odihr/91643

կուսակցական ընտրացուցակները… Խոսել Հայաստանի Հանրապետության կուսակցական համակարգում ներքին դեմոկրատիայի մասին, անփառունակ իրականության շարքից է: Նորմալ կինը, քաղաքակիրթ, ժողովրդավարական չափանիշներով մտածող կինը մրցունակ չի այս խաղի կանոններում»:

Հատված լրագրողների հետ հանդիպմանը մասնակից կին քաղաքական գործչի ելույթից

Հետազոտության ընթացքում անցկացված բոլոր ֆոկուս խմբերի մասնակիցները անընդունելի որակեցին ինքնաբացարկի դիմելու գործելակերպը, անկախ այն հանգամանքից՝ դա արվում է կուսակցության խնդրանքով կամ թելադրանքով, թե տվյալ կնոջ ինքնուրույն որոշմամբ:

«Եթե դու որպես քաղաքական ուժ, հայտարարել ես և ռեյտինգավորել ես այս մարդկանց այս ցուցակում, հետո՝ post factum սկսում ես փոփոխություններ անել, ոչ միայն տհաճ է, այլև անթույլատրելի է»:

Կին քաղաքական գործիչների ֆոկուս խմբի մասնակից

«Կարծում եմ, եթե քվոտան գենդերային բալանսը ապահովելու առումով մեկ քայլ առաջ էր, ապա մանդատից հրաժարվելը՝ երկու քայլ դեպի հետ: Դա արդեն կախված է կին քաղաքական գործչի մտածելակերպից և, թե ինչու է նա հայտնվել ցուցակում: Եթե զուտ քվոտան էր պատճառը, ապա իսկապես նրա դերն՝ այդտեղից դուրս գալն է: Իսկ եթե նա իրոք վաստակել է իր տեղը ցուցակում, ապա, կարծում եմ, այդ կին գործիչը չի հրաժարվի իր մանդատից և կկարողանա այն բարձր պահել»:

Երիտասարդների ֆոկուս խմբի տղամարդ մասնակից

«Անընդունելի է ոչ միայն կանանց հետ կապված, այլ ընդհանրապես այն պրակտիկան, որ կուսակցապետերը հրաժարականի մասին նախապես դիմումներ են վերցնում իրենց ցուցակներում ընգրկված մարդկանցից, որ հաջողության դեպքում կարողանան առաջ բերել այլ մարդկանց և դարձնել նրանց դեպուտատ: … Ընտրողները ձայն են տալիս ցուցակում առաջին տեղերի թեկնածուների համար, բայց հետո վերջին տեղերում ընդգրկվածներն են դառնում դեպուտատներ: Չի կարելի ցուցակը ձևախեղել»

Տղամարդ քաղաքական գործիչների ֆոկուս խմբի մասնակից

«Լինում են երբեմն իրավիճակներ, որ մարդուն չես կարող մեղադրել՝ առողջական խնդիրներ և այլն, դա այլ խնդիր է: Բայց, որ զոռով, ստիպելով է… էլ ինչի՞ համար էին ցուցակը կազմելուց այդ մարդուն ներգրավում»:

Տղամարդ քաղաքական գործիչների ֆոկուս խբի մասնակից

Հասարակական կարծիքի, կին քաղաքական գործիչների և միջազգային դիտորդների գնահատմամբ՝ օրենսդրությամբ ամրագրված գենդերային քվոտայի բացակայության դեպքում խորհրդարան առաջադրվող կանանց թիվը անհամեմատ քիչ կլիներ: Դրա հետ մեկտեղ, նույն այդ փորձագետների գնահատմամբ, այդ միջոցն անբավարար է որոշումների կայացման մակարդակում գենդերային հավասարակշռության ապահովման համար:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

…Թեկնածուների առաջադրման քվոտայի արդյունավետությունը պետք է վերանայվի, որպես ժամանակավոր հատուկ միջոց՝ կանանց որպես թեկնածու լինելու իրավունքի և հնարավորության փաստացի հավասարությանը հասնելու նպատակով:

…Պետք է խրախուսել կուսակցություններին ունենալ գենդերային քաղաքականություն և հանրորեն տրամադրել իրենց անդամների գենդերային բաշխվածության վերաբերյալ տվյալները: Կարելի է քննարկել, որպեսզի կուսակցություններին պահանջ ներկայացվի իրենց ղեկավար մարմիններում կանանց ներկայացվածություն ապահովել և թեկնածուներ ընտրելու ավելի թափանցիկ ու ժողովրդավարական եղանակներ ունենալ: [45]

Ընտրությունների ընթացքի և արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ կանանց քաղաքական մասնակցության և օրենսդիր իշխանության մարմնում նրանց ներկայացվածության ցուցանիշների բարելավման գործում կանանց կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների, դրանց և կուսակցությունների համագործակցության զարգացման և այլ գործոններին զուգահեռ **անհրաժեշտ է ՀՀ Ընտրական օրենսգրքում ամրագրել համամասնական ընտրակարգով կին պատգամավորի՝ մանդատից հրաժարվելու դեպքում նրան հաջորդ կին թեկնածուով փոխարինելու սկզբունքը: Այդ կարծիքը հաստատվեց տվյալ հետազոտության շրջանակներում անկացված բոլոր ֆոկուս-խմբերի ընթացքում:**

«Այսօրվա դրությամբ 20%-ը բավարար չի, որովհետև մեխանիզմներ չկան 20%-ը ապահովելու: Իմ կարծիքով, այսօր 40% պիտի դրվեր, որ 20% ապահովեր փաստացի: Մյուսը՝քվոտան շատ կարևոր բան է մեր նման երկրների համար: Քվոտան ժամանակավոր երևույթ է: Բայց չգիտեմ ինչու, մեր տղամարդիկ վախեցան դրանից, ուղիղ քսան տարի էր պետք, որ մենք հասկանայինք, որ քվոտա էր պետք մտցնել…»

ՀԿ-ների ներկայացուցիչների ֆոկուս խմբի կին մասնակից

«Եթե դիտարկենք Հայաստանը որպես ժողովրդավար պետություն, ապա քվոտան մինիմում 30-35% պետք է լինի: Սակայն, մեր կենսապայմաններում, երբ որակ չկա, բնականաբար պետք է ձգտել ապահովել գոնե այդ 20%-ը: Խնդիրը մեխանիզմներ մշակելու մեջ է:: Պետք է այդ ուղղությամբ աշխատանքներ տանել»:

ՀԿ-ների ներկայացուցիչների ֆոկուս խմբի կին մասնակից

[45] ԵԱՀԿ/ԺՄԻԳ դիտորդական առաքելության վերջնական զեկույց, 26 հունիսի, 2012: http://www.osce.org/odihr/91643

«20% ոչ թե կուսակցության ցուցակներում, այլ՝ Ազգային ժողովում: Եթե ցուցակից մի կին ինքնաբացարկ է հայտնում, պետք է գա հաջորդ կինը: Սա իրավական խնդիր է, եթե ամրագրեին, ստիպված կանեին»

ՀԿ-ների ներկայացուցիչների ֆոկուս խմբի տղամարդ մասնակից

«Ես համաձայն եմ, որ 20%-ը ոչ թե կուսակցական ցուցակներին վերագրվի, այլ փաստացի 20% պետք է լինեն հենց ԱԺ-ում: Պետք է հաշվի առնենք, որ 41 մեծամասնական տեղ ունենք, այսինքն միայն 90-ն են համամասնական, հետևաբար պետք է ավելի բարձր քվոտա լինի, որ փաստացի 20% լինեն Ազգային ժողովում»

ՀԿ-ների ներկայացուցիչներ ֆոկուս խմբի կին մասնակից

ԼՅՈՒԴՄԻԼԱ ՍԱՐԳՍՅԱՆ.
«Տղամարդկանց հեշտ չէ ընդունել կին լիդերի գոյությունը» …

Հայ ազգային կոնգրեսի անդամ, Հայաստանի Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցության ատենապետ Լյուդմիլա Սարգսյանն ասում է,որ երբեք իրեն դուրս չի համարել քաղաքական գործընթացներից:

«Բնույթով սոցիալ-դեմոկրատ եմ և ՍԴՀԿ-ն ամենահոգեհարազատն էր ինձ համար: Կուսակցությունն շարքեր մտել եմ 2003-ին, յոթ ամիս անց դարձա ՍԴՀԿ ատենապետ: Շատ դժվար ժամանակահատված էր: Տղամարդկանց հեշտ չի ընդունել կին լիդերի գործունեությունն ու գոյությունը» :

Աշխատելուն զուգահեռ սովորում էր: Կային խորհրդատներ Սփյուռքի կողմից, որովհետև ՍԴՀԿ 125 տարվա պատմության մեջ, կին ատենապետ ոչ մի շրջանում չէր եղել: 2009-ին, երբ կուսակցությունը պառակտվեց, լուրջ պրոբլեմներ ունեցավ: Բայց, իր խոսքով, կար թիմ, կային քաղաքական այրեր, ովքեր գնահատեցին և կարևորեցին սկզբունքները: Նրանց բարոյական աջակցությամբ, այդ թվում նաև Հայ ազգային կոնգրեսի , նա մնաց կուսակցությունում:

Իր կարծիքով, շատ կարևոր է նաև մարդկային հմայքը, ի դեպ, և՛ տղամարդու, և՛ կնոջ դեպքում: Գուցե կնոջ դեպքում ավելի շատ: Հմայքը պետք է ներքուստ լինի:

«Պետք է լինել և՛ կանացի, և՛ համառ, և՛ գեղեցիկ, և՛պայքարող, պետք է կարողանալ ուրույն կերպար ստեղծել, առանց որևէ մեկին նմանվելու: Հասարակությունն էլ իր կողմից պետք է կարողանա ընդունել, որ կանայք տարբեր են լինում: Բոլոր կանայք չեն, որ կարող են բավարավել զուտ կին լինելով և խոհանոցում աշխատելով: Կան այլ տեսակի կանայք, ովքեր կարող են ավելին անել, քան տասնյակ տղամարդիկ: Հետևաբար այդ կնոջը չի կարելի նույն չափանիշներով գնահատել: Պետք է կարողանալ դա տեսնել ու տարբերել: Եվ դա պրոբլեմ է այսօր»:

Պատմությունը կազմվել է WomenNet.am-ի և մամուլում տպված նյութերի հիմման վրա

ՄԱՍ III. ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Կանանց քաղաքական մասնակցության սոցիալական միջավայրը ուսումնասիրվել է ֆոկուս-խմբերում հարցադրումների, քաղաքական կուսակցությունների ծրագրերի, երկրի քաղաքական գործիչների և կուսակցությունների առաջնորդների հրապարակային ելույթների գենդերային վերլուծության միջոցով:

3.1. Կանանց քաղաքական մասնակցության երևույթի վերաբերյալ հանրային կարծիքը և այդ բնագավառում փոփոխությունները

Կանանց քաղաքական մասնակցության նկատմամբ հանրային կարծիքի հիմնախնդիրը վաղուց է գենդերային հարցերով փորձագետների ուշադրության կենտրոնում: Ընդ որում, վերջին տարիներին այդ ասպարեզում նկատվել են դրական տեղաշարժեր: 2011թ. կատարված ուսումնասիրության ընթացքում հետազոտողները փորձել էին պարզել, թե որքանով է հասարակական կարծիքը բարյացակամ քաղաքական կարիերա անող կանանց և տղամարդկանց նկատմամբ:

Պարզվել էր, որ հարցվողների 85,5%-ը կարծում է, որ հայաստանյան հանրային կարծիքը բարյացակամ է տղամարդու քաղաքական կարիերայի նկատմամբ և միայն 46,5%-ը՝ կնոջ: Հարցվողների միայն 7,8%-ն էր նշել, որ հասարակական կարծիքը միանշանակ անբարյացակամ է կանանց քաղաքական կարիերայի նկատմամբ (նույն ցուցանիշը տղամարդկանց համար 0,9% էր) և հիմնականում անբարյացակամ համապատասխանաբար՝ 19,2% և 1,5%, անտարբեր՝ 22,4% և 8,8%[46]: Թեպետ հետազոտությունը վերհանել էր հանրային կարծիքում էական տարբերություններ քաղաքական կարիերա անող կանանց և տղամարդկանց նկատմամբ, սակայն վերը նշված՝ կնոջ քաղաքական կարիերայի նկատմամբ 46,5% դրական վերաբերմունքի ցուցանիշը առաջընթաց է արձանագրում նախորդ տարիներին կատարված հետազոտությունների համանման տվյալների համեմատությամբ:

Ավելի վաղ՝ 2008թ. կատարված հետազոտության մեջ, արձանագրվել էր, որ հարցվածների 46,2%-ը համաձայնություն էին հայտնել «Քաղաքականությունը կնոջ գործ չէ» կարծրատիպի հետ[47]: Ներկայացվածից հետևում է, որ վերջին տարիներին որոշ դրական փոփոխություններ հայաստանյան հանրային կարծիքում կանանց քաղաքական մասնակցության վերաբերյալ առկա են: Բացի այդ, հանրապետությունում առկա են դրական տեղաշարժեր պետական գենդերային քաղաքականության տեսանկյունից:

---

[46] *Տե՛ս* Հայաստանում հասարակական-քաղաքական մասնակցության գենդերային առանձնահատկությունները: ՄՀԲ, «Կովկաս» հասարակագիտական հետազոտությունների կենտրոն: Երևան, 2011, էջ 65:

[47] Որոշումների կայացման մակարդակում կանանց ոչ բավարար ներկայացվածության պատճառների ուսումնասիրություն, Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ: Երևան, 2008թ.:

Սկսած 2008թ. գենդերային հավասարության խնդիրն ընդգրկվեց ՀՀ կառավարության առաջնահերթությունների շարքում[48]: Նույն թվականից գենդերային հավասարության հաստատման անհրաժեշտության խնդիրը սկսեց հնչել քաղաքական գործիչների ճառերում: 2010թ. փետրվարի 11-ին ՀՀ կառավարությունը հաստատեց ՀՀ գենդերային քաղաքականության հայեցակարգը: 2011թ. կառավարությունը հաստատեց «Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագիրը», որտեղ նշվում է, որ պետք է ձեռնարկել հատուկ միջոցներ ապահովելու համար կանանց 30% ներկայացվածությունը օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների որոշումների ընդունման մակարդակներում: Սակայն գենդերային հավասարության հիմնախնդիրը հնչեցնելը, դրա վերաբերյալ կարևոր փաստաթղթերի ընդունումը դեռևս չի նշանակում խնդրի լուծում: Արմատացած քաղաքական ավանդույթները և քաղաքական պրակտիկան դանդաղ են փոփոխվում:

Գենդերային հավասարության հաստատումը անհնար է առանց կանանց քաղաքական մասնակցության իրական խթանման, որոշումների կայացման մակարդակում գենդերային հավասարակշռության հաստատման և, իհարկե, հասարակական կարծիքում բարեհաճ վերաբերմունքի:

Ներկայացվող հետազոտության բոլոր ֆոկուս-խմբերում տրվել է հետևյալ հարցը. «Ձեր գնահատմամբ ինչպիսի՞ն է կանանց քաղաքական մասնակցության երևույթի վերաբերյալ հանրային կարծիքը մեր երկրում: Նկատելի՞ են արդյոք փոփոխություններ այդ բնագավառում»: Հարցին տրվել են տարբեր պատասխաններ, սակայն կարծիք հայտնողների մեծ մասը դրական միտում էր նկատել՝ թե՛ կանանց հասարակական-քաղաքական ակտիվության, թե՛ քաղաքական մասնակցության առումով, թե՛ հասարակական կարծիքում եղած փոփոխությունների տեսանկյունից: Ոմանք այդ փոփոխությունը կապում են տնտեսության կառուցվածքի և դրա հետ կապված՝ ընտանիքում գենդերային դերերի փոփոխման հետ:

> «Երկիրը փոխվեց, շուկան փոխվեց, … եթե առաջ պատկերացնում էին կնոջը դպրոցի դասատու, ապա հիմա ընկալեցինք, որ կինը կարա լինի շատ լավ ժուռնալիստ, թերթի խմբագիր, իր թեկնածությունը դնի քաղաքական պաշտոնների համար: Կինը կարող է լինել ՀԿ-ի ղեկավար, դառնա կուսակցության ցուցակում երկրորդ դեմք, դառնա Ազգային ժողովի պատգամավոր:
>
> …Երբ շատ ժամանակ տղամարդիկ այդ գործը չէին կարողանում անել, կինը անում էր և իրեն էլ էր պահում, տունն էլ էր պահում ու զարմանալի չէր: …Որոշ կանայք էլ հետագայում պետք է դառնային շատ լավ գործավարներ, զանազան միջազգային օֆիսներում աշխատողներ և դրանից հետո մի աստիճան էլ բարձրացան մասնագիտական իմաստով: Դրական դինամիկան, այնուամենայնիվ, շարունակվելու է»:
>
> *Տղամարդ քաղաքական գործիչների ֆոկուս խմբի մասնակից*

[48] *Տե՛ս* ՀՀ կառավարության 2008-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը:

«Մեծ փոփոխություն կա և շատ դրական է, նույնիսկ թռիչքային փոփոխություն կա»:

Մարզային գործիչների ֆոկուս խմբի կին մասնակցի կարծիք

Կանանց ակտիվությունը հասարակական-քաղաքական կյանքում հանգեցրեց գենդերային կարծրատիպերի և կնոջ դերի ընկալման փոփոխմանը, և սկսեց կարծիք ձևավորվել, որ

«…կինը կարող է լինել պայքարող, կինը կարող է լինել հասնող, կնոջ մասնագիտությունը կարող է հավասար լինել տղամարդու մասնագիտությանը…»:

Մարզային գործիչների ֆոկուս խմբի կին մասնակցի կարծիքից

Այդ փոփոխությունները ներազդում են նաև տարբեր հասարակական ինստիտուտների գենդերային ռեժիմների[49] վրա՝ դանդաղորեն գործընթացներ առաջացնելով դրանցում:

«Կյանքի որոշակի ֆեմինիզացիա է գնում ...դրա համար ընկալումը փոխվում է: ...Դրական միտումը կա: Դանդաղ է փոփոխվում, բայց ամենակարևորը՝ կայուն, ստաբիլ»:

Կին քաղաքական գործիչների ֆոկուս խմբի մասնակից

Ֆոկուս-խմբերում նույնիսկ կարծիքներ հնչեցին, որ կանանց դերը կուսակցություններում աճել է:

«Սա, կարող եմ ասել, ոչ միայն մեր կուսակցության մասին, քանի որ ես ուշադրություն եմ դարձրել մյուս կուսակցություններին, կարելի է ասել՝ ցուցանիշը համամասնորեն բարձրանում է: Սա ցույց է տալիս, որ կնոջ դերը հասարակությունում մեծանում է և դա իսկապես պայմանավորված է գործընթացների ժողովրդավարացման հետ»:

Տղամարդ քաղաքական գործիչների ֆոկուս խմբի մասնակից

Հնչած կարծիքը, սակայն, չի հաստատվում վիճակագրական տվյալներով: Վերջին տարիներին կանանց քանակը միայն որոշ կուսակցություններում է աճել: Օրինակ՝ Հայաստանի հանրապետական կուսակցությունում կանանց թիվը 2007թ.-ի համեմատությամբ 2012թ. աճել է 20%-ով, հասնելով 51%-ի: Մյուս կուսակցություններում կանանց տոկոսը նվազել է:

Այսպես, «Օրինաց երկիր» կուսակցությունում 2007թ. համեմատությամբ կանանց տոկոսը նվազել է, սակայն մնում է ամենաբարձրը՝ 63%: Նվազել է կանանց տոկոսը նաև

[49]Գենդերային ռեժիմը հասարակական ինստիտուտների ներսում հաստատված գենդերային կարգավիճակների ու հարաբերությունների համակարգն է:

«Ժառանգություն» և «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցություններում, կազմելով համապատասխանաբար՝ 45% և 14%[50]:

Նույնիսկ կանանց մեծ թվաքանակ ունեցող կուսակցություններում նրանց ազդեցությունը մեծ չէ: Նախ և առաջ դա երևում է կուսակցությունների ղեկավար մարմիններում կանանց փոքր թվաքանակից, կուսակցական նախընտրական ծրագրերում գենդերային բաղադրիչի և կանանց առաջմղման համար կուսակցությունների ցածր շահագրգռությունից և, որպես հետևանք, առաջադրման մեխանիզմների բացակայությունից: Սակայն ֆոկուս-խմբում հնչած կարծիքը կարող է վկայել, որ, այնուամենայնիվ, կուսակցություններում ավելացել է լիդեր կանանց քանակը, որոնց ակտիվությունը նմանատիպ պատրանք է ստեղծում հանրային կարծիքում և կուսակցությունների ներսում:

Քաղաքական դաշտում ակտիվ կանանց փոքրաթիվության պատճառով, մոտեցումը կանանց նկատմամբ խիստ անձնավորված է: Պատահական չէ, որ ֆոկուս խմբերում բազմաթիվ կարծիքներ հնչեցին, որ նախորդ գումարման ԱԺ որոշ կին պատգամավորների ակտիվ պահվածքը նպաստեց հասարակական կարծիքի փոփոխմանը:

> «Հենց պատգամավորներն են հասցրել նրան, որ կարծիքը փոխվի դեպի դրականը: Ես մեր կուսակցության մասին ասեմ՝ Լարիսա Ալավերդյանը, Զարուհի Փոստանջյանը, Անահիտ Բախշյանը: Նրանք ապացուցել են, որ կինը տեղ ունի և կարող է տղամարդուց էլ արդյունավետ աշխատել»:
>
> *Կին գործիչների ֆոկուս խմբի մասնակից*

Դրա հետ մեկտեղ, պետք է նշել, որ արձանագրվել են նաև հոռետեսական կարծիքներ, որոնք ժխտում են որևէ փոփոխություն հանրային կարծիքում, ընդգծում քաղաքական կյանքում կանանց և տղամարդկանց նկատմամբ երկակի ստանդարտների պահպանումը:

> «Միևնույն սխալի համար կանանց չեն ներում, իսկ տղամարդկանց այդ սխալը ներվում է: Այստեղ մի քիչ վտանգը մեծանում է այն պահով, որ երբ պատասխանատվություն ես վերցնում, պիտի հնարավորինս զգույշ լինես»:
>
> *Կին քաղաքական գործիչների ֆոկուս խմբի մասնակից*

Նշենք, որ ֆոկուս–խմբերի մասնակիցների ուշադրությունից չէր վրիպել նաև քաղաքական բարձրաստիճան գործիչների ելույթներում հայտնված գենդերային դիսկուրսը:

Փորձագիտական խմբի դիտարկումների համաձայն՝ քաղաքական բարձրաստիճան գործիչների ելույթներում գենդերային դիսկուրսը հայտնվել է սկսած 2008 թ.-ից: Կանանց քաղաքական ակտիվության վերաբերյալ ելույթները շատացել են հատկապես Արևելյան գործընկերության շրջանակներում Հայաստանի ընդգրվելուց հետո: Սակայն դա չներազդեց

[50]Տվյալները վերցված են անմիջականորեն կուսակցությունների գրասենյակներից 2012 թ. խորհրդարանային ընտրություններից առաջ:

կուսակցությունների իրական քաղաքականության վրա, քանի որ փոփոխություններ չկրեցին ո՛չ կուսակցությունների ծրագրերը, ո՛չ կանոնադրությունները, կուսակցությունների ներսում չստեղծվեցին մեխանիզմներ թեկուզև կուսակցական հիերախիայում կանանց առաջմղման համար:

Ֆոկուս-խմբերի մասնակիցների ելույթներում նշվում էր, որ կա իրական խզում կուսակցությունների առաջնորդների հրապարակային և նույն կուսակցությունների իրական քաղաքականության միջև:

«Ոչ մի բան չի փոխվել 20 տարվա ընթացքում: ...Պաշտոնյաների մեջ ու մանավանդ վերին խավում քաղաքական լիդերն ասում է, որ կանանց պետք է տեղ տալ, ներքևներից սկսում են այդ բոլորն աղավաղել: Փոխարեն մեխանիզմներ գտնեն, որ post factum 20% կանայք լինեն, ամեն ինչ անում են, որպեսզի խանգարեն: Դե ամոթ ա էլի, ինչքա՞ն կարելի է»:

ՀԿ-ների ներկայացուցիչների ֆոկուս խմբի կին մասնակից

Հետաքրքիր է, որ ֆոկուս-խմբի մասնակիցները հաստատում են, որ կինը պետք է մեծ առավելություններ ունենա, «մի գլուխ բարձր լինի տղամարդուց», որպեսզի ընտրվի:

«Եթե կինը և տղամարդը հավասար ինտելեկտով ու հավասար վարքով լինեն, նրանց տարբերությունը լիներ միայն կին ու տղամարդ լինելը, ես 100% համոզված եմ, որ մեր ժողովուրդը կընտրեր տղամարդուն:

Եթե հավասարազոր թեկնածուներ լինեն, ապա չեմ ընտրի կնոջը, կընտրեմ տղամարդուն, միայն կնոջառավելության դեպքում կընտրեմ կնոջը»:

ՀԿ-ների ներրկայացուցիչների ֆոկուս խմբի տղամարդ մասնակից

Ըստ ֆոկուս-խմբերի մասնակիցների՝ կանանց քաղաքական մասնակցության վերաբերյալ տարակարծություն կա մայրաքաղաքի և շրջանների միջև: Եթե մայրաքաղաքում փոփոխությունները հանրային կարծիքում ակնառու են, ապա շրջաններում գենդերային կարծրատիպերը առավել կայուն են:

«Հիմնականում մայրաքաղաքում և մայրաքաղաքին հարող տարածաշրջաններում է վերջին տարիներին ակտիվություն նկատվում, քանի որ գյուղական համայնքներում մեծամասնական կարգով առաջադրվող կին գործիչները շատ քիչ են: Դա էլ երևի թե պայմանավորված է կանանց պասիվությամբ՝ հատկապես մարզերում քաղաքականությամբ չհետաքրքրվածությամբ, կապված տանը տղամարդու դիրքի, արգելքների հետ: Շատ դեպքերում կնոջը արգելում են տեսակետ հայտնել, սեմինար-քննարկումներին մասնակցել»:

ՀԿ-ների ներկայացուցիչների ֆոկուս խմբի կին մասնակից

Այսպիսով, ընդհանուր առմամբ, հետազոտության արդյունքները հաստատում են, որ թեպետ դանդաղորեն, սակայն որոշ դրական տեղաշարժեր հանրային կարծիքում կանանց քաղաքական մասնակցության նկատմամբ, այնուամենայնիվ, առկա են: Այդ փոփոխությունները մի կողմից պետական գենդերային քաղաքականության արդյունք են, մյուս կողմից կապված են քաղաքական ասպարեզում կին լիդերների գործունեության հետ: Միաժամանակ, հայ հասարակությունում առկա են նաև որոշ խոչընդոտներ, որոնք պետք է հաշվի առնել պետական գենդերային քաղաքականություն մշակելիս:

ԿԱՐԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ.
«Կարծրատիպերը սկսել են զիջել իրենց դիրքերը»:

Արտաշատի թիվ 1 դպրոցի նախկին տնօրեն, մասնագիտությամբ ֆիզիկոս, թիվ 17 ընտրատարածքից մեծամասնական ընտրակարգով ընտրված ՀՀԿ-ական պատգամավոր Կարինե Պողոսյանը վստահ է՝ կարծրատիպերին մեր հասարակությունը կամաց-կամաց հրաժեշտ է տալիս ու ըստ այդմ կնոջ ակտիվ դերակատարումը մեզանում ավելի է մեծանալու:

«Երկար տարիներ եղել եմ Արտաշատի թիվ 1 դպրոցի տնօրեն և դրան զուգահեռ վարել եմ ակտիվ հասարակական գործունեություն Հանրապետական կուսակցությունում՝ շուրջ վեց տարի եղել եմ տարածքային կառույցի ղեկավարը: Իսկ կուսակցության անդամ եմ հանդիսանում արդեն տաս տարի ու կարող եմ ասել, որ հասարակական-քաղաքական ակտիվ գործունեությունս հենց այդտեղից է սկսվել»:

Իր թեկնածությունն առաջադրելու որոշումը կայացրել էր Հանրապետական կուսակցությունը:

«Ես դա որպես պատիվ եմ ընկալել: Դե իսկ քարոզարշավի ընթացքում, երբ հանդիպումներ եմ ունեցել մարզի բազմաթիվ համայնքներում ես հասկացա, որ առաջադրումս նաև պահանջված է քաղաքացիների կողմից: Իսկապես, չեք պատկերացնի, թե ինչ ոգևորությամբ էին դիմավորում համայնքերում, այնպես որ մեր սպասումներն իրականացան: …Կանանց ներկայացվածությունը խորհրդարանում ուղղակի անհրաժեշտ է, քանի որ շատ հարցեր կային ու կան, որոնցով ինձ դիմում են, իմ մեջ ոչ միայն իրենց ընտրած պատգամավոր, այլև կին տեսնելով»:

ԱԺ-ում իր անելիքների մասին պատմելով ասում է.

-Քանի որ ինքս երկար տարիներ մանկավարժ եմ եղել, դպրոցի տնօրեն ու հիմա էլ ԱԺ Կրթության և գիտության հարցերի մշտական հանձնաժողովի փոխնախագահն եմ, ապա հասկանալի է, որ առաջնային իմ ուշադրության կենտրոնում կլինեն հիշյալ ոլորտի հետ կապված խնդիրներն ու բացթողումները:

3.2. Կանանց քաղաքական մասնակցությանը խոչընդոտող հանգամանքները

Տարբեր ժամանակաշրջաններում և տարբեր հասարակություններում կանանց քաղաքական մասնակցության խոչընդոտները տարբեր են, սակայն կան գործոններ, որոնք ընդհանուր են գրեթե բոլոր հասարակությունների համար: Միևնույն ժամանակ, տարբեր է այդ գործոնների տեսակը և դրանց ազդեցության չափը: Կարող են գերակշռել ինստիտուցիոնալ կամ սոցիալ-մշակութային բնույթի խոչընդոտները: Հետազոտության ընթացքում

մասնակիցներին առաջարկվել էր 10 միավորոնոց համակարգով գնահատել կանանց քաղաքական մասնակցությունը խոչընդոտող 14 գործոններ: Մասնակիցները կարող էին նշել նաև այլ խոչընդոտող գործոններ:

Թեպետ տարբեր խմբերում մոտեցումները խիստ տարբեր էին, սակայն կանանց քաղաքական մասնակցությանը խոչընդոտող գործոնները դասավորվեցին ստորև ներկայացվող հաջորդականությամբ: Կանանց քաղաքական մասնակցությունը խոչընդոտող գործոնների առաջին հնգյակը հետևյալն է.

	Գործոններ	Միջին գնահատական
1	Կենցաղային և ընտանեկան հոգսերով կանանց ծանրաբեռնվածությունը	6,8
2	Ընտրակաշառքի երևույթի տարածվածությունը	6,5
3	Քաղաքականպայքարիկոպտությունննուագրեսիվությունը (մրցակիցներիանհարգալիցվերաբերմունքը, զրպարտության, վարկաբեկմանուահաբեկմանանթույլատրելիտեխնոլոգիաներիկիրառումը)	6,5
4	Քաղաքականպայքարումքրեականտարրերիառկայությունը	6,5
5	Հայրիշխանականդիրքորոշումներիգերակայությունըհանրայինկյանքում, շրջապատի, հարազատների (ամուսին, ծնողներ) բացասականդիրքորոշումը	6,4

Կանանց քաղաքական մասնակցության վրա բացասական ազդեցություն ունեցող գործոնների երկրորդ հնգյակը հետևյալն է.

	Գործոններ	Միջին գնահատական
6	Կանանց ֆինանսական սուղ հնարավորությունները	6,1
7	Գենդերային անհավասարակշռության հաղթահարմանն ուղղված՝ պետական քաղաքականության թերի լինելը	6
8	Կանանց անվստահությունը սեփական ուժերի նկատմամբ, և հոգեբանական բարդույթներն ու զգուշավորությունը	5,8
9	Ներկուսակցական ժողովրդավարության պակասը, կանանց առաջմղման կուսակցական մեխանիզմների պակասը	5,7
10	Կին թեկնածուների նկատմամբ անվստահություն ձևավորող կարծրատիպերի առկայությունը	5,6

Եվ վերջին խմբում ընդգրկված խոչընդոտող գործոններն են.

	Գործոններ	Միջին գնահատական
11	Կանանց շրջանում քաղաքական ակտիվության և նախաձեռնողականության բացակայությունը	5,3

12	Կանանց հասարակական կազմակերպությունների ոչ բավարար աջակցությունը, կանանց հասարակական շարժման չկայացածությունը	5,2
13	Քաղաքական գործընթացների բնագավառում կանանց փորձառության պակասը, քաղաքական պայքարի և ընտրական տեխնոլոգիաների ոչ բավարար իմացությունը	5
14	ԶԼՄ-ների կողմից կին թեկնածուներ հաջակցության պակասը	4,3

Պատասխաններից երևում է, որ կանանց խոչընդոտող գործոնները ունեն թե՛ սոցիալ-մշակութային հիմք, թե՛ ինստիտուցիոնալ: Սակայն տարբեր ֆոկուս խմբերի միջև կան էական տարբերություններ: Հետազոտության տեսանկյունից հատկապես հետաքրքիր է կանանց և տղամարդկանց տեսակետների տարբերությունը: Ընդ որում, պետք է հաշվի առնել, որ երկու խմբերում էլ բավականին կայացած, քաղաքական և քաղաքացիական ակտիվ դիրքորոշում ունեցող մարդիկ էին:

Կանանց ֆոկուս խմբի անդամները որպես կանանց քաղաքական մասնակցության խոչընդոտող գլխավոր հանգամանքներ են նշել՝

1. Քաղաքական պայքարում քրեական տարրերի առկայությունը (6,6 միավոր)
2. Ընտրակաշառքի տարածվածությունը (6,2 միավոր)
3. Գենդերային անհավասարակշռության հաղթահարմանն ուղղված՝ պետական քաղաքականության թերի լինելը (6միավոր):

Տղամարդկանց ֆոկուս խմբի անդամները որպես կանանց քաղաքական մասնակցության խոչընդոտող գլխավոր հանգամանքներ են նշել՝

1. Կենցաղային և ընտանեկան հոգսերով կանանց ծանրաբեռնվածությունը (7,4միավոր)
2. Քաղաքական պայքարում քրեական տարրերի առկայությունը (6,8միավոր)
3. Կանանց ֆինանսական սուղ հնարավորությունները(6,6միավոր)

Կանայք և տղամարդիկ համակարծիք են միայն քաղաքական պայքարում քրեականտարրերի առկայության հարցում: Հետաքրքիր է, որ տղամարդկանց կողմից առաջին տեղում նշված «կենցաղային և ընտանեկան հոգսերով կանանց ծանրաբեռնվածությունը» կանանց կարծիքով 7-րդ տեղում է:

ՀԵՂԻՆԵ ԲԻՇԱՐՅԱՆ.
«Եթե քաղաքականության մեջ էմոցիաներ չեղան, աշխատանքը չի ստացվի»:

«Օրինաց երկիր» խմբակցության ղեկավար Հեղինե Բիշարյանը ԱԺ-ի հնաբնակներից է: Առաջին անգամ պատգամավոր է դարձել 2003-ին կուսակցության համամասնական ցուցակով:

Կուսակցական կարիերայի առումով հաջողակ է՝ իր անսպառ ակտիվության շնորհիվ աճել է ՕԵԿ շարքային անդամից մինչև կուսակցության փոխնախագահ: Մանկավարժական գիտությունների թեկնածու է: Ամուսնացած է, ունի երկու երեխա:

2012թ. Ընտրություններում, բացի ՕԵԿ համամասնական ցուցակից, պայքարում էր նաև թիվ 11 ընտրատարածքում `«Վստահիր, որ կառուցենք օրենքի Հայաստան» կարգախոսով: Այստեղ առաջադրված չորս թեկնածուների թվում երկրորդն էր իր հավաքած ձայներով:

Ասում է, որ իր քաղաքական կարիերայի վերելքով պարտական է կուսակցությանը: «Երբ կուսակցությունը ունեցավ դժվարություններ, ես չէի կարող անմասն մնալ, դա ես չէի լինի, որովհետև ես իմ ողջ կյանքի ընթացքում նվիրվել եմ իմ ընտանիքին, բարեկամներին ու ընկերներին: Ես ազնիվ եմ հարաբերությունների մեջ»:

Որպես քաղաքական գործիչ առանձնանում է իր անկեղծությամբ:

«Ես բնավորությամբ գուցե և խիստ եմ, էմոցիոնալ... բայց եթե քաղաքականության մեջ էմոցիաներ չեղան, աշխատանքը չի ստացվի: Այնուամենայնիվ, լինել կանացի, սիրել, լինել հանդուրժող, նվիրված, հավատարիմ ու սկզբունքային. այս ամենով եմ միշտ ապրում և առաջնորդվում»:

Ունի նաև իր պատկերացումը կին քաղաքական գործչի իմիջի վերաբերյալ:

Կանանց ու տղամարդկանց հավասարության ջատագովներից է, թեև չի սիրում, «երբ կանայք նմանվում են տղամարդկանց՝ ոչ միայն իրենց բնավորությամբ, այլ նաև իրենց արտաքինով և հագուստով»: Դեռևս 2005-ին՝ լինելով ընդդիմության մեջ, փորձեց առաջ տանել կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին իր իսկ հեղինակած օրինագիծը, որն այն ժամանակ Ազգային ժողովը նույնիսկ քննարկման չարժանացրեց: Հավատարիմ մնալով իր սկզբունքներին՝ այսօր նա արդեն կառավարության կողմից բերված «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրինագծի համահեղինակն է, և շատ է կարևորում, որ այդ նախաձեռնությունը հասարակական կազմակերպությունների հետ միասին տարիներ շարունակ տարված պայքարի արդյունք է:

Ի դեպ, իր գրեթե բոլոր հարցազրույցների վերջում անպայման ընդգծում է. «Իմ երեխաներն իմ թուլությունն են, չեմ ներում ինձ, որ մորս նման բազմազավակ չեմ...»:

Պատմությունը կազմվել է մամուլում տպված նյութերի հիմման վրա

3.3. Կանանց նկատմամբ խտրականության առկայությունը

Թեպետ խոչընդոտող գործոնների թվում կանանցն կատմամբ խտրականությունը նշված չէր, սակայն մասնակիցներին կիսաբաց հարցի տրամաբանությամբ հնարավորություն էր տրված նշել այն, սակայն որևէ մեկը խտրականությունը որպես կանանց քաղաքական մասնակցությանը խոչընդոտող գործոն չէր նշել:

Կանանց նկատմամբ խտրականության խնդիրը հետազոտության ընթացքում ֆոկուս խմբերում բարձրացվեց «Ձեր կարծիքով Հայաստանում կա՞ արդյոք կանանց նկատմամբ խտրականություն քաղաքական ասպարեզում: Եթե այո, ապա ո՞րտեղ և ինչպե՞ս է այն դրսևորվում» հարցի միջոցով:

Խտրականության առկայությունը հիմնականում ընդունվում է կենցաղային մակարդակում և ընտանիքում:

«Եթե կա էլ, դրանք ընդամենը տեղային, կենցաղային մակարդակի հարցեր են: Այսինքն՝ կինը վերցնի, լրացնի իր ձևաթուղթը և առաջադրվի, նրան ասեն, թե «քո ինչի՞ն է պետք»:

Մարզային գործիչների ֆոկուս խմբի կին մասնակից

Նկատելի է խտրականության երևույթի լավ չըմբռնելը, չհասկանալը[51]:

Այսպես, մարզային գործիչների ֆոկուս խմբի մասնակիցներից մեկը նշում է.

«Մասնագիտությունը, պրոֆեսիոնալիզմը չունի սեռ, չունի այլ որակումներ, կա պրոֆեսիոնալ աշխատող: Մյուս կողմից, եթե ընտանեկան խորհրդակցության արդյունքում տղամարդու ձայնը որոշակի գերակայություն ունենա, և որոշվի, որ կինը չի մասնակցում քաղաքական պրոցեսին, դրան էլ սովորական պետք է նայենք: Կանայք էլ, միգուցե, պատրաստ չեն շատ ակտիվ գործունեության»:

Մարզային գործիչների ֆոկուս խմբի տղամարդ մասնակից

Այսինքն, անհրաժեշտ է «նորմալ» վերաբերվել այն երևույթին, որ տղամարդը հնարավորություն ունի ինքնուրույն որոշելու իր զբաղմունքը, իսկ կնոջ դեպքում դա որոշվում է «ընտանեկան խորհրդակցության» արդյունքում: Եվ դա չի ընկալվում որպես խտրականություն: Մինչդեռ, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայում(1979թ.) տրված բնորոշման համաձայն՝ ««կանանց նկատմամբ խտրականություն» հասկացությունը նշանակում է սեռի հիմքով ցանկացած տարբերակում, բացառում կամ սահմանափակում, որը նպատակ ունի կանանց համար սահմանափակել կամ վերացնել քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական կամ ցանկացած այլ բնագավառում… մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների ճանաչումը և կանանց կողմից այդ իրավունքների ու ազատությունների իրականացումը կամ դրանցից օգտվելը»(հոդված 1): «Խորհրդակցության» արդյունքում ինչ-որ բան չափահաս կնոջն արգելելը խտրականություն է, իր ցանկությամբ մասնագիտություն ընտրելն արգելելը խտրականություն է, աշխատելու իրավունքից զրկելը խտրականություն է: Ֆոկուս խմբերում այդ մտքերն առավել հստակ արտահայտվեցին միայն երիտասարդների խմբում, և հնչեցվեցին այն ուսանողների կողմից, ովքեր անցել էին գենդերային դասընթացներ:

«Կանանց նկատմամբ խտրականություն գրեթե ամեն տեղ կա, քաղաքական ասպարեզում էլ, կարծում եմ, կլինի խտրականություն, բայց այստեղ մի տարբերություն կա, որ չի կարող բացահայտ խտրականություն լինել, թաքնված կլինի»:

Երիտասարդների ֆոկուս խմբի տղա մասնակից

[51]Խտրականության երևույթի չմբռնելը հաստատվել է նաև վերը նշված հետազոտությունների ընթացքում: «Հայաստանում հասարակական-քաղաքական մասնակցության գենդերային առանձնահատկությունները» հետազոտության մեջ նշվում է, որ խտրականության առկայության մասին հարցին ռեսպոնդենտների 46.4%-ը դրական է պատասխանել, 41.1%-ը՝ բացասական, իսկ 12.5%-ը դժվարացել է պատասխանել: Ընդ որում, հարցվածների 23.8%-ը նշել էր, որ խտրականությունը առկա է քաղաքական ընտրությունների համակարգում:

«Ընտանիքներ կան, որ ասում են կինը չպետք է աշխատի դատախազությունում, Ազգային ժողովում»:

Երիտասարդների ֆոկուս խմբի աղջիկ մասնակից

«Խտրականություն ամենատարբեր ոլորտներում կա, բայց ամենավատը նայում են ՊՆ համակարգում աշխատող կանանց»:

Երիտասարդների ֆոկուս խմբի աղջիկ մասնակից

Հետաքրքիր է, որ մասնակիցներից ոմանք խտրականություն են համարում նաև տարբեր ոլորտներում հավասար հնարավորություններ ստեղծող մեխանիզմների բացակայությունը:

«Ամենակարևորն այն է, որ աշխատանքը չի հարմարեցվել կնոջը, որ աշխատող կինը երեխա ունենա»:

Երիտասարդների ֆոկուս խմբի աղջիկ մասնակից

Խտրականության երևույթն իր հետ բերում է ինքնախտրականություն, բազմաթիվ բարդույթներ և վախեր: Կանայք վախենում են վարկաբեկվելուց, տարաբնույթ խոսակցություններից, ձեռք են բերում անվստահություն, թերհավատություն սեփական հնարավորությունների նկատմամբ, վախենում են չկարողանալ անել այն, ինչ իրենցից պահանջվում է:

«Կանանց մեծամասնությունն այնքան էլ չի ցանկանում դառնալ հասարակական քննարկման առարկա: Դա շատ դժվար բան է: Հոգեբանական այդ անջրպետը հաղթահարելու համարձակությունը, որը թույլ կտա պայքարել և հաշվի չառնել այն մանր-մունր խոսակցությունները, դեռևս մեր մեջ չկա: Դա մեր զարգացվածության աստիճանից է, մենք այդ շրջանը դեռ չենք անցել: Մենք քայլ չենք անում, որ տեսնենք մեզ խոչընդոտում են, թե ոչ»:

Մարզային գործիչների ֆոկուս խմբի կին մասնակից

Խտրականութուն է դիտվում աշխատաշուկայում գենդերային սեգրեգացիայի առկայությունը:

«Գուցե շատերը ինձ հետ այդ տեսակետը չկիսեն, բայց կանանց ոլորտների գաղափարը նույնպես խտրականության մի ձև է»:

Կին քաղաքական գործիչների ֆոկուս խմբի մասնակից

Քաղաքական ասպարեզում խտրականության լինել-չլինելու մասին հարցադրումը տարբեր կարծիքների և մեկնաբանությունների տեղիք տվեց: Մասնակիցների մի մասը ժխտում է քաղաքական ոլորտում խտրականության առկայությունը:

«Քաղաքական տեսանկյունից չեմ կարծում, որ երիտասարդ կանանց նկատմամբ խտրականություն կա: Կինը միշտ էլ եղել է հայ տղամարդու կողքին, նրա հետ համահավասար տարել է լուծը: Խտրականությունչ կա»:

Տղամարդ քաղաքական գործիչների խոկուս խմբի մասնակից

Մյուսներն ավելի իրատեսորեն են մոտենում տվյալ խնդրին և վերլուծելով քաղաքական ոլորտում տիրող իրավիճակը, այնուամենայնիվ, ընդունում են խտրականության առկայությունը:

«Իրականում ես կարծում եմ, որ մեզ մոտ կա խտրականություն: Եկեք ազնիվ լինենք ինքներս մեզ հետ: Եկեք նայենք, թե քանի կին կա կուսակցությունների կառավարող մարմինների մեջ... Ելնելով դրանից՝ կհասկանանք խտրականություն կա՞, թե՝ ոչ: Մի բան է, երբ մենք ցանկի մեջ ընդգրկում ենք կանանց, քանի որ օրենքի պահանջ է, և մի բան է, երբ հնարավորություն ենք տալիս քաղաքականություն իրականացնել, որոշում կայացնել: ... Այդ իմաստով քաղաքականությունում կնոջն կատմամբ խտրականություն կա»:

Տղամարդ քաղաքական գործիչների ֆոկուս խմբի մասնակից

«Միանշանակ ասեմ, որ խտրականություն կա: Չնայած կային ակտիվ կանայք, բայց նրանց թույլ չէին տալիս լուրջ լծակների տիրապետել»:

Տղամարդ քաղաքական գործիչների ֆոկուս խմբի մասնակից

Քաղաքական ընտրությունների ընթացքում կանանց նկատմամբ խտրականության իրողությունն արձանագրվեց նաև 2012թ. մայիսի 6-ին կայացած ՀՀ ԱԺ ընտրություններում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի դիտորդական առաքելության վերջնական զեկույցում: Ըստ զեկույցի՝ լրատվամիջոցների դիտարկումն արձանագրել է, որ Հ1-ը ընտրությունների հետ կապված լրատվական հաղորդումների միայն 4%-ն է հատկացրել կին թեկնածուներին և կուսակցությունների կին ներկայացուցիչներին, իսկ հանրային ռադիոն՝ 5%-ը: Սա անհամեմատ ցածր ցուցանիշ է, այն պարագայում, երբ գրանցված բոլոր թեկնածուների 21%-ը կանայք էին: Մինչդեռ, Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների համաձայն ժողովրդավարացման և գենդերային քաղաքականության թիրախներից մեկը օրենսդիրում կանանց 30% ներկայություն ունենալն է: Վերը նշված իրողությունները չեն համապատասխանում ԵԱՀԿ՝ «քաղաքական և հասարակական կյանքի բոլոր ոլորտներում կանանց լիարժեք մասնակցության համար հավասար հնարավորություններին նպաստելու» պարտավորություններին և «Կանանց նկատմամբ բոլոր տեսակի խտրականության վերացման մասին» կոնվենցիայով պետության՝ կանանց մասնակցությունը խրախուսելու պարտավորությանը:

ՆԱՏԱԼՅԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ.
«Կանանց ակտիվացմամբ մեր երկիրը եթե չշահի, ապա հաստատ չի տուժի»

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի հայկական կոմիտե» հասարակական կազմակերպության նախագահ, անկուսակցական Նատալյա Մարտիրոսյանը առաջարկ է ստացել Հայ ազգային կոնգրեսի կողմից՝ ընդգրկվել դաշինքի նախընտրական համամասնական

ցուցակում և համաձայնել է: Պատգամավորության թեկնածուն իր քաղաքական կարիերան սկսել է շատ տարիներ առաջ, դեռևս 90-ականների սկզբին՝ ընտրվելով Երևանի քաղխորհրդի պատգամավոր: «Դեռ 88-ից ակտիվ մասնակցել եմ բոլոր հասարակական և քաղաքական գործընթացներին, այնպես որ քաղաքականությունն ինձ համար խորթ չէ»,- ասում է նա:

Որպես իրավաշտպան Նատալյա Մարտիրոսյանը հետաքրքրված է նաև Հայաստանում գենդերային հավասարության խնդիրներով: Առավել ևս, որ նա ժամանակին Կանանց համահայկական միության փոխնախագահ է եղել, բացի այդ երկար տարիներ զբաղվում է Հարավային Կովկասում խաղաղասիրական գործընթացներում կանանց ներգրավման հարցերով:

«Հիմնական խնդիրն այն է, որ մեր հասարակությունը միտում ունի դեպի ցանկացած ձևի խտրականություն: Օրինակ, կա արտահայտված խտրականություն տարիքի կտրվածքով՝ կամ դու դեռ փոքր ես, կամ մեծ ես, սոցիալական առումով՝ եթե դու մեծահարուստ չես, ուրեմն դու ոչինչ ես: Նույնպիսի խտրականության են ենթարկվում կանայք: Կարծես թե մեզանում իշխանությունը տղամարդկանց մենաշնորհն է: Բայց չէ որ մենք հավասար իրավունքներ ունենք, մեր Սահմանադրության և օրենսդրության մեջ դա ամրագրված է, սակայն մենք պետք է ունենանք նաև հավասար հնարավորություններ»,- նշում է Մարտիրոսյանը:

Իր համոզմամբ, կանանց դերի ակտիվացմամբ մեր երկիրը եթե չշահի, ապա հաստատ չի տուժի. «Հայաստանում բարձրագույն կրթություն ստացած մարդկանց 63 տոկոսը կանայք են: Նրանք պետք է հասարակական պատասխանատվություն ունենան և իրենց գիտելիքները ծառայեցնեն այս պետությանը»:

3.4 Ներինստիտուցիոնալ միջավայր և գործոններ

Կանանց քաղաքական կարիերայի առաջմղման կարևորագույն օղակը քաղաքական կուսակցություններն են: Որոշակի դերակատարություն ունեն նաև հասարակական կազմակերպությունները: Իսկ ինչպիսի՞ն է կանանց կարգավիճակը կոսակցություններում և հասարակական կազմակերպություններում:

Ֆոկոս խմբերի քննարկմանն էին ներկայացվել այդ խնդիրներին առնչվող որոշակի տվյալներ, որոնք ստացվել են «Կովկաս» հասարակակագիտական հետազոտությունների կենտրոնի կողմից 2010թ. իրանացված զանգվածային հարցման արդյունքում[52]:

Հարցման ընթացքում սատացված տվյալները թույլ են տալիս եզրակացություններ անել Հայստանում քաղաքացիական հասարակության ինստիտուտների դաշտի դեռևս ոչ բավարար ձևավորվածության և կուսակցությունների ինքնաուռճացման մարտավարության մասին: Պարզվում է, որ հասարակական կազմակերպություններին անդամակցողներն ավելի քիչ են՝5,2%, քան քաղաքական կուսակցությունների անդամները՝ 10,7%: Նույնն է պատկերը նաև դրանց համակիրների առումով. համապատասխանաբար՝ 25,3% և 31,1%: Մինչդեռ առողջ տրամաբանությունը հուշում է, որ հասարակության մեջ ակտիվ կեսադիրքորոշում ունեցող

մարդկանց թիվն ավելին պետք է լինի, քան քաղաքական գաղափարակիրներինը, և որ վերջիններս կազմում են սոցիալապես ակտիվ քաղաքացիների բազմության մի մասը:

Նմանապիպ եզրակացություններ են հնչեցրել նաև ֆոկուս խմբերի մասնակիցները:

«Այստեղ արհեստական ուռճացում կա: Մարդը ձևականորեն է ընդգրկված որևէ կուսակցությունում: Նրան ստիպել են: Եվ դա բավական մեծ թիվ է կազմում: Սակայն հարց է, թե նրանցից քանիսն է ակտիվ քաղաքական գործունեությամբ զբաղվում»:

Կին քաղաքական գործիչների ֆոկուս խմբի մասնակից

«Կուսակցություններում շատ մարդկանց թիվը պայմանավորված է նաև նրանով, որ մարդը կարող է ընդգրկվել ոչ թե իր ցանկությամբ, այլ, ասենք, ընկերոջ խնդրանքով, ընկերոջ շահի համար, անգամ չհամակրելով այդ կուսակցությանը Նման դեպքերը մեր երկրում շատ են: Ասենք, ընտանիքի անդամներից մեկը այդ կուսակցությունից շահ ունի ու իրանց ընդհանուր բարեկամությունն անդամագրի այդ կուսակցությունը»:

Երիտասարդ գործիչների ֆոկուս խմբի տղա մասնակից

«Կուսակցություններում ընդամենը թվային առավելություն է, բայց իսկական, որ ինչ-որ բան անողները ՀԿ-ներն են: ՀԿ-ներում ավելի իրական մարդիկ են: Ինչքան մարդ կա, ուրեմն այդքանն էլ աշխատում են, ինչ-որ մի բանի համար պայքարում են, իսկ կուսակցություններում ընդամենը թիվ է»:

Երիտասարդ գործիչների ֆոկուս խմբի տղա մասնակից

Այնուհանդերձ, կանայք ավելի շատ են ներկայացված հասարակական կազմակերպություններում, քան տղամարդիկ: Կուսակցություններին դեպքում պատկերն հակառակն է: *Տե՛ս աղյուսակ 3:*

Աղյուսակ 3. Հարցման մասնակից կանաց և տղամարդկանց ընգրկվածությունը հսարակական կազմակերպություններում և կուսակցություններում

Կազմակերպության տեսակը	Հարցման մասնակիցների անդամակցությունը			
	տղամարդկանց	կանանաց	տղամարդիկ	կանայք
Հասարակական կազմակերպություն	4,7%	5,5%	49,1%	58,1%
Կուսակցություն	13,3%	8,5%	57,0%	43,0%

Ֆոկուս խմբերի մասնակիցների մեկնաբանություններնն այս առումով ևս հետաքրքրական են:

«Բնական է, որ այդպես էլ պիտի լինի, որովհետև ՀԿ-ները պակաս դերակատարություն ունեն հասարակության մեջ, քան կուսակցությունները: Քաղաքական կուսակցություններին է վիճակված իշխանություն նվաճել և բաժանել, իսկ ՀԿ-ները տարբեր տեսակի սոցիալական խնդիրներ են սպասարկում: Դրա համար տղամարդիկ այդ դաշտը ավելի բաց են թողել և կանայք այդտեղ դերակատարություն ունեն: Կանանց քաղաքացիական նախաձիրություններն այնտեղ ավելի հեշտ են կարողանում ռեալիզացնել, որովհետև տղամարդիկ այստեղ ավելի նվազ հետաքրքրություն ունեն»:

Տղամարդ քաղաքական գործիչների ֆոկուս խմբի մասնակից

«Կան կանայք, որոնք հիասթափված լինելով կուսակցություններից՝ նրանց հաճախ կեղծ ուսուցողական գործունեության հետևանքով, ավելի շատ ձգտում են դեպի հասարակական կազմակերպությունները: Շատ կանայք կան, որ գործազուրկ են, ուզում են միջավայր դուրս գալ և ընկերուհիներով, ծանոթներով հասարակական կազմակերպություն են ստեղծում, ներդրում անում այդտեղ, որպեսզի կարողանան արտահայտվել»:

Կին քաղաքական գործիչների ֆոկուս խմբի մասնակից

Ուսումնասիրության արդյունքները հաստատում են, որ թե՛ հասարակական կազմակերպություններում և թե՛ կուսակցություններում կանայք ունեն հիմնականում շարքային անդամի կարգավիճակ, քիչ են ներկայացված ստորին և միջին ղեկավար օղակներում և գրեթե բացակայում են բարձրագույն ղեկավար կազմում: Վիճակը համեմատաբար մխիթարական է հասարակական կազմակեպությունների պարագայում: Սակայն այստեղ էլ կարիերայի սանդուղքն ի վեր կանաց թվի նվազման շարժընթաց է արձանագրվում: ՀԿ-ների շարքային անդամ կանայք երկու անգամ ավելի շատ են, քան շարքային անդամ տղամարդիկ: Ստորին և միջին ղեկավար օղակներում նրանց թիվը գրեթե հավասար է, իսկ բարձրագույն ղեկավար մարմիններում տղամարդկաց թիվը երեք անգամ գերազանցում է կանանց թվին: *Տե՛ս Աղյուսակներ 4 և 5:*

Աղյուսակ 4. Տղամարդկանց եվ կանանց կարգավիճակային առանձնահատկությունները հասարակական կազմակերպություններում

		Տղամարդիկ	Կանայք
Կարգավիճակը	Շարքային անդամ	30,3 %	69,7 %
	Ստորին կամ միջին ղեկավար կազմի անդամ	41,2 %	58,8 %
	Բարձրագույն ղեկավար կազմի անդամ	75 %	2 5 %

Աղյուսակ 5. Տղամարդկանց եվ կանանց կարգավիճակային առանձնահատկությունները քաղաքական կուսակցություններում

		Տղամարդիկ	Կանայք
Կարգավիճակը	Շարքային անդամ	53,4 %	46,6 %
	Ստորին կամ միջին ղեկավար կազմի անդամ	90,9 %	9,1 %
	Բարձրագույն ղեկավար կազմի անդամ	99,2%	0,8%

«Կանայք կատարում են իրենց կուսակցությունների «սև գործի» 90%-ը, բայց, երբ պետք է նրանց առաջին հնգյակում ընդգրկել, մոռացվում է նրանց կատարած աշխատանքը: Էլի տղամարդիկ են առաջ անցնում»:

ՀԿ-ների ներկայացուցիչների ֆոկուս խմբի կին մասնակից

Հարցման մասնակիցների գնահատականները ցուց են տալիս, որ ոչ ֆորմալ հասարակական շարժումներում որոշումների ընդունման գործընթացի վրա ազդելու՝ անդամի հնարավորությունն ավելի մեծ է (2,9 միավոր), քան հասարակական կազմակերպություններում (2,1 միավոր) և քաղաքական կուսակցություններում (2,0 միավոր):[53] Այս իրողությունը մեկ անգամ ևս հաստատում է կուսակցությունների և ոչ կառավարական կազմակերպությունների նեքին կյանքի ժողովրդավարացման անհրաժեշտությունը:

ՇՈՒՇԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ.
« Ես Շուշանն եմ՝ ոչինչ չի փոխվել»:

Հանրապետական կուսակցության խմբակցության անդամ, ՀՀ վաստակավոր արտիստուհի Շուշան Պետրոսյանը ՀՀԿ-ի համամասնական ցուցակում 16-րդ էր: Քաղաքականություն մտնելու իր շարժառիթը ներկայացնում է այսպես.

«Խորհրդարան մտնելու որոշումը կայացրել եմ սրտացավությունից ելնելով: Կարևոր չէ ղեկավարել, կարևորը ինչ-որ բան սկսելն է, փոխելը:Կարծրատիպեր կան, դրանք կոտրել է պետք: Կռիվ ունեմ տալու, իսկ կռիվ տալու լավագույն ձևը օրենսդիրում լինելն է: Մտածող, չհամաձայնող, վիճող Ազգային ժողով եմ ուզում…»:

Անշուշտ նա առաջինը չէ արվեստի գործիչներից, ով պատգամավոր դարձավ , բայց որպես շոու բիզնեսի ներկայացուցիչ առաջինն էր: Թերևս այդ է պատճառը, որ առաջադրման

[53] Հարցման մասնակիցներին առաջարկվել էր 5 միավորանոց սանդղակի միջոցով գնահատել սեփակիան ազդեցությունը կազմակերպության ներսում որոշումների ընդունման գործընթացների վրա: «1»-ը նշանակում էր, որ տվյալ անդամի ձայնն ընդհանրապես ազդեցություն չունի», «5»-ը՝ «ունի վճռական նշանակություն»:

պահից եղել է լրագրողների ուշադրության կենտրոնում: Այդ առիթով դժգոհությունը չէր թաքցնում.

« Բնավորությունս իմանալով՝ ինձ շատ սիրող մարդիկ, բնականաբար, առանձնապես ուրախ չեն: Այսինքն ինչի համար պիտի ուրախ լինեն, որ. հիմնականում քարկոծվում եմ , հատկապես լրագրողների կողմից: Այն լրագրողների, որոնք միշտ ինձ տեսնում են այնպիսին, ինչպիսին եմ. առանց սեթևեթելու, առանց խափելու, ազնիվ: Ես Շուշանն եմ՝ոչինչ չի փոխվել:

Աշխատում է ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովում, հավատարիմ մնալով իր նախընտրական խոստմանը՝« քաղաքականություն մտնելով՝հստակորեն ծառայելու եմ մշակույթին»:

3.5. Որքանո՞վ են նպաստում ՀՀ գենդերայինք աղաքականության հայեցակարգը և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը կանանց քաղաքական կարգավիճակի բարելավմանը

2010 թ. փետրվարի 11-ին ՀՀ կառավարությունը հաստատեց ՀՀ գենդերային քաղաքականության հայեցակարգը, որը «սահմանում է կանանց և տղամարդկանց նկատմամբ պետական քաղաքականության առաջնահերթ ուղղություններն ու ընդհանուր ռազմավարությունը և ուղղված է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում բոլոր քաղաքացիների համար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովմանը՝անկախ սեռից»: Հայեցակարգում խնդիր է դրվել ապահովել „կանանց համար քաղաքական մասնակցության հնարավորությունների և ռեսուրսների մատչելիությունը: Մեկ տարի անց հայեցակարգի իրագործման նպատակով հաստատվեց նաև «Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2011-2015թթ. Ռազմավարական ծրագիրը»:

Հետազոտության առջև խնդիր էր դրված նաև պարզել ա) ՀՀ գենդերային քաղաքականության հայեցակարգի և դրա իրագործման միջոցառումների վերաբերյալ իրազեկվածության աստիճանը, բ)Որքանո՞վ է հայեցակարգը նպաստում կանանց քաղաքական կարգավիճակի բարելավմանը:

Ֆոկուս-խմբերում արձանագրված ելույթների վերլուծությունը ցույց տվեց, որ հայեցակարգի վերաբերյալ ընդհանուր առմամբ իրազեկվածությունը շատ ցածր է: Ֆոկուս-խմբերի մասնակիցների մոտեցումների հիման վրա հասարակական կարծիքում եղած դիրքորոշումներն այդ փաստաթղթի նկատմամբ կարելի է բաժանել մի քանի խմբերի.

1. Հասարակության մեծ մասը տեղյակ չէ այդ կարևոր փաստաղթի ընդունման մասին:
2. Կան մարդիկ, որ տեղյակ են, դրական են գնահատում և գտնում են, որ այն կարող է նպաստել կանանց քաղաքական մասնակցության աստիճանի բարձրացմանը:

«Այն, որ օրենքները ազդում են՝ փաստ է: Լյուդմիլա Սարգսյանը ցուցակում 5-րդն է կամ 6-րդը: Դա ուղղակի օրենքի պահանջ է, հակառակ դեպքում նա այդտեղ չէր լինի: Օրենքը

ստիպողաբար հետևից տանում է: Դրանից հետո էլ կարելի՞ է ներկայացնել, որ մենք այնքան գիտակից ենք, որ տեղեր ենք հատկացնում»:

Տղամարդ քաղաքական գործիչների ֆոկուս խմբի մասնակից

3. Փաստաթուղթը դրական է գնահատվում, սակայն մտավախություն կա, որ այն չի իրագործվի: Կա տեսակետ, որ այն չի իրագործվի, քանի որ Հայաստանում անգամ որոշ օրենքներ չեն իրագործվում մեխանիզմների բացակայության հետևանքով: Չիրագործվելու պատճառներից մեկն էլ կարող է լինել որոշ կուսակցական գործիչների և առաջնորդների քաղաքական ցածր մշակույթը և հարցը պատշաճ կերպով չկարևորելը:

«Հայեցակարգը շատ դրական է ինքնին և բոլոր կետերը այսօր մեր սրտից են, բայց ինչքանով հնարավոր կլինի դա կյանքի կոչել, թե չէ ինքը՝հայեցակարգը, շատ դրական է և որպես երևույթ, և որպես օրենսդրական փաստաթուղթ: Շատ լավ է, եթե այդ կետերով էլ առաջնորդվեն»:

Մարզային գործիչների ֆոկուս խմբի կնոջ մասնակի

«Մի բան է, երբ հայեցակարգ ես ընդունում և մեկ այլ բան է, երբ այդ օրենքը կամ հայեցակարգը գործադրում ես՝ մեխանիզմների մշակման և գործադրման խնդիր կա այստեղ: Մեր հասարակությունում, մեր երկրում բազմաթիվ օրենքներ կան, որ չեն գործում: Դրանք միշտ մեզանից, մեր հասարակությունից առաջ են քայլում և մենք դրանց երբեք չենք հասնում: Կարծում եմ, որ դա ժամանակի խնդիր է և այդ հայեցակարգը, իմիջիայլոց, բավականին լավ մշակված հայեցակարգ է, դեռևս մեր հասարակության անդամների վրա շոշափելի արդյունք չի տա»:

Տղամարդ քաղաքական գործիչների ֆոկուս խմբի մասնակից

«Երբեմն իշխող կուսակցության ներկայացուցիչները, նրանց այն հատվածը, որը քաղաքական դաշտից չէ՝ օլիգարխները և այլն, քաղաքական փորձառություն չունենալով, այսպես ինքնախոստովանաբար, ապացուցում են, որ սա ընդամենը թուղթ է»:

Տղամարդ քաղաքական գործիչների ֆոկուս խմբի մասնակից

4. Հայեցակարգն ու կառավարության որոշումը դեռ առաջին քայլն են: Դրանից հետո պետք է արվեն նաև հետագա քայլերը:

«Այդ օրենքը դրական երևույթ է, որովհետև կանայք վաղուց պայքարում են իրենց իրավունքների, իրավահավասարության համար և վաղ թե ուշ այդ բանը պիտի գա: Մենք էլ քաղաքակիրթ ժողովուրդ ենք՝ հինգ հազար տարվա պատմություն ունեցող, առաջին դիրքերում գենդերային քաղաքականության մեջ և պիտի կամաց-կամաց կանանց դերը հասարակության մեջ բարձրացվի»:

Տղամարդ քաղաքական գործիչների ֆոկուս խմբի մասնակից

«Հայեցակարգը առաջին բանն է, որ արել ենք, հայեցակարգից հետո շատ բաներ փոխվել են: Ինստիտուտները զարգանում են հենց այդ եղանակով՝ սկզբում դա գրվում է թղթի վրա, հետո դառնում է սոցիալական օրենք: Այս իմաստով առաջին քայլն արել ենք, որը հաջորդ սերնդի համար դառնալու է ոչ թե թղթի վրա օրենք, այլ սոցիալական կյանքի օրենք»:

Տղամարդ քաղաքական գործիչների ֆոկուս խմբի մասնակից

ՍԱԹԻԿ ՍԵՅՐԱՆՅԱՆ.
«Ասեմ ամենապարզ, մարդկային, մայրական բառերով …»

«168» ժամ թերթի գլխավոր խմբագիր, առաջադրվել էր թիվ 4 ընտրատարածքում:

Ընտրապայքար մտավ «Խմբագրենք Ազգային ժողովը» մասնագիտական կարգախոսով: Սակայն իր ուղերձը ընտրողներին ձևակերպեց որպես մայր. «Ասեմ ամենապարզ, մարդկային, մայրական բառերով՝ ուզում եմ, որ իմ երեխան նորմալ երկրում ապրի: Ուզում եմ, որ լավ դպրոցում սովորի, առողջ հասարակության մեջ ապրի, լավ մարդկանցով շրջապատված լինի…:Երբ այս ամենի մասին մտածում ես՝ ակամայից հարց է ծագում՝ իսկ էլ ինչ կարող եմ անել այդպիսի Հայաստան ունենալու համար»:

Ասում է , որ աշխատանքի բերումով, որպես թերթի գլխավոր խմբագիր միշտ զբաղվել է քաղաքականությամբ, ըստ էության՝ ամենօրյա ռեժիմով: Այդ առումով խորհրդարանական ընտրություններին իր մասնակցությունը, իր խոսքերով, ընդամենը քաղաքականության ձևաչափի փոփոխություն է, իսկ պատգամավորական մանդատը՝ քաղաքականության գործիքի փոփոխություն:

… Ես չեմ ցանկանում հեռանալ այս երկրից: Ինձ շատ բան է կապում այստեղ՝ իմ տունը, գործը, իմ երկիրը: Ես տարանջատում եմ պետության և իշխանության շահերը և ես եկել եմ պայքարելու, որ ոչ ոք չհեռանա այս երկրից՝…

Ի դեպ, իր ընտրատարածքում նա հավաքեց ձայների 11 տոկոսը:

Պատմությունը կազմվել է WomenNet.am-ի և մամուլում տպված նյութերի հիման վրա

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀՀ ԱԺ պատգամավորության թեկնածուների քաղաքական կարիերայի հիմքում ընկած մոտիվացիոն գործոնների վերլուծությունը վերահաստատում է միջազգային կառույցների այն տեսակետը և հետազոտության այն վարկածը, որ օրենսդիր մարմնում կին պատագամավորների թվի ավելացումը կհանգեցնի սոցիալական, առողջապահական խնդիրների, սոցիալապես անպահով խավերի, երեխաների և կանանց հիմնահարցերի նկատմամբ ուշադրության և հոգածության մակարդակի բարձրացման, քաղաքականության և որոշումների ընդունման գործընթացի հումանիզացման:

2. ՀՀ Ազգային ժողովի 2012թ. ընտրությունների արդյունքում խոհրդարանում կանանց ներկայությունը կազմեց 10,7%՝ լուրջ առաջընթաց չգրանցելով նախորդ գումարման խորհրդարանում կանանց ներկայության ցուցանիշի(9,1%) համեմատությամբ: Դա վկայում է

այն մասին, որ օրենսդիր մարմնում կանանց ներկայության ավելացմանն ուղղված քայլերը, մասնավորապես՝ ՀՀ Ընտրական օրենսգրքով կուսակցական ընտրացուցակներում 20% նվազագույն քվոտայի սահմանումը ոչ բավարար էր և թերի:

3. Հաշվի առնելով, որ ՀՀ Ընտրական օրենսգիրքը նախատեսում է մեծամասնական ընտրակարգով 41 պատգամավորական մանդատներ, իսկ կանայք, որպես կանոն, տարբեր, մասնավորապես՝ վարչական, ֆինանսական նշանակալից ռեսուրսների չտիրապետելու, ընտրապայքարում վարկաբեկիչ տեխնոլոգիաների, քրեական տարրերի առկայության և այլ պատճառներով անմրցունակ են այդ տեղերն զբաղեցնելու համար, հետևաբար ԱԺ-ում կանանց 20% ներկայություն ապահովելու համար անհրաժեշտ է ավելացնել կուսակցական ընտրացուցակներում սահմանված քվոտան՝ հացնելով այն նվազագունը 30%-ի:

4. Բացի այդ, անհրաժեշտ է քվոտայի իրական գործառնությունը և օրենսդիր մարմնում կանանց ներկայության ցուցանիշն ավելացնելու գործընթացը երաշխավորելու նպատակով օրենքով սահմանել գենդերային ռոտացիայի սկզբունքը, որի համաձայն՝ համամասնական ընտրացուցակից կնոջ թեկնածությունը հանելու կամ պատգամավորական մանդատից կնոջ հրաժարվելու դեպքում նրա տեղը զբաղեցնի ցուցակում ընդգրված հաջորդ կինը:

5. Կանանց քաղաքական մասնակցության, քաղաքական կառավարման հաստատություններում գենդերային հավասարակշռության ապահովման կարևոր գործոններից մեկը քաղաքական կուսակցությունների ներքին կյանքի ժողովրդավարացման ուղղությամբ իրականացվող քայլերը պետք է լինեն, որոնք հնարավորություն կընձեռեն կին գործիչների առաջմղման համար: Մասնավորապես, կարելի է սահմանել խրախուսական մեխանիզմներ այն կուսակցությունների համար, որոնք կսահմանեն գենդերային քվոտա կուսակցական ղեկավար օղակներում կանանց ներկայության ապահովման նպատակով, կկիրառեն թեկնածու կանանց առանձին ցուցակներ կազմելու և «զուգակցված (twinned) ընտրատարածքների» սկզբունքները:

6. Հանրային կարծիքում նկատվել է դրական տեղաշարժ կանանց քաղաքական մասնակցության նկատմամբ, որը մի կողմից ՀՀ կառավարության կողմից ընդունված նպաստավոր փաստաթղթերի արդյունք է, մյուս կողմից անցած գումարման ՀՀ ԱԺ կին-պատգամավորների ակտիվ գործունեության:

7. Թեպետ առկա է որոշակի դրական շարժընթաց, ընդունվել է Գենդերային քաղաքականության հայեցակարգը, այնուհանդերձ, ՀՀ իշխանությունների վարած քաղաքականությունը մնում է **գենդերապես ոչ բավարար զգայուն**: Լիովին չեն իրագործվում «Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի եզրափակիչ դիտողությունները» Հայաստանի 3-րդ և 4-րդ զեկուցումների կապակցությամբ և

«Լրացումները»[54]: Կանանց նկատմամբ խտրականության երևույթը դեռևս ամբողջապես չի ընկալվում հասարակության կողմից, բավարար աշխատանք չի տարվում քաղաքական պրակտիկայում և սովորույթներում կանանց նկատմամբ խտրականության վերացման ուղղությամբ:

8. Գենդերային հայեցակարգի ու դրա հիմնադրույթների վերաբերյալ տեղեկացվածության մակարդակը չափազանց ցածր է, այն բավականաչափ չի լուսաբանվում և քննարկվում քաղաքական ատյաններում, ԱԺ-ում և մամուլում:

9. Թեև ՀՀ Սահմանադրության մեջ ամրագրված է սեռերի իրավահավասարության սկզբունքը, կանայք Հայաստանում իրականում չափազանց սուղ հնարավորություններ ունեն ներազդելու պետական քաղաքականության ձևավորման վրա: «Դե յուրե» ամրագրված հավասար իրավունքների և այդ իրավունքների «դե ֆակտո» իրացման հետ կապված հիմնական խնդիրը կանանց համար հավասար հնարավորությունների բացակայությունն է: Ազգային օրենսդրության այս բացը պետք է լրացնել **«Հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին օրենքի» ընդունմամբ,** ինչը ներառված է Հայաստանի՝ Եվրամիության հետ «Արևելյան գործընկերության» ծրագրով նախատեսված միջոցառումների ցանկում և բխում է քաղաքական կայնքի ժողովրդավարացման շահերից:

[54] CEDAW/C/ARM/CO/4/Rev.1/Add.1, նոյեմբերի 2011 թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1.

ՈՒՂԵՐՁ
ՀՀ Ազգային ժողովի 2012թ. ընտրություններին մասնակցող
քաղաքական կուսակցություններին,
դրանց ղեկավարներին
և համամասնական ցուցակներում ներգրավված կանանց

Մենք,
Քաղաքացիական հասարակության համագործակցության ցանցի անդամ ՀԿ-ներս,
դիմում ենք.

«Բարգավաճ Հայաստան» կուսակցությանը, որի համամասնական ընտրացուցակի 21,8%-ը կազմում են կանայք,
«Ժառանգություն» կուսակցությանը, որի ընտրացուցակի 24,6%-ը կանայք են,
«Հայ ազգային կոնգրես» դաշինքին, որի ընտրացուցակում 20,3 %-ը կանայք են,
«**Հայ Հեղափոխական Դաշնակցություն**» կուսակցությանը, որի ընտրացուցակի 31,7%-ը կանայք են,
Հայաստանի Դեմոկրատական Կուսակցությանը, որի ընտրացուցակի 24,4%-ը-կանայք են,
Հայաստանի Կոմունիստական Կուսակցությանը, որի ընտրացուցակի 21,1%-ը կանայք են,
Հայաստանի Հանրապետական Կուսակցությանը, որի ընտրացուցակի 21,3%-ը կանայք են,
«Միավորված Հայեր» կուսակցությանը, որի ընտրացուցակի 37,9% կանայք են,
«Օրինաց երկիր» կուսակցությանը, որի ընտրացուցակի 20,2 %-ը կանայք են:

Հաջողություն ենք մաղթում բոլոր կուսակցություններին ընտրական արդար մրցավազքում և հույս հայտնում, որ կուսակցությունների ընտրացուցակներում ներգրավված կանայք կկարողանան իրենց ներդրումն ունենալ ընտրողների ձայների համար ազնիվ պայքարում:

Միաժամանակ, մենք հույս ենք հայտնում, որ հաղթող կուսակցությունները, անցնելով խորհրդարան, կպահպանեն իրենց խմբակցությունների կազմում կանանց այն ներկայացվածությունը, որն **ամրագրված է ընտրական ցուցակներում և սահմանված ՀՀ Ընտրական օրենսգրքով՝** այդպիսով ապահովելով Ազգային ժողովում կանանց առնվազն 20% ներկայացվածությունը:

Ազգային Ժողովում կանանց ներկայացվածության ավելացման պահանջը ինքնանպատակ չէ:

- Պառլամենտարիզմի համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ եթե երկրի օրենսդիր մարմնում կանայք 10%-ից պակաս են, լրացուցիչ դժվարություններ են առաջանում տարբեր կարգի սոցիալական օրենքներ ընդունելիս:

- Որոշումների կայացման մշակույթի վրա ներազդելու, քաղաքական խաղի կանոնները բարեփոխելու, քաղաքականությունն ավելի հումանիստական դարձնելու հնարավորությունն ի հայտ է գալիս միայն այն դեպքում, երբ կանայք կազմում են խորհրդարանի ոչ պակաս քան 25-30% :

- Միջխորհրդարանական միության վերլուծությունները վկայում են՝ որքան շատ են կանայք խորհրդարաններում, այնքան ավելի մեծ կարևորություն են ստանում երեխաների իրավունքների պաշտպանության հարցերը:

- Բացի այդ, բոլոր այն մեխանիզմները, որ ստեղծվում են կանանց իրավունքների պաշտպանության համար, դրականորեն են ազդում երեխաների դրության վրա:

Միջխորհրդարանական միության վերջին տվյալներով կանանց ներկայացվածությունը աշխարհի միապալատ խորհրդարաններում
կազմում է միջինը 19,7 %, ինչը նշանակում է, որ
5 պատգամավորներից 1-ը կին է:

Խորհրդարաններում կանանց ներկայացվածության ամենաբարձր ցուցանիշը՝ 42% Հյուսիսային Եվրոպայի երկրներում է, ԵԱՀԿ երկրների միջին ցուցանիշը 22,6 % է, իսկ արաբական աշխարհի երկրներում ՝ 11,3%:

59 երկրներից, որտեղ 2011թ. ընտրություններ են անցկացվել, 17-ում գործել են քվոտաներ: Այդ երկրներում կանայք զբաղեցրեցին խորհրդարանական տեղերի 27%-ը, իսկ քվոտաներ չկիրառող երկրներում՝ ընդամենը 16 %-ը:

Թեպետ ՀՀ ԱԺ նախորդ ընտրություններում Ընտրական օրենսգրքում ամրագրված էր համամասնական ցուցակներում կանանց նվազագույն ներկայացվածության 15 տոկոսանոց քվոտա և կուսակցական ցուցակներում կանայք միջինը կազմել էին 22,6%, սակայն արդյունքում **ՀՀ Ազգային ժողովի չորրորդ գումարման կազմում կանանց ներկայացվածությունը ընդամենը 8,3% էր:**

Եվ դա այն դեպքում, երբ դեռևս 2008-ին համապետական սոցիոլոգիական հարցումների մասնակիցների 85,5%-ը գտնում էր , որ ԱԺ-ում կանայք պետք է լինեն ոչ պակաս քան 37%: Իսկ 2010թ. սոցիոլոգիական հետազոտությունները վկայում են այդ խնդրի կապակցությամբ հայաստանյան հանրային կարծիքում առկա դրական շարժընթացների մասին:

Հայաստանում գործող քվոտայով, որն ի դեպ ընդունվել է կանանց հասարակական կազմակերպությունների և կուսակցությունների համագործակցության արդյունքում՝ ընտրական համամասնական ցուցակներում կանանց ներկայացվածությունը չի կարող 20%-ից պակաս լինել, կամ ինչպես ձևակերպված է Ընտրական օրենսգրքում ՝ «յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 80 տոկոսը» :

Հանրությունը իրավունք ունի ակնկալելու, որ կանանց ներկայացվածությունը Ազգային ժողովում այդ քվոտայի շնորհիվ առնվազն կկրկնապատկվի:

Այս տարի, երբ Ընտրական օրենսգրքում ամրագրված է 20% գենդերային քվոտա, ԿԸՀ ներկայացված կուսակցական ցուցակներում կանայք միջինը գրեթե նույն 22,8%-ն են: Հաշվի առնելով ընտրություններից հետո տարբեր պատճառաբանություններով մանդատներից հրաժարվելու՝ մի շարք կին գործիչների անցանկալի գործելակերպը նախորդ ընտրություններում՝ մենք դիմում ենք 2012թ. համամասնական ցուցակներում ընդգրկված կանանց.

Հարգելի կին գործիչներ,
մի՛ հրաժարվեք մանադատներից, ընտրողները հույսեր են կապում Ձեզ հետ՝ քվեարկելով Ձեր օգտին:

Դիմում ենք կուսակցությունների ղեկավարներին անդամներին.

Օրենքի պահանջը իրականացնելու նպատակով առաջնորդվե՛ք գենդերային արդարության սկզբունքով՝ հնարավորություն ընձեռելով, որ մանդատից հրաժարվող կնոջ տեղը զբաղեցնի ցուցակի մեջ ներգրավված հաջորդ կինը:

Հասարակության համար անընդունելի է նաև, երբ մանդատից հրաժարումը կատարվում է կուսակցության հորդորով կամ խնդրանքով: Ուստի, մենք դիմում ենք կուսակցությունների ղեկավարությանը.

Մի՛ առաջարկեք կուսակցության նախընտրական ցուցակներում ընդգրկված կանանց հրաժարվել իրենց մանդատներից,
քանզի հասարակությունը ուզում է տեսնել իր կողմից ընտրված գործիչներին Ազգային ժողովում:

Աջակցե՛նք միմյանց Հայաստանում բարեկիրթ հասարակության կայացման և քաղաքական կառավարման ժամանակակից համակարգի ձևավորման գործում:

Մենք դիմում ենք ՀՀ ընտրողներին և կազմակերպություններին.
Միացե՛ք մեզ՝ ստորագրելով այս ուղերձը:

Հավելված 2

Ծրագրի փորձագետների կողմից պատրաստված և ԶԼՄ-ներով հեռարձակված տեսահոլովակ գովազդի տեքստը

Աշխարհի խորհրդարաններում միջին հաշվով հինգ պատգամավորներից մեկը կին է: Այն պետություններում, որտեղ խորհրդարանում կանանց թիվը կազմում է 30% և ավելի, սոցիալական ուղվածությամբ օրենքներն ավելի շատ են ընդունվում և ավելի շատ են պաշտպանված կանանց ու երեխաների իրավունքները:

Հայաստանի Հանրապետության չորրորդ գումարման Ազգային ժողովում կանայք ընդամենը 8,3% տոկոս էին կազմում:

Հարգե՛լի կին գործիչնե՛ր, մի՛ հրաժարվեք Ձեր մանդատներից, Դուք պե՛տք եք Ազգային ժողովում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

(Ցանկում տեղ են գտել այն հրատարակություններն ու սկզբնաղբյուրները, որոնցից մեջբերումներ են արվել կամ որոնք հիշատակվել են տեքստում)

1. Հայաստանի կանայք և տղամարդիկ: Վիճակագրական գրքույկ: ՀՀ ԱՎԾ,Երևան, 2012:
2. Հայաստանի կանայք և տղամարդիկ: Վիճակագրական գրքույկ: ՀՀ ԱՎԾ, Երևան, 2010:
3. *Հովհաննիսյան Հ., Զաքարյան Լ., Օսիպով Վ.:* «Հայաստանում հասարակական–քաղաքական մասնակցության գենդերային առանձնահատկությունները», ՄԱԲՀ «Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում ծրագիր: «Կովկաս» հասարակագիտական հետազոտությունների կենտրոն:Երևան, 2011:
4. *Շափաղաթյան Հ.:* Քաղաքական մասնակցության արդի հիմնախնդիրներ: Երևան, 2007:
5. «Որոշումների կայացման մակարդակում կանանց ոչ բավարար ներկայացվածության ուսումնասիրություն»: Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ: Երևան, 2008:
6. *Atkinson J. Feather N.,* A theotry of achievement motivations. N.Y., Wiley. 1966.
7. Gender Equality in Elected Office: a six-step action plan by Pippa Norris and Mona Lena Krook, Harvard University and Washington University in St Louis; Baseline study for the OSCE/ODIHR Handbook on Measures for Promoting Women's Political Participation, 2011.
8. *Maslow A.,* Motivations and Pesonality, N.Y, 1954.
9. *Michelle Bachelet.*Highlights Quotas to Accelerate Women's Political Participation.
10. *Бобков В., Браим И.,* Политология, 2003.
11. *Голев С.В.* Политическая психология. Словарь-справочник. М., 2004.
12. *Инглегард Р.* Культурный сдвиг в зрелом постиндустриальном обществе. В кн.: Новая постиндустриальная волна на Заподе. Под ред. Иноземцева В.Л., М.,1999.
13. *Макклелланд Д.* Мотивация человека. СПб., Питер, 2007.
14. Реферативный сборник. «Твочество и жизненный путь ученого». Творческая личность в науке. М., 1988.

Ազգային և միջազգային փաստաթղթեր

1. Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիա, 1979:
2. Կանանցն կատմամբ խտրականության վերացման կոմիտեի եզրափակիչ դիտողություններ: 43-րդ նստաշրջան 2009 թ: **CEDAW/C/ARM/CO/4/Rev.1:**
3. «Հազարամյակի զարգացման նպատակների տեղայանացումը և առաջընթացը», Ազգային զեկույց, Հայաստան 2005:
4. ՀՀ կառավարության 2008-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը:
5. Հայաստան. ՀԶՆ-ների առաջընթացի ազգային զեկույց, 2005-2009:
6. ՀՀ գենդերային քաղաքականության հայեցակարգ (2010):
7. ՀՀ գենդերային քաղաքականության ռազմավարական ծրագիր (2011-2015 թթ.):
8. ՀՀ Ընտրական օրենսգիրք (2011):
9. ԵԱՀԿ/ԺՄԻԳ դիտորդական առաքելության վերջնական զեկույց, 26 հունիսի, 2012:
10. CEDAW/C/ARM/CO/4/Rev.1/Add. 1-ը, նոյեմբերի 2011 թ.:

Ինտերնետային կայքեր

http://www.armstat.am/file/article/gender_2012.pdf ;http://www.osce.org/odihr/91643 ; http://www.youtube.com/watch?v=4xKv1HamWH0 ; http://www.osce.org/odihr/91643 ; http://www.osce.org/odihr/78432 ; http://www.osce.org/odihr/91643 http://www.unwomen.org/2012/03/michelle-bachelet-highlights-quotas-to-accelerate-womens-political-participation/ ; www.parliament.am http://www.youtube.com/watch?v=Od1_HmxrLec&feature=player_embedded , http://womennet.am/wp-content/uploads/2012/10/121a_121.pdf , http://www.youtube.com/watch?v=E0miI6wrXSQ , http://ankakh.com/2012/06/219860/ , http://www.aravot.am/2012/06/19/82937/ ; http://www.youtube.com/watch?v=4xKv1HamWH0 http://iir-mp.narod.ru/books/inozemcev/page_1245.html ; http://www.un.am/res/UN%20Treaties/X_1.pdf ; http://www.gov.am/u_files/file/kananc-xorh/Gender-hayecakarg.pdf ; http://womennet.am/ ; www.elections.am ; http://www.osce.org/odihr/78432 ; http://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2011/05/kar60_1.pdf ; http://www.osce.org/mc/23295 ; http://www.un.am/res/UN%20Treaties/III_8.pdf ; http://assembly.coe.int/ASP/Doc/XrefViewHTML.asp?FileId=17809&Language=EN http://www.un.am/res/Gender%20TG%20docs/Beijing-Decl_PLAT_ARM.pdf http://www.un.am/am/MDGs_in_Armenia